«ԱՐՎԵՍՏ-ԱՐՀԵՍՏ»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

# «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

(1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

## «ԱՐՎԵՍՏ-ԱՐՀԵՍՏ»

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

«Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայախմբի բովանդակային տիրույթն ապահովում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով անձի մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթաց, որն իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ, արվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով:

Դասընթացի նպատակն է ժամանակակից 12-ամյա միջնակարգ կրթության շրջանակներում և այլընտրանքային հայեցակարգերով գործող դպրոցների առկայության պայմաններում ապահովել արվեստի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ ուսուցում, Հանրակրթության պետական չափորոշիչով (ՀՊՉ) սահմանված կարողունակություններին համապատասխան՝ ուսումնական միատեսակ վերջնական արդյունք՝ սովորողների՝ ստեղծագործական գաղափարների մշակման, ստեղծագործական գործունեության, դրա մատուցման, արվեստի ստեղծագործություններին գրագետ արձագանքելու և դրանք իմաստավորելու միջոցով:

***Հանրակրթական դպրոցում արվեստի ուսումնական նպատակները.***

- Զարգացնել երևակայությունը, քննական, ստեղծագործական, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը, նպատակասլացությունը, աշխատասիրությունը, հանդուրժողականությունը:
- Ձևավորել դատողություններ, վերլուծություններ և որոշումներ կայացնելու, անհրաժեշտության դեպքում նաև հակազդելու կարողություններ:
- Ձևավորել գեղեցիկը և ներդաշնակը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու և արարելու ցանկություն և կարողություն:
- Ձևավորել ակտիվ ունկնդիր, համերգասրահներ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն և պահանջ:

• Սովորեցնել գործնականում կիրառել գեղարվեստական գործունեության ընթացքում ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:

• Ձևավորել ազգային, համամարդկային, սոցիալական, խմբային, անհատական և անձնական խնդիրները ստեղծագործաբար լուծելու կարողություններ:

• Ձևավորել մշակութային արժեքների պահպանման, բազմացման, փոխանցման գործում սեփական մասնակցություն ունենալու պահանջմունք:

• Ստեղծել մշակույթի և արվեստի ոլորտում մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմաններ:

• Պահպանել և զարգացնել մշակույթի և արվեստի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթները, համապատասխանեցնել նոր տնտեսական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չափորոշիչներին:

***Դասընթացի խնդիրները***

• Ընդլայնել երեխաների աշխարհայացքը:

• Զարգացնել գեղագիտական և գեղարվեստական ընկալունակությունը:

• Հաղորդակից դարձնել ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի նմուշներին:

• **Սովորեցնել աշխատել նյութերով:**

***Հիմնական սկզբունքները***

• Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության անհրաժեշտություն բոլոր սովորողների համար:

• Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության լավագույն ավանդույթների պահպանում և արդիականացում:

• Յուրաքանչյուր աշակերտի համար մատչելիության և հասանելիության ապահովում:

• Սովորողների ակտիվ և ազատ ստեղծագործական գործունեության խրախուսում:

• Դասընթացի ուսումնասիրման ընթացքում «գիտելիքի ձեռքբերում-գործնական կիրառում-արժեքային համակարգի և վերաբերմունքի ձևավորում» շղթայի անքակտելիության ապահովում:

Հանրակրթական դպրոցում «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառը ներկայացնող ծրագրերը կառուցվում են հիմնական գաղափարների հենքի վրա, պարուրաձև սկզբունքով: Առարկայական (ինտեգրված)

ծրագրերն ապահովում են արդյունավետ ներառարկայական և միջառարկայական կապեր՝ նպաստելով սովորողների ընդհանրական աշխարհայացքի ձևավորմանը:

***Ուսումնական գործունեության ձևերը***

- Արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, կատարում, երաժշտության ունկնդրում, կերպարվեստի ստեղծագործությունների դիտում: Հանդիպումներ արվեստագետների հետ:
- Բանավեճեր, քննարկումներ, ինքնավերլուծություն,զրույցներ:
- Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր,մրցույթներ,հանդեսներ,միջոցառումներ,ցուցադրություններ ներկայացումներ:
- Նյութերի, միջոցների և տարբեր մոտեցումների փորձարկումներ:
- Հետազոտություններ,տարբեր լրատվամիջոցների և տեղեկատվության աղբյուրների ուսումնասիրում:
- Անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ և նախագծեր:
- Ներկայացումներ և մոդելավորումներ, գծապատկերների և սխեմաների ստեղծում, ուսուցողական և գեղարվեստական ֆիլմերի դիտումներ, քննարկում:
- Մասնագիտական եզրույթների, արվեստագիտական բառապաշարի և լեզվի գործածում, գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում:
- Տեղեկույթ ու փաստարկներ որոնելու նպատակով մեդիագրագիտության հմտությունների կիրառում, համապատասխան տեղեկատվության և ուսումնասիրման նյութի տեղեկացված ընտրություն:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արվեստը հոգևոր գործունեության առանցքային տարրն է, աշխարհի զգացական-գործնական յուրացման յուրահատուկ տեսակ, որի առաջացումը կապված է մարդկային հասարակության զարգացման հնագույն շրջանների հետ: Արվեստը նաև իրականության գեղագիտական-գեղարվեստական վերարտադրությունն է՝ իր բազմաթիվ տեսակներով ու դրսևորումներով: Այն մարդկային կյանքի մշտական ուղեկիցն է, գործունեության արժեքավոր դրսևորումներից մեկը:

Արվեստի միջոցով կարելի է ճանաչել և հասկանալ մարդկության անցած ճանապարհը՝ սկսած նախապատմական ժամանակներից: Զարդանախշի, կենցաղային իրերի, երգվող մեղեդիների, ծիսական

պարերի, դրամատիկ պատմությունների տեսքով ձևավորված արվեստը հասել է մինչև մեր օրեր: Դրանք հսկայական տեղեկատվություն են պարունակում, շատ դեպքերում՝ նաև դեռևս չվերծանված:

Դժվար է պատկերացնել ժամանակակից աշխարհն առանց երաժշտության, նորաձևության, թատրոնի, կինոյի, գրաֆիկական դիզայնի, կերպարվեստի, պարի և այլն: Արվեստի տարբեր տեսակների դրսևորումներն այնքան ներկա են մեր կյանքում, որ դրանց ուսումնասիրությունը կրթության կարևոր բաղադրիչ է հանդիսանում:

Արվեստի դասավանդումն իրականացվում է հայ ազգային մշակույթի հիմքի վրա: Այն նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, նրա մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, վարպետության, ստեղծարարության, կատարողական առանձնահատկություններին միտված ուսումնական գործունեության, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը և կյանքի, շրջապատող աշխարհի, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Հանրակրթական դպրոցում «Արվեստ-արհեստ» ուսումնական բնագավառը ներկայացված է երաժշտություն, կերպարվեստ, պար, թատրոն, և դեկորատիվ-կիրառական արվեստ (ԴԿԱ) ուսումնական առարկաներով տարրական, միջին և ավագ դպրոցներում, առանձին կամ ինտեգրված դասընթացով:

Չնայած արվեստի այս տեսակները փոխկապակցված են և շատ հաճախ ներկայանում են ինտեգրված, դրանցից յուրաքանչյուրը դրսևորվում է ստեղծագործական գործունեության իրեն հատուկ մոտեցումներով և կարող է ուսումնասիրվել առանձին: Յուրաքանչյուր առարկա ունի մասնագիտական իր եզրույթները, ուսումնասիրման իր շրջանակը, ձևերը և մեթոդները, որոնք ձևավորում են գիտելիքներ և հմտություններ, յուրահատուկ աշխարհընկալում:

**ՊԱՐ** - Սովորողներն ուսումնասիրում են մարմնի շարժումը՝ որպես գաղափարի փոխանցման և հաղորդակցության միջոց: Պարային գործունեությունն ընդգրկում է (և չի սահմանափակվում) ազգային, ժողովրդական, պարահանդեսային, ժամանակակից պարեր, խորեոգրաֆիա, կատարում, պարային տարրեր, իմպրովիզացիա, պարային նոտագրություն, պարային բեմադրություն, պարարվեստի պատմություն և արձագանք:

**ԹԱՏՐՈՆ** - Սովորողներն ուսումնասիրում և ներկայացնում են մարմնի լեզուն, շարժումն ու

տարածությունը, բեմական խոսքը, ասմունքը, իրական և մտացածին աշխարհը՝ կատարումներին իմաստ հաղորդելով: Յանդես են գալիս որպես կատարող և որպես հանդիսատես: Ստեղծում են դրամա, փորձում, կատարում, ցուցադրում և արձագանքում են:

**ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ** - Սովորողներն ուսումնասիրում և կատարում են տարբեր ժանրերի, ոճերի երաժշտություն: Նրանք կատարում, ստեղծում, ներկայացնում, քննում և վերլուծում են ձայնը ժամանակի և տարածության մեջ: Երաժշտական գործունեությունն իրականացվում է երեխայի ակտիվ գեղարվեստական գործունեության միջոցով՝ ունկնդրելու, երաժշտության, երաժիշտների և երաժշտության պատմության վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու միջոցով:

**ԿԵՐՊԱՐՎԵՍՏ** - Սովորողներն ուսումնասիրում են տարբեր մշակույթների, ոճերի և ուղղությունների առանձնահատկությունները, արվեստագետներին, նրանց ստեղծագործական մոտեցումներն ու սկզբունքները: Զբաղվում են կերպարվեստային գործունեությամբ, արվեստի, արհեստների և դիզայնի ուսումնասիրմամբ՝ ձևավորելով գործնական հմտություններ և քննական արձագանք արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ:

**ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ** - Սովորողներն ուսումնասիրում են դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր ժառանգությունը: Նրանք ստեղծում, ձևավորում և ներկայացնում են, քննում և վերլուծում են դեկորատիվ-կիրառական արվեստը՝ ըստ գործնական նշանակության, ըստ նյութի (գործվածք, մետաղ, փայտ, խեցի), ըստ կատարման տեխնիկայի (փորագրում, ասեղնագործում, ձուլում, դաջում, դրվագում): Զբաղվում են կենցաղային իրերի (կահույք, սպասք, գործվածք, զգեստ, զարդ) գեղարվեստական ձևավորմամբ և պատրաստմամբ:

«Արվեստ-արհեստ» բնագավառի ինտեգրված դասընթացները հնարավորություն են տալիս հաղորդակցվելու արվեստին ազգային, ավանդական, ժամանակակից և ձևավորվող նոր ուղղությունների տեսանկյունից՝ արդեն ծանոթ միջոցները, նյութերն ու մոտեցումները կիրառելով ուսումնասիրությունների մեջ: Ժամանակակից մարտահրավերները նոր խնդիրներ են առաջադրում ուսումնական բոլոր բնագավառների համար: Արվեստի առարկայախմբի ուսումնական ծրագրերը կառուցված են «ստեղծագործության» շուրջ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, վերաբերմունքի, արժեքների ձևավորման, զարգացման և կատարելագործման սկզբունքով, երբ սովորողը հանդես

է գալիս որպես ստեղծագործող, հանդիսատես և արվեստաբան:

«Արվեստ-արհեստ» բնագավառի պար, թատրոն, երաժշտություն, կերպարվեստ և ԴԿԱ առարկաների և «Արվեստ» ինտեգրված դասընթացների չափորոշիչով սահմանվել են հիմնական գաղափարներ և ենթագաղափարներ, որոնց համապատասխան՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսվել են չափորոշիչային պահանջներ կամ վերջնարդյունք-ներ:

Սահմանված են հետևյալ հիմնական գաղափարներն ու ենթագաղափարները (հասկացությունները).

**ՍՏԵՂԾՈՒՄ** - Նոր գեղարվեստական գաղափարների ձևա-կերպում,ստեղծագործությունների ձևավորում,զարգա-ցում և ավարտ:Իրականացվում է՝

•նյութերի, միջոցների և մոտեցումների, գաղափարների ուսումնասիրման, փորձարկման և հետազոտման,

•մասնագիտական բառապաշարի ձևավորման,

•անվտանգ և ապահով գործունեության,

•արվեստի տվյալ տեսակին բնորոշ տարրերի և սկզբունքների ուսումնասիրման,

•նորարարության և երևակայության վրա հիմնված ստեղծագործական գործունեության միջոցով:

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ** - Գեղարվեստական ստեղ-ծագործությունների կատարում, մեկնաբանություն և ներկայացում: Ընտրվում, կատարվում, խմբավորվում, վերանայվում և ցուցադրվում կամ ներկայացվում են աշխատանքները: Դիտվում, վերլուծվում և մեկնաբանվում են արվեստի ստեղծագործությունները:

**ԸՆԿԱԼՈՒՄ և ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ** -Արվեստի միջոցով իմաստի արտահայտման/հաղորդման գիտակցում, ընկալում և արժևորում: Լինել ակտիվ հանդիսատես, ընկալել և հուզականորեն արձագանքել, գնահատել (գրավոր և բանավոր) իր և մյուսների գեղարվեստական ստեղ-ծագործությունները:

**ԿԱՊԱԿՑՈՒՄ** - Գեղարվեստական գաղափարների և աշխա-տանքների համադրումը իր իմաստի և արտաքին համատեքս-տի հետ: Արվեստի ստեղծագործությունների և ստեղծագործական գործունեության համադրումը պատմության տարբեր շրջանների, տեխնոլոգիական տարբեր միջոցների և մոտեցումների, սեփական կենսափորձի և շրջապատող իրականության տեսանկյունից:

Յուրաքանչյուր գաղափարի**ն** համապատասխան վերջնարդյունքները ձևավորում են սովորողի գնահատման չափանիշը:

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ

Ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է ուսումնառության և դասավանդման գործընթացների արդյունավետությունը պարզելու և դրանց վրա ներազդելու նպատակով և նպատակաուղղված է չափորոշիչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը և զարգացմանը:

Առաջադիմության գնահատականն արձանագրում է սովորողի կարողունակության զարգացման աստիճանը՝ ըստ «Արվեստ-արհեստ» բնագավառի պար, թատրոն, երաժշտու-թյուն, կերպարվեստ և ԴԿԱ առարկաների և «Արվեստ» ինտեգրված դասընթացների չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների մակարդակի:

Գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում):

«Արվեստ-արհեստ» բնագավառի առարկաների և «Արվեստ» ինտեգրված դասընթացների ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով:

Ձևավորող գնահատման դեպքում օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններ և մեկնաբանություններ, որոնք համեմատվում են ՅՊՉ տարրական ,հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:

Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը,որն իր հերթին ապահովում է կրթական գործընթացի բարելավումը և շարունակականությունը:

Առաջադրանքները բնույթով կարող են տարբեր լինել : Յաշվի են առնվում աշակերտների՝ արվեստի հայտնի գործիչների ստեղծագործություններին առնչվող փաստերի իմացությունը, գիտելիքների կիրառումը, տրամաբանական եզրահանգումները, վերլուծությունները, համեմատությունները, ինքնուրույն ստեղծագործական և գեղարվեստական գործունեությունը:

«Արվեստ-արհեստ» բնագավառի դասերի ընթացքում ձևավորող գնահատման նպատակով երաշխավորվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- թեմայի բովանդակության ընկալման և ստեղծագործական գործունեության վերաբերյալ բանավոր և գրավոր հարցումներ,
- ինքնուրույն գործնական աշխատանքում նյութերի, միջոցների և մոտեցումների կիրառում, բովանդակության վերլուծություններ, քննարկումներ, զրույցներ,
- ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- ուսուցման խմբային աշխատանքի կազմակերպում,
- ցուցահանդեսներ, միջոցառումներ, համերգներ, ելույթներ, ստուգատեսներ և այլն:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի կատարվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ որպես տարեկան ամփոփիչ գնահատական՝ կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Առաջարկվում է որպես կիսամյակի ամփոփիչ միջոց կիրառել ցուցահանդեսների, համերգների, միջոցառումների, ստուգատեսների կամ բաց դասերի ձևաչափերը:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից՝ գնահատման համար սահմանելով 10 միավորային սանդղակ:

10 միավորային սանդղակում որևէ թիվ չի համարվում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները և սկսվում 1 միավորից:

Սովորողների նախագծային աշխատանքները գնահատվում են կիսամյակի ավարտին կամ տարեվերջին: 7-12-րդ դասարաններում սովորողների միավորային գնահատականները ձևավորվում են անհատական կամ խմբային ուսումնական նախագծերի հիման վրա: Արվեստի դպրոցներում կամ ստեղծագործական խմբակներում սովորողների ուսումնառությունը հավելյալ նիշ է բերում միավորային սանդղակին՝ ապահովելով հաջողության ավելի բարձր մակարդակ:

**«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ»**
**ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ**
**ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ**

**1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունն առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, ինքնարտահայտվելու և մյուսներին հասկանալու հատուկ միջոց:Իսկ առօրյա կյանքում երաժշտությունն ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում նրան ապրել, աշխատել և արարել:

Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «երաժշտությունն իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզիչ կամ խաղաղ զրույց, դիմում, կոչ, հարցուպատասխան:

Մարդկության զարգացմանը զուգահեռ՝ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է լինում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ:

Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն:Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին Մեծ Կոմիտասը. «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է:Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ անհատի ձևավորման և զարգացման խնդրում տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական ոլորտներով: Երաժշտական կրթությունն ուսումնական գործընթաց

է, որի հիմքում ընկած է հայ ազգային երաժշտությունը՝ ուղղված այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող՝ ընդունակ ինքնակրթվելու և ամբողջ կյանքում պահպանելու հետաքրքրությունն ազգային և համաշխարհային բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես հատուկ կարիքներ ունեցողներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար:

**Երաժշտություն առարկայի չափորոշիչը և ծրագիրը ստեղծվել է համաձայն ՀՊՉ-ի կարողունակությունների և վերջնարդյունքների:**

## «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**Տարրական դպրոց**

- Ձևավորել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք երաժշտության:
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտությանը հաղորդակից լինելու պահանջմունք:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգեցիկ ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:

- Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը՝ որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:

## Հիմնական (միջին) դպրոց

- Ձևավորել և ուղղորդել սովորողներին դեպի արդյունավետ երաժշտաստեղծագործական գործունեություն՝ ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա և այլն:
- Երաժշտական գործունեություն իրականացնել՝ գործնականորեն կիրառելով ձեռք բերված երաժշտատեսական գիտելիքները և հմտությունները:
- Ձևավորել և զարգացնել տրամաբանական, ստեղծագործական, կերպարային և ասոցիատիվ մտածողություն, վերլուծական հմտություններ:
- Ձևավորել և զարգացնել ազգային երաժշտության գիտակ, ազգային ավանդույթները կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող:
- Ընդլայնել սովորողների երաժշտական ընդհանուր մտահորիզոնը, շարունակել դաստիարակել երաժշտական ճաշակ, զարգացնել կայուն հետաքրքրություն այլ ժողովուրդների, դասական և ժամանակակից երաժշտության ժառանգության նկատմամբ, արժևորել մշակութային բազմազանությունը:
- Շարունակել զարգացնել ճանաչողական գործունեության կայուն հետաքրքրություն, զարգացնել երեխաների երաժշտական ընդունակությունները և կատարողական հմտությունները՝ ելնելով նրանց հետաքրքրություններից և հակումներից:
- Շարունակել զարգացնել քննական մտածողությունը, սեփական հիմնավորված դիրքորոշումն արտահայտելու, մյուսների կարծիքը լսելու, հարգելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու հմտությունը:
- Դաստիարակել աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, երաժշտական տեղեկատվության նկատմամբ՝ քննադատական վերաբերմունք:
- Դաստիարակել հոգևոր և բարոյական գեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:

- Դաստիարակել հատուկ վերաբերմունք և հետաքրքրություն մշակութային օջախների գործունեության նկատմամբ, պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ:
- Ապահովել շարունակական կրթության և երաժշտությանը հաղորդակցվելու հնարավորություններ բոլոր սովորողների համար:

**Միջնակարգ (ավագ) դպրոց**

- Շարունակել զարգացնել սովորողների ստեղծագործական երևակայությունը, նպաստել ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը:
- Սովորեցնել հուզականորեն և գիտակցված ընկալել երաժշտությունը, երաժշտական կերպարների զարգացումը և դրսևորել գնահատող վերաբերմունք երաժշտության նկատմամբ:
- Ազգային երաժշտական արվեստի նմուշներին հաղորդակցվելու միջոցով գիտակցել և արժևորել սեփական ազգային պատկանելությունը, պատմությունը, մշակույթը, դրսևորել հպարտություն, հարգալից վերաբերմունք սեփական ազգային արժեքների նկատմամբ, հասկանալ նրա տեղը համաշխարհային երաժշտության պատմության մեջ:
- Շարունակել զարգացնել երաժշտագեղագիտական ճանաչողությունը, երաժշտությանը հաղորդակցվելու պահանջմունքը՝ հետագա բարոյագեղագիտական զարգացման, սոցիալականացման, ինքնակրթության և ինքնարտահայտման համար:
- Գիտակցել և գնահատել երաժշտական ստեղծագործությունների հեղինակային իրավունքները, քննադատաբար վերաբերվել այն միջավայրին, որը ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների և լրատվամիջոցների շնորհիվ, ճշտել տեղեկության հավաստիությունը:
- Դաստիարակել աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, երաժշտական տեղեկատվության նկատմամբ՝ քննադատական վերաբերմունք:
- Գիտակցել երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում, հասկանալ նրա՝ որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի նշանակությունը:
- Դաստիարակել հատուկ վերաբերմունք հայրենի երկրի, մարզի, քաղաքի մշակութային օջախների

գործունեության, համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն և պահանջմունք:

- Մշակութային օջախներում դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ:
- Արժևորել երաժշտության դերը մարդու և հասարակության կյանքում գեղեցիկը զգալու, գիտակցելու, արարելու, արվեստի աշխարհում անհատական դիրքորոշում, վերաբերմունք դրսևորելու միջոցով:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերոնշյալ նպատակներն իրականացվում են երաժշտության դասավանդման ընթացքում ուսումնական գործունեության տարբեր ձևերի միջոցով: Երաժշտական ուսումնական գործունեության ձևերը դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կողմից կատարվող գեղարվեստական գործունեություններն է՝ երաժշտությամբ ինքնարտահայտվելու միջոց: Երաժշտության մեկ դասաժամի ընթացքում իրականացվում են ուսումնական գործունեության մի քանի ձևեր: Սովորողների երաժշտական գործունեության բոլոր **ձևերի** աշխատանքների հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու և նրա մասին մտորելու կարողության զարգացումը: Եթե տարրական դպրոցի սովորողի մեջ ուժեղ է երաժշտության ընկալման զգայական, հուզական կողմը (նա նկարագրում է միայն իր զգացողությունները և տպավորությունները), ապա միջին դպրոցում զգայականին ավելանում է նաև գիտակցականը: Զգայական, պատկերային մտածողությունից սովորողն անցնում է իմացական հասկացություններին, որոնք կազմավորում են երաժշտական մտքի խորությունը, գիտակցությունը, ձևավորում ու զարգացնում են երեխայի ստեղծագործական երևակայությունը: Ուսուցումն ակնկալվում է իրականացնել է երաժշտական գործիքներով, տեխնիկապես հագեցած արվեստի սենյակներում:

Երաժշտություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

- երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմություն,
- երգերի անհատական և խմբային կատարում,

- երաժշտառիթմական և պարային շարժում,
- անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա (շարժումային և երգային, հանպատրաստից հորինում),
- ուսումնական էքսկուրսիաներ թանգարաններ, համերգասրահներ և այլ մշակութային օջախներ:

**Երաժշտության ունկնդրում և երաժշտության պատմություն:** Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, որովհետև այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելը և զարգացնելը բավականին դժվար է: Այն զարգացնում է ուշադիր ունկնդրելու կարողությունը, համադրելու, համեմատելու կարողությունը և վերլուծական հմտությունները: Երաժշտության ունկնդրման միջոցով սովորողը ծանոթանում է նաև երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները և այլն: Սովորողը հասկանում է, որ ունկնդրել չի նշանակում միայն լսել, պետք է ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել երաժշտությունից ստացած տպավորությունները, դրսևորել հուզական արձագանք, ինքնուրույն կարծիք հայտնել, մենակ կամ խմբով ներկայացնել ուսումնասիրություններ, հետազոտական կամ նախագծային աշխատանքներ և այլն:

**Անհատական և խմբային երգեցողությունը** երեխաների ամենասիրած գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրանց լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածքը, շնչառությունը, բառերի հստակ արտասանությունը, մաքուր ինտոնացիան և այլն: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար: Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև մի շարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական

պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողություն: Տարրական դպրոցում սովորողները ծանոթանում են նաև ձեռքի նշաններով երգեցողությանը. այն զարգացնում է սովորողների երաժշտալսողական պատկերացումները, նախապատրաստում է նաև անցումը միաձայն երգեցողությունից բազմաձայն երգեցողության:

Երաժշտական գործունեության մյուս ձևը երաժշտառիթմական և պարային շարժումն է, որը նպաստում է սովորողների հոգևոր և ֆիզիկական ուժերի ներդաշնակ զարգացմանը, ժամանակի և տարածության մեջ ճիշտ կողմնորոշվելու ունակությանը: Գործունեության այս ձևի ընթացքում սովորողը կատարում է ունկնդրվող կամ կատարվող ստեղծագործությունների ռիթմական նվագակցություններ, սովորում և կատարում է պարային տարրեր, շարժումներ կամ ամբողջական պարեր:

Երեխաների սիրած գործունեության տեսակներից է խաղը, մասնավորապես՝ երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում կրտսեր դպրոցականների շարժումային գործունեության զարգացման գործում: Շարժախաղերը լայն հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ինքնուրույնություն և ստեղծագործական երևակայություն:

Գործունեության հաջորդ ձևը անհատական ստեղծագործումը կամ իմպրովիզացիան է, որի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Կիրառվում են շարժումային, պարային, երգեցիկ և նվագարանային իմպրովիզացիաներ, փոքրիկ մեղեդիների հորինումներ, տրված անավարտ մեղեդու շարունակություն և այլն: Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, ինքնուրույնություն, սեփական հույզերը և զգացմունքները երաժշտության միջոցով արտահայտելու ձգտում, բարձրացնում են երաժշտական գործունեության ակտիվությունը:

Սովորողները բոլոր երաժշտատեսական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնականորեն զբաղվելու ընթացքում, ծանոթանում են երաժշտության մեջ դրանց կիրառմանը:

Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի ուսումնական էքսկուրսիաների (այդ թվում նաև վիրտուալ),

համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում:Դրանք կարելի է իրականացնել՝ ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը: Սովորողի կյանքում կարևոր տեղ է գրավում նաև դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Ուսումնական գործունեությունը մի ամբողջական գործընթաց է, որի մեջ հավասարապես ներկայացվում են տարբեր տեսակներ:Թե ինչ ծավալով և ինչ ձևերով կկիրառվեն դրանք, կախված է դասի նպատակից, խնդիրներից և տիպից:

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ

«Երաժշտություն» առարկայի ուսումնական նոր ծրագիրը կառուցված է «ստեղծագործության» շուրջ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, վերաբերմունքի, արժեքների ձևավորման, զարգացման և կատարելագործման սկզբունքով, որով սովորողը հանդես է գալիս որպես ունկնդիր, կատարող, հանպատրաստից հորինող, արվեստագետ, քննադատ, հանդիսատես և այլն:

«Երաժշտություն» առարկայի չափորոշչով սահմանվել են հիմնական գաղափարներ և ենթագաղափարներ, որոնց համապատասխան՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսվել են չափորոշչային պահանջներ կամ վերջնարդյունքներ: Յուրաքանչյուր գաղափարի համապատասխան վերջնարդյունքները ձևավորում են սովորողի գնահատման չափանիշը:

Սահմանված են հետևյալ հիմնական գաղափարները և ենթագաղափարները:

**ՍՏԵՂԾՈՒՄ**

- Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանց միջոցով:
- Կազմակերպել և զարգացնել գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:
- Լրացնել և ավարտել երաժշտական ստեղծագործությունը:

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

- Կատարել և ներկայացնել երաժշտական ստեղծագործությունների հիմնական գաղափարը:
- Զարգացնել և կատարելագործել կատարողական հնարները:

- Ներկայացման միջոցով փոխանցել երաժշտական ստեղծագործության իմաստը:

**ԸՆԿԱԼՈՒՄ և ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ**

- Հասկանալ, ընկալել և վերլուծել երաժշտական ստեղծագործությունը:
- Ցուցաբերել հուզական արձագանք:
- Մեկնաբանել և գնահատել իր և մյուսների ստեղծագործական աշխատանքները:

**ԿԱՊԱԿՑՈՒՄ**

- Համադրել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:
- Առավել խոր ընկալման համար գեղարվեստական գաղափարները և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում տեխնոլոգիական տարբեր միջոցների և մոտեցումների, սեփական կենսափորձի և շրջապատող իրականության տեսանկյունից:

Բոլոր գաղափարները հնարավոր է իրականացնել հետևյալ միջոցներով.

- մանկական օպերաներից, ժողովրդական ծեսերից ընտրված կերպարների մարմնավորում արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարներով,
- երաժշտական ստեղծագործության հաղորդակցում և ինքնարտահայտում,
- երաժշտական գիտելիքների և հմտությունների ձևավորում,
- երաժշտական ստեղծագործության նկատմամբ հուզական վերաբերմունքի դրսևորում,
- երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցության և պարային շարժումների ստեղծում և կատարում,
- փոքրիկ իմպրովիզացիաների, մեղեդիների հորինում,
- երաժշտական ստեղծագործության վերլուծում և մեկնաբանում, տարբեր միջոցներով սեփական տպավորությունների ներկայացում և ազգային ու համաշխարհային երաժշտության արժևորում,
- գեղարվեստական կամ ստեղծագործական գործունեության ընթացքում հետաքրքիր կերպարների ստեղծում և բեմադրում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ըստ ՀՊՉ-ում սահմանված կարողունակությունների և առարկայական չափորոշչի վերջնարդյունքների՝ ստեղծվել են երաժշտության առարկայի ծրագրերը (1-12-րդ դասարաններ), որտեղ ուսումնասիրվող յուրաքանչյուր թեմայի համար նշված են՝

- նպատակները, ուղղորդող հարցադրումները,
- առարկայական վերջնարդյունքներին համապատասխան՝ թեմայի վերջնարդյունքները,
- թեմայի բովանդակության բաղադրիչը, դրան առնչվող գործունեության ձևերը,
- խաչվող կամ ընդհանրական հասկացությունները, որոնք օգնում են սովորողներին միավորել ու տարբեր առարկա-ներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջա-նակներում,
- միջառարկայական կապերը, որոնք նպաստում են միևնույն թեմայի մասին սովորողի բազմակողմանի և ամբողջական պատկերացումների ձևավորմանը,
- համապատասխանությունը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունա-կությունների և վերջնարդյունքներին:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցման գլխավոր նպատակ:

Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է, սովորողն արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձևավորված հմտությունների, վերաբերմունքի և արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե ինչպես է առօրեականն արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական:

<table>
<tr><td rowspan="6">Ստեղծում</td><td rowspan="6">-Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանց միջոցով:<br><br>-Կազմակերպել և զարգացնել գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:<br><br>-Լրացնել և ավարտել գեղարվեստական ստեղծագործությունը:</td><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td>Երաժշտական գործունեության ձևերը</td><td>Տարրական դպրոց</td></tr>
<tr><td>Երաժշտության ունկնդրում</td><td>Հաղորդակցվի և ինքնարտահայտվի ունկնդրվող նյութի խաղային, հեքիաթային կերպարների, խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ: Բեմականացնի մանկական օպերաներից հատվածներ, հետաքրքիր երաժշտական կերպարներով, ներկայացնի կիրառված արտահայտչամիջոցները: Ճանաչի երաժշտության պարզ տեսակները: Ճանաչի և գրի նոտաները: Տարբերի ազգային և սիմֆոնիկ նվագախմբի նվագարանները՝ ըստ հնչողության:</td></tr>
<tr><td>Երգեցողություն</td><td>Ստեղծի հետաքրքիր կերպարներ երաժշտական խաղերի, հեքիաթների, մանկական օպերաների, ժողովրդական ծեսերի ուսուցման ընթացքում արտահայտիչ երգեցողության, համապատասխան դիմախաղի և դերասանական հնարների միջոցով:</td></tr>
<tr><td>Երաժշտառիթմական շարժում</td><td>Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով և ռիթմական նվագարաններով:</td></tr>
<tr><td>Իմպրովիզացիա</td><td>Ստեղծի փոքրիկ իմպրովիզացիաներ՝ շարունակի և ավարտի փոքրիկ մեղեդին: Տրված քառատողով հորինի ռիթմական պատկեր և մեղեդի:</td></tr>
<tr><td>Ներկայ</td><td>-Կատարել և ներկայացնել փոքրիկ երաժշտ-</td><td>Կատարում</td><td>Երգի (մենակ կամ խմբով), ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի ժողովրդական, կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, մա-</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | տական ստեղծագործություններ, մեկնաբանել, հաղորդել, փոխանցել իմաստը, հիմնական գաղափարը:<br>-Զարգացնել և կատարելագործել գեղարվեստական հնարները:<br>-Իմաստը փոխանցել գեղարվեստական ստեղծագործության ներկայացման միջոցով | | քուր ինտոնացիայով, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Կատարումն ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումով:<br>Ձեռքի նշաններով **երգի** հնչյունաշարի աստիճանները և **կատարի** երկձայն մեղեդիներ: |
| | | **Ներկայացում** | **Ներկայացնի** ստեղծագործության բնույթը, բովանդակությունը, տեսակը, տեմպը, տեմբրը, ռեգիստրը, դինամիկան: Երաժշտությունից ստացած իր տպավորություններն ու զգացողությունները **ներկայացնի** գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ և նոր տեխնոլոգիաների հնարավորությունները: |
| **Ընկալում (արձագանքում)** | -Հասկանալ, ընկալել ու վերլուծել երաժշտական ստեղծագործությունը:<br>-Մեկնաբանել երաժշտական ստեղծագործության բովանդակությունն ու գաղափարը:<br>-Կիրառել գնահատման ձևեր: | **Ընկալում և հուզական արձագանք** | **Ընկալի** մեղեդու տրամադրությունը, բնույթը, **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով, մեկնաբանի և **հիմնավորի** կատարած ռիթմական կամ պարային շարժումները:<br>**Վերլուծի** ստեղծագործությունը՝ նկարագրի բովանդակությունը, **համեմատի և ցույց տա** արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները: |
| | | **Մեկնաբանություն և գնահատում** | Ստեղծագործությունից ստացած զգացողությունն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով: **Մեկնաբանի** իր և դասընկերների աշխատանքների լավ և վատ կողմերը, կատարի ինքնագնահատում և փոխադարձ գնահատում: |

| | | | |
|---|---|---|---|
| Կատարում | -Սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը՝ երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:<br><br>-Առավել խորը ընկալման համար գեղարվեստական գաղափարները և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: | **Երաժշտությունը և նոր տեխնոլոգիաները** | **Բացատրի**, թե համացանցն ինչպես է օգնում իրեն ավելի հաճախ և արդյունավետ հաղորդակցվելու երաժշտության հետ: **Ստեղծի** իր նախասիրած երգերի և ունկնդրվող ստեղծագործությունների շարք, ձայնագրի և օգտագործի առօրյայում, զվարճանքների ժամանակ: **Կատարի** առցանց դիտումներ համաշխարհային հայտնի օպերային թատրոններից և համերգասրահներից: |
| | | **Երաժշտության պատմություն** | **Դրսևորի** հետաքրքրություն և սեր հայ ժողովրդական և կոմպոզիտորական երաժշտության նկատմամբ: **Ընկալի** և **բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: **Դառնա** հայ ազգային երաժշտության կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: **Դրսևորի** հետաքրքրություն, սեր և հարգանք իր ազգային արժեքների նկատմամբ: |
| | | **Երաժշտության դերը և նշանակությունը կյանքում** | **Բացատրի** երաժշտության դերն ու նշանակությունն իր առօրյայում՝ դպրոցական կյանքում, հանգստի և զվարճանքների ժամանակ: **Մեկնաբանի** երաժշտության կարևոր դերը ժողովուրդների մերձեցման գործընթացում, **արժևորի** մշակութային բազմազանությունը: **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, հաճախակի այցելի (նաև առցանց) ակտիվ հանգստի անցկացման վայրեր՝ թանգարաններ, համերգասրահներ, թատրոններ, ցուցաբերի համապատասխան վարքագիծ: |

| | | Վերջնարդյունքներ | |
|---|---|---|---|
| | | **Երաժշտական գործունեության տեսակներ** | **Հիմնական (միջին) դպրոց** |
| **Ստեղծում** | -Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանց միջոցով:<br><br>-Կազմակերպել և զարգացնել գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:<br><br>-Լրացնել և ավարտել գեղարվեստական ստեղծագործությունը: | **Երաժշտության ունկնդրում** | Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ արվեստի տարբեր տեսակների փոխառնչությունների մասին, երաժշտական ստեղծագործությունների ունկնդրումից ստացած տպավորությունների, կոմպոզիտորների և կատարողների արվեստի մասին եզրահանգումներ անի:<br>**Ունկնդրի և արժևորի** տարբեր ժանրերի, երաժշտական ուղղությունների ստեղծագործությունները, թվարկի դրանց առանձնահատկությունները:<br>**Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ազգային և համաշխարհային երաժշտության միջոցով՝ համադրելով արվեստի տարբեր տեսակների գեղարվեստական կերպարների յուրօրինակությունը: |
| | | **Երգեցողություն** | **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ ճիշտ և արտահայտիչ երգեցողության գործընթացում, արժևորի բոլոր ժանրերի և երգեցիկ ձայների բարձրարվեստ կատարումները:<br>**Ստեղծի** (մենակ կամ խմբով) հայ և եվրոպական երգարվեստին կամ երգիչ կատարողներին նվիրված ուսումնասիրություն կամ հետազոտություն: |
| | | **Երաժշտառիթմական շարժում** | **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն կամ պարային շարժումներ:<br>Ընտրի ռիթմական նվագարաններ (նաև օգտագործելով նոր տեխնոլոգիաներ) և **ստեղծի** |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երաժշտառիթմական բազմաձայն նվագակցու-թյուն: |
| | | **Իմպրովիզացիա** | Տրված արտահայտչամիջոցներով փորձի **ստեղծել** երաժշտական կերպարներ և կազմա-կերպի թատերականացված երաժշտական ներկայացումներ: |

| | | | |
|---|---|---|---|
| **Ներկայացում** | -Կատարել և ներկայացնել փոքրիկ երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել, հաղորդել, փոխանցել իմաստը, հիմնական գաղափարը:<br><br>-Զարգացնել և կատարելագործել գեղարվեստական հնարները:<br><br>-Իմաստը փոխանցել գեղարվեստական ստեղծագործության ներկայացման միջոցով: | **Կատարում** | **Երգի** (մենակ կամ խմբով) տարբեր ժամանակների և ոճերի ազգային կամ այլ ազգերի երգեր, ռոմանսներ և խմբերգեր օպերաներից մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, ներշնչանքով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին: **Կատարի** ազգային ամբողջական պարեր (մենապար, զույգապար, խմբապար): **Կիրառի** իր ստեղծագործական ունակություններն ու հմտությունները երաժշտության դասերից դուրս: |
| | | **Ներկայացում** | **Ներկայացնի** երաժշտական ստեղծագործության կերպարը՝ որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն և համեմատի արվեստի այլ տեսակների գեղարվեստական կերպարների հետ:<br>**Ներկայացնի** հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:<br>**Ուսումնասիրի** ազգային երգու պարի ծագումնաբանությունը, զարգացումը և ներկայացնի հետազոտական կամ նախագծային աշխատանքներով: Ներկայացնի ժամանակակից տարբեր հեղինակների, երաժիշտ կատարողների, նվագախմբերի, երգչախմբերի արվեստին նվիրված սահիկահանդես կամ շնորհանդես:<br>**Դրսևորի** երաժշտական և դերասանական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները ճիշտ և արտահայտիչ ներկայացնելու համար: |
| **Ընկալու** | -Հասկանալ, ընկալել ու վերլուծել | | **Հասկանա, ընկալի և մեկնաբանի** տարբեր ժանրերի երաժշտությունը, ցուցաբերի հուզական արձագանք, իր անհատական երաժշտական տպավորությունները **ներկայացնի** բանավոր ելույթների, |

| | | | |
|---|---|---|---|
| | երաժշտական ստեղծագործությունը:<br><br>-Մեկնաբանել երաժշտական ստեղծագործության բովանդակությունն ու գաղափարը:<br><br>-Կիրառել գնահատման ձևեր: | **Ընկալում և հուզական արձագանք** | գրավոր էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները: **Արժևորի** ազգային ինև համաշխարհային կատարողների և նվագախմբերի, երգչախմբերի արվեստը: |
| | | **Մեկնաբանություն և գնահատում** | **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը և **մեկնաբանի**, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: **Արտահայտի** սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ՝ ակտիվորեն ներգրավվելով քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի սեփական կարծիքը: Գնահատի ըստ նշված չափանիշների: |
| **Կատարում** | -Սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը՝ երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:<br><br>-Առավել խոր ընկալման համար գեղարվեստական գաղափարները | **Երաժշտություն և նոր տեխնոլոգիաները** | **Ներկայացնի** նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում և **արժևորի** դրանց միջոցով ստեղծված արվեստի կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:<br>Կատարի հետազոտություններ հայտնի երաժիշտ կատարողների կամ տարբեր ոճերի անսամբլների, երաժշտական մրցանակաբաշխությունների, փառատոների մասին, նյութը **ներկայացնի**՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ:<br>Փորձի **ստեղծել** որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում՝ օգտվելով համակարգչային ծրագրերից և կատարի այն: |
| | | **Երաժշտության պատմություն** | **Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը երաժշտական ուղղությունների ձևավորման և զարգացման, տարբեր նվագարանների ու նվագախմբերի ստեղծման, նոր ժանրերի, ոճերի առաջացման վրա: |

| | | | |
|---|---|---|---|
| | և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: | | Ուսումնասիրի XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները և հետազոտական աշխատանքով ներկայացնի որևէ կոմպոզիտորի, կատարողի ստեղծագործական գործունեությունը:<br>Ազգային երաժշտության իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար: |
| | | **Երաժշտության դերը և նշանակությունը կյանքում** | **Բացատրի** երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և **ներկայացնի** իր երաժշտական նախասիրությունները, նախընտրած կատարողներին, փոքրիկ շնորհանդեսով ներկայացնի տարվա ընթացքում իր այցելած համերգներից և թանգարաններից ստացած տպավորությունները:<br>**Արժևորի** երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլան միջոց, արժևորի ազգային արժեքները: |

| | | | |
|---|---|---|---|
| **Ստեղծում** | -Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանց միջոցով:<br><br>-Կազմակերպել և զարգացնել | **Վերջնարդյունքներ** | |
| | | **Երաժշտական գործունեության տեսակներ** | **Միջնակարգ (ավագ) դպրոց** |
| | | **Երաժշտության ունկնդրում** | **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** հայ և համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում ցուցաբերի գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք՝ օգտագործելով ինքնարտահայտման զանազան երաժշտական |

| | | | |
|---|---|---|---|
| | գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:<br><br>-Լրացնել և ավարտել գեղարվեստական ստեղծագործությունը: | | միջոցներ և տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաթիվ հնարավորությունները: |
| | | **Երգեցողություն** | **Ստեղծի** (մենակ կամ խմբով) իր նախընտրած ժամանակաշրջանի հայ կամ արտա-սահմանցի կոմպոզիտորների, երգիչ կատարողների ստեղծագործական գործունեության նվիրված նախագիծ կամ դպրոցական միջոցառման համար երաժշտական նյութ: |
| | | **Երաժշտառիթմական շարժում** | **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն՝ կիրառելով նոր տեխնոլոգիաները: |
| | | **Իմպրովիզացիա** | **Ստեղծի** (մենակ կամ խմբով) նախընտրած դասական փոքրիկ մեղեդու ժամանակակից մշակումներ: |
| **Ներկայացում** | -Կատարել և ներկայացնել փոքրիկ երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել, հաղորդել, փոխանցել իմաստը, հիմնական գաղափարը:<br>-Զարգացնել և կատարել ա-գործել գեղարվեստական հնարները:<br>-Իմաստը փոխանցել գեղարվեստական ստեղծագործության ներկայաց | **Կատարում** | **Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական կամ դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր արտահայտիչ, ներշնչանքով, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Իրականացնի ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով: **Կիրառի** իր ստեղծագործական ունակությունները ու հմտությունները երաժշտության դասերից դուրս, մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին: |
| | | **Ներկայացում** | **Ներկայացնի (մենակ կամ խմբով)** ստեղծագործություններից ստացած տպավորությունները պաստառներով, հետազոտություններով, նախագծային աշխատանքներով, գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ, հիմնավորի և մեկնաբանի իր կարծիքը: Խմբային աշխատանքի ընթացքում նպաստի խմբի ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների ընդհանուր արդյունքի ձեռքբերմանը: |

| | | | |
|---|---|---|---|
| | ման միջոցով: | | |
| Ընկալում (արձագանքում) | -Հասկանալ, ընկալել ու վերլուծել երաժշտական ստեղծագործությունը: -Մեկնաբանել երաժշտական ստեղծագործության բովանդակությունն ու գաղափարը: -Կիրառել գնահատման ձևեր: | **Ընկալում և հուզական արձագանք** | **Ընկալի՝ հասկանա և բացատրի** ստեղծագործության գաղափարը, օգտագործված արտահայտչամիջոցները, ցուցաբերի հուզական արձագանք, իր հույզերն ու ապրումները արտահայտի տարբեր ձևերով՝ օգտվելով նոր տեխնոլոգիաներից: Ցուցաբերի վերլուծելու, համադրելու և համեմատելու հմտություններ: |
| | | **Մեկնաբանություն և գնահատում** | **Համեմատի և մեկնաբանի** հակադիր կամ նույնանման բնույթի ստեղծագործությունները, **դրսևորի** վերլուծական կարողություններ, ստեղծագործական և անկախ մտածողություն: Գնահատումը կատարի ըստ սահմանված չափանիշների: |
| Կատարում | -Սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը՝ երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար: -Առավել խոր ընկալման համար գեղարվեստական գաղափարները և | **Երաժշտություն և նոր տեխնոլոգիաները** | **Օգտվի** համացանցի բազմաթիվ հնարավորություններից սեփական ստեղծագործական մտահղացումներն իրականացնելու համար, իր ելույթներն ուղեկցի տեսաձայնային միջոցներով: **Զարգացնի** գեղագիտական, երաժշտական ճաշակը, **ընդլայնի** ազգային և եվրոպական մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները, նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի (համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ) միջոցով: **Դրսևորի** հետաքրքրություն նոր տեխնոլոգիաների միջոցով աշխարհի հանրահայտ կատարողների ու նվագախմբերի |

| | | | |
|---|---|---|---|
| | ստեղծագոր-ծություն-ները համա-դրել հասարա-կական,մշակու-թային և պատմա-կան համա-տեքստում: | | համերգներին առցանցներկալ ինել ու հնարա-վորության նկատմամբ: |
| | | **Երաժշտության պատ-մություն** | **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութա-յին և պատմական համատեքստում: Յասկանա նրա՝ որպես միջմշակութային հաղորդակ-ցության լեզվի դերը, ճանաչի մշակութային բազմազանությունը:<br>**Արժևորի** հայ ազգային երաժշտությունը, դառնանրակրողը,պահպանողը և սերունդ-ներին փոխանցողը: |
| | | **Երաժշտության դերը և նշանա-կությունը կյանքում** | **Դրսևորի** հատուկ վերաբերմունք իր երկրի, մարզի, քաղաքի մշակութային օջախների գործունեության՝ որպես իր կյանքի անքակտել իմասի նկատմամբ:<br>**Արժևորի** երաժշտության դերն ու նշանակությունն իր կյանքում,կազմակերպի ընտանեկան և դպրոցական համերգներ, ակտիվ մասնակցի համայնքային մշակութային միջոցառումներին,համերգներին,ձեռքբերի ունկնդրել ու փորձ, համերգներ հաճախել ու մշակույթ: |

**Տարրական դպրոց**
**Առաջին դասարան**
**Առաջարկվում է (60 ժամ)**

| **Թեմա 1** | **Ես և երաժշտությունը (60 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Երաժշտության ընդհանուր բովանդակության մասին նախնական պատկերացումների ձևավորում և կյանքի հետ նրա կապի կարևորում:<br>• Շրջակա աշխարհի հնչյունային բազմազանության՝ բնական և արհեստական ձայների մասին պատկերացումների ձևավորում:<br>• Երաժշտության մեջ բնության երևույթների, պատկերների, իրադարձությունների, մարդկային հույզերի, զգացմունքների արտացոլման ընկալում:<br>• Երաժշտության նկատմամբ սեր, հետաքրքրություն և հուզական արձագանքի ձևավորում ու խթանում:<br>• Կոմպոզիտոր, կատարող և ունկնդիր կապի յուրացման ապահովում:<br>• Ճիշտ երգեցողության կանոններով երգելու հմտությունների ձևավորում:<br>• Երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցության ստեղծում:<br>• Առօրյայում երաժշտության դերի կարևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Որտեղի՞ց է հայտնվում երաժշտությունը<br>• Ովքե՞ր են այն ստեղծում:<br>• Ի՞նչ երաժշտություն ես սիրում<br>• Ի՞նչ տեղ ունի երաժշտությունը քո կյանքում և առօրյայում: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող երաժշտական նյութերի միջոցով: | |

- Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով **ստեղծի** երաժշտական կերպար:
- Երաժշտական նյութին համապատասխան՝ **ստեղծի** ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
- **Երգի** (մենակ կամ խմբով)՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի ժողովրդական և կոմպոզիտորական պարզ մանկական երգեր ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:
- Մեղեդու տրամադրությունը, բնույթը **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:
- **Բացատրի**, թե երաժշտությունն ինչպիսի դեր ունի իր առօրյայում:

| Թեմայի բովանդակությունը | Առաջարկվող գործունեության ձևերը | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Բնական և արհեստական ձայներ:<br>• Տարբեր բնույթի և բովանդակության երաժշտական ստեղծագործություններ:<br>• Երաժշտությունը՝ որպես կյանքի արտացոլում և անբաժանելի մաս: | •Ունկնդրել և կատարել տարբեր երաժշտական ստեղծագործություններ<br>•Կատարել երաժշտառիթմական և պարային շարժումներ:<br>•Բնութագրել և պատմել երաժշտությունից ստացած տպավորությունների մասին կամ գույներով ներկայացնել դրանք: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես:Ո՞վ ենք մենք: Սովորողը հաղորդակցվելով երաժշտական ստեղծագործություններին, հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչ պիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել նրա միջոցով:Յամընկնու՞մ են իր և ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտության մասին, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով:<br>**Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: |

<table>
<tr><td></td><td></td><td>Սովորողները ծանոթանում են այն հնարներին, միջոցներին, որոնցով բացահայտում և արտահայտում են երաժշտական ստեղծագործությունից ստացած իրենց տպավորությունները, զգացումները: Ճանաչելով և ուսումնասիրելով ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր՝ հասկանում են, որ ուսումնական գործունեության ընթացքում պետք է կարողանան ստեղծագործաբար արտահայտել իրենց մտքերն ու տպավորությունները և կյանքում տեսնել գեղեցիկը, դրանցով զարդարել և հարստացնել իրենց կյանքը:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Մայրենի -Պատմի իր ընտանիքի, զբաղմունքների, զվարճանքների և դրանցում առկա երաժշտության, շրջակա աշխարհի ձայների մասին:<br>• Կերպարվեստ -Երաժշտությունից ստացած տպավորությունները նկարի գույներով կամ պատկերներով:</td></tr>
</table>

| |
|---|
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 27, S 28, S 30, S 32** |

| **Ենթաթեմա 1** | **Իմ խաղերը, հեքիաթները և երաժշտությունը (15 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ծանոթություն երաժշտական խաղերին և հեքիաթներին:<br>• Խաղի և հեքիաթի միջոցով երաժշտության բնույթի, տեմպի, դինամիկայի մասին պատկերացումների ձևավորում:<br>• Երաժշտական խաղերին և հեքիաթներին հուզական արձագանքի ձևավորում:<br>• Երգեցողության հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում:<br>• Երաժշտախաղային, հեքիաթային կերպարները նմանողական շարժումներով, արտահայտիչ դիմախաղով ներկայացնելու հմտությունների ձևավորում: | **Ուղղորդող հարցեր**<br><br>• Ի՞նչ է խաղը քո կյանքում:<br>• Հաճելի՞ է սովորել խաղալով:<br>• Ինչո՞վ են տարբերվում խաղերը և հեքիաթները երաժշտական խաղերից և հեքիաթներից: |

**Վերջնարդյունքներ**

**Յաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի խաղային և հեքիաթային կերպարների միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ:

- Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով **ստեղծի** երաժշտախաղային և հեքիաթային կերպարներ:
- **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
- **Ստեղծի** խաղային իմպրովիզացիաներ:
- **Երգի** (մենակ կամ խմբով) հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:
- **Բնութագրի** ստեղծագործության տրամադրությունը, պատմի սեփական տպավորությունների և զգացողությունների մասին, դրանք արտահայտի հույզերով, գույների միջոցով կամ նկարելով:

| Թեմայի բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Երաժշտական խաղեր:<br>• Երաժշտական հեքիաթներ:<br>• Խաղային իմպրովիզացիաներ:<br>• Թեմատիկ նկարներ: | • Խաղալ երաժշտական խաղեր, կատարել նմանողական շարժումներ:<br>• Սովորել և բեմադրել հատվածներ երաժշտական հեքիաթներից կամ ամբողջական հեքիաթներ:<br>• Յորինել երաժշտական խաղ կամ մեղեդի սիրած հեքիաթի որևէ հերոսի համար: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Այս առումով կարևոր է, որ սովորողը հասկանա, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչ պիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչ պես կարող է ինքնարտահայտվել երաժշտական խաղերի, հեքիաթների, խաղային իմպրովիզացիաների միջոցով: Յամընկնո՞ւմ |

| | | |
|---|---|---|
| | • Երաժշտական խաղային և հեքիաթային կերպարներից ստացած տպավորությունները ներկայացնել գույներով կամ նկարելով: | են իր և իր ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում:<br><br>**Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողները երաժշտական խաղերի, խաղային իմպրովիզացիաների, երաժշտական հեքիաթային կերպարների միջոցով դրսևորում են իրենց ստեղծագործական հմտությունները և դերասանական հնարները, բացահայտում և արտահայտում են մտքեր, զգացմունքներ, նկարագրում են բնության երևույթները: |
| **Միջառարկայական կապեր** | | |

| |
|---|
| • **Մայրենի** - Պատմել երաժշտական հեքիաթների և մանկական խաղերի բովանդակությունը:<br>• **Կերպարվեստ** - Նկարի պատկերներ երաժշտական խաղերից կամ հեքիաթային կերպարներից:<br>• **Ֆիզկուլտուրա** - երաժշտական խաղերի ընթացքում կիրառի սպորտային խաղերի տարրեր:<br>• **Տեխնոլոգիա** - պատրաստի երաժշտական խաղերի և հեքիաթների պարագաներ: |
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 27, S 28, S 30, S 32** |

| **Ենթաթեմա 2** | **Երաժշտությունը իմ սիրած մուլտֆիլմերում (15 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ծանոթություն մուլտֆիլմերի երաժշտությանը:<br>• Մուլտֆիլմերի երաժշտության դերի և նշանակության մասին պատկերացումների ձևավորում:<br>• Մուլտֆիլմերի դիտում, երգերի ուսուցում, երաժշտության ունկնդրում:<br>• Երգեցողության հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Պե՞տք է արդյոք երաժշտություն մուլտֆիլմերում<br>• Ո՞ր մուլտֆիլմերի երաժշտությունն ես սիրում<br>• Հետաքրքիր կլինի՞ մուլտֆիլմը դիտել առանց երաժշտության: |

| | |
|---|---|
| • Երաժշտությունը բնութագրելու, մեկնաբանելու և տպավորությունները խոսքով կամ նկարելով արտահայտելու հմտությունների ձևավորում: | |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով, կատարի կերպարին համապատասխան նմանողական շարժումներ:<br>• Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով **ստեղծի** երաժշտական կերպար:<br>• **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:<br>**Երգի** (մենակ կամ խմբով) մուլտֆիլմերից երգեր ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ:<br>• Մեղեդու տրամադրությունը, բնույթը **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով, ռիթմական կամ նմանողական շարժումներով:<br>• **Ներկայացնի** ստեղծագործության բնույթը, սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով: Բացատրի իր և դասընկերների աշխատանքների լավ և վատ կողմերը:<br>• **Բացատրի**, թե համացանցն ինչպես է օգնում իրեն հաճախակի հաղորդակցվելու մուլտֆիլմերին և դրանց երաժշտությանը: | |

| Թեմայի բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| • Հայկական և արտասահմանյան մուլտֆիլմեր, դրանց երգերը և երաժշտությունը:<br>• Դրանց առանձնահատկությունները և համապատասխանությունը ֆիլմի կերպարին: | • Դիտել կամ ունկնդրել հայկական և այլ մուլտֆիլմերի երաժշտությունը:<br>• Երգել երգեր մուլտֆիլմերից՝ կատարելով երաժշտառիթմական, պարային կամ նմանողական շարժումներ:<br>• Բացատրել դրանց բնույթը, տրամադրությունը:<br>• Նկարել երաժշտությունից ստացած տպավորությունները: | **Անհատական և մշակութային ինքնաարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթն ու նպատակը: Ուսումնասիրելով մուլտֆիլմերի երաժշտությունը, սովորողը հասկանում է, որ դրանք առանց երաժշտության հետաքրքիր չեն լինի: Բնութագրում է երաժշտությունը, ցուցաբերում հուզական արձագանք, սեփական զգացողությունները արտահայտում է գույների միջոցով կամ նկարելով: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի** - ներկայացնել հեքիաթների և մուլտֆիլմերի գրական կերպարների համապատասխանությունը երաժշտությանը:
- **Թատրոն** - կատարի կերպարների նմանողական շարժումներ:
- **Կերպարվեստ** - նկարի մուլտֆիլմերի հերոսներին կամ թեմատիկ նկարազարդումներ կատարի:

| |
|---|
| • **Տեխնոլոգիա** - պատրաստի մուլտֆիլմերի հերոսների կերպարներով խաղալիքներ: |
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 16, S 27, S 28, S 30, S 32** |

| **Ենթաթեմա 3** | **Իմ սիրելի տոները և երաժշտությունը (15/ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Պետական և ընտանեկան տոների, հանդիսությունների, զվարճանքների և երաժշտության կապի մասին պատկերացումների ձևավորում:<br>• Այդ կապը տեսնելու, բացատրելու և կարևորելու հմտությունների ձևավորում:<br>• Երգեցողության հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում:<br>• Երաժշտության նկատմամբ գնահատող վերաբերմունքի դրսևորում:<br>• Իր կյանքում երաժշտության դերի ու նշանակության արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ո՞ր տոներն են ամենակարևորը քո կյանքում:<br>• Ի՞նչ դեր ունի երաժշտությունն այդ տոնակատարությունների ընթացքում:<br>• Կարո՞ղ ես դրանք անցկացնել առանց երաժշտության: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող տոնական նյութի միջոցով:<br>• **Ստեղծի** տրված քառատողով ռիթմական պատկեր և տոնական տրամադրություն ունեցող փոքրիկ մեղեդի: | |

• **Երգի** (մենակ կամ խմբով)՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական տոնական երգեր ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:
• Երաժշտական նյութը **ներկայացնի** համապատասխան ռիթմական նվագակցությամբ՝ ծափերով, ճտտոցներով, դոփյուններով:
• **Բացատրի**, թե համացանցն ինչպես է օգնում իրեն հաղորդակցվել ու տոնական երաժշտությանը:
• **Ստեղծի** տոնական (պետական և ընտանեկան) երգերի և ունկնդրվող ստեղծագործությունների շարք, ձայնագրի և օգտագործի տոների ժամանակ
• **Բացատրի**, թե, իր առօրյայում երաժշտությունն ինչ դեր է խաղում:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տոնական (ընտանեկան, պետական) երգեր:<br>• Ունկնդրվող ուրախ, պարային և տոնական ստեղծագործություններ: | • Ուսուցանել ընտանեկան և պետական տոներին նվիրված երգեր:<br>• Ունկնդրել ուրախ երգային և պարային ստեղծագործություններ:<br>• Բացատրել դրանց տրամադրությունները և մեկնաբանել, թե ինչու են տոնակատարությունները ուղեկցվում հենց այդպիսի ստեղծագործություններով: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Սովորողը, երաժշտությանը հաղորդակցվելով, հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է տոնական օրերին ինքնարտահայտվել մանկական ուրախ երգերի ու պարեղանակների |

| | | |
|---|---|---|
| | | միջոցով:<br>Համընկնո՞ւմ են իր և իր ընտանիքի, ընկերների պատկե-րացումները երա-ժշտության մասին, ինչպե՞ս է կարողա-նում իր զգացմունքները և հույզերը արտա-հայտել երաժշ-տության միջոցով:<br>Հասկանում է, որ երաժշտությունը իր կյանքի անբաժա-նելի մասն է: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի** - ներկայացնի իր ընտանիքը, ընկերներին, հարազատներին պատմի, թե իրենց ընտանիքում ինչպես են ընթանում ընտանեկան, պետական տոները:
- **Կերպարվեստ**- նկարի տոնական երաժշտությունից ստացած տպավորությունները, կամ ներկայացնի գույներով:
- **Տեխնոլոգիա** - պատրաստի տոնական նվերներ:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**S 1, S 10, S 16, S 18, S 27, S 28, S 30, S 32**

## Երկրորդ դասարան

## Առաջարկվում է (32 ժամ)

| **Թեմա 1** | **Երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը (8 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Երաժշտության ամենապարզ ժանրերի (տեսակների) մասին գիտելիքների ձևավորում:<br>• Դրանք ունկնդրելու, ընկալելու, կատարելու և ներկայացնելու հմտությունների ձևավորում:<br>• Երգեցողության հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում: | **Ուղղորդող հարցեր**<br>□ Երաժշտության ի՞նչ տեսակներ գիտես:<br>Ո՞րն է դրանցից քեզ համար ավելի սիրելի: |

**Վերջնարդյունքներ**

- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով: **Ճանաչի** երաժշտության պարզ ժանրերը (տեսակները):
- Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով **ստեղծի** երաժշտական կերպար:
- **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
- **Երգի** (մենակ կամ խմբով) հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ:
- **Մեկնաբանի** ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, տեմպը, դինամիկան, իր տպավորությունները ու զգացողությունները ներկայացնի գույներով կամ նկարելով:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Երգեր, պարեր, քայլերգեր:<br>• Դրանց տեսակները: | • Ունկնդրել բազմաբնույթ մանկական | **Օրինաչափություն**<br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը |

| | | |
|---|---|---|
| | երգեր, պարեր, քայլերգեր:<br>•Ունկնդրել տարբեր տեսակի երգեր, պարեր, քայլերգեր, բնութագրել և մեկնաբանել:<br>•Կատարել երաժշտառիթմական կամ պարային շարժումներ:<br>•Ստեղծել փոքրիկ իմպրովիզացիաներ: | դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ: Սովորողը, ուսումնասիրելով երաժշտության պարզ տեսակները, սկսում է դրանք դասակարգել, զգալ և ցույց տալ դրանց նմանությունները, տարբերությունները: |

| |
|---|
| **Միջառարկայական կապեր**<br>•**Մայրենի** - Ներկայացնի երաժշտության պարզ տեսակները և համեմատել գրականության հետ:<br>•**Պար** - կատարի պարզ պարային շարժումներ:<br>•**Ֆիզկուլտուրա** - Քայլերգերի ուղեկցությամբ քայլի հավասար և համաչափ քայլքով: |
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>•**S 1, S 10, S 27, S 28, S 30, S 32** |

| **Ենթաթեմա 1** | **Ուր են տանում մեզ այդ ժանրերը (8 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>•Երգի, պարի, քայլերգի զարգացման վերաբերյալ պատկերացումների ձևավորում:<br>•Օպերայի, բալետի և սիմֆոնիայի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>•Օպերայից, բալետից փոքրիկ հատվածներ ունկնդրելու, ընկալելու և կատարելու հմտությունների ձևավորում: | **Ուղղորդող հարցեր**<br>•Երևանում որտե՞ղ է գտնվում օպերայի և բալետի թատրոնի շենքը:<br>•Տեղյա՞կ ես, թե ինչ է ներկայացվում այնտեղ:<br>•Ի՞նչ գիտես օպերայի, բալետի, սիմֆոնիայի մասին: |

| | |
|---|---|
| •Երգեցողության հմտությունների ձևավորում և զարգացում:<br>•Ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում:<br>•Օպերայի, բալետի և սիմֆոնիայի երաժշտության մեջ երգային, պարային, քայլերգային երաժշտությունը ճանաչելու հմտությունների ձևավորում և զարգացում:<br>•Օպերայի,բալետի և սիմֆոնիայի նկատմամբ հատուկ վերաբերմունքի՝ հետաքրքրասիրության ձևավորում: | |

**Վերջնարդյունքներ**

•**Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով,կատարի կերպարին համապատասխան նմանողական շարժումներ:

•Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով **ստեղծի** երաժշտական կերպար:

□**Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական»և ռիթմական նվագարաններով՝ ծեռքերով,ոտքերով:

**Երգի** (մենակ կամ խմբով)ճիշտ կեցվածքով,շնչառությամբ,հստակ առոգանությամբ,արտահայտիչ և ներկայացնի հատվածներ հայկական և այլ մանկական օպերաներից:

•Մեղեդու տրամադրությունը,բնույթը **արտահայտի** հույզերով,երգելով,պարելով կամ ռիթմական շարժումներով:

•**Բնութագրի** ստեղծագործության իմաստը,սեփական զգացողություններն արտահայտիչ գույների միջոցով կամ նկարելով:Բացատրի իր և դասընկերների աշխատանքերի լավ և վատ կողմերը:

•**Բացատրի,** թե համացանցն ինչպես է օգնում իրեն հաղորդակցվելու մանկական երաժշտական ստեղծագործություններին:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| •Հատվածներ մանկական օպերաներից, բալետներից, | •Ունկնդրել մանկական օպերաներից, | **Օրինաչափություն** |

| | | |
|---|---|---|
| սիմֆոնիաներից (որտեղ առկա են երգի, պարի, քայլերգի տեսակները): | բալետներից, սիմֆոնիաներից փոքրիկ հատվածներ և ներկայացնել երգի, պարի և քայլերգի զարգացումը, ձևափոխությունները:<br>•Կատարել օպերաներից փոքրիկ հատվածներ:<br>•Կատարել մանկական օպերայի հերոսների երգերը նմանողական շարժումներով:<br>•Նկարել երաժշտությունից ստացած տպավորությունները: | Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ: Սովորողը, ուսումնասիրելով երաժշտության պարզ ժանրերը, սկսում է դրանք դասակարգել, զգալ և ցույց տալ դրանց նմանությունները, տարբերությունները և զարգացումը:<br><br>**Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Ուսումնասիրելով երաժշտական ստեղծագործությունը՝ սովորողը հասկանում է, որ երաժշտության պարզ ժանրերը տեղ են գտել նաև մեծ կտավի ստեղծագործություններում, որտեղ դրանք զարգանում են և դառնում ավելի ամբողջական: Սովորողը ճանաչում և բնութագրում է դրանք, ցուցաբերում հուզական արձագանք, սեփական զգացողություններն |

| | | |
|---|---|---|
| | | արտահայտում գույների միջոցով կամ նկարելով: |
| **Միջառարկայական կապեր**<br>•**Մայրենի** - ներկայացնի տվյալ ստեղծագործությունների բովանդակությունը:<br>•**Կերպարվեստ** - ստեղծի օպերային հերոսների նկարները կամ նկարչական ձևավորում:<br>•**Տեխնոլոգիա** - պատրաստի թեմատիկ հերոսների տիկնիկներ:<br>•**Թատրոն** - բեմադրի հատվածներ օպերաներից: | | |
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 16, S 27, S 28, S 30, S 32** | | |

| **Թեմա 2** | **Ինչպես է ստեղծվում երաժշտությունը (երաժշտական այբուբեն) (8ժամ)** |
|---|---|
| •Երաժշտական հնչյունների և հնչյունաշարի մասին պատկերացումների ձևավորում:<br>•Պատկերացումների ձևավորում «մեղեդու»՝ որպես երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացության մասին:<br>•Ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում:<br>•Մեղեդու տրամադրությունը, բնույթը ռիթմական կամ պարային շարժումներով ներկայացնելու հմտության ձևավորում և զարգացում:<br>•Ձեռքի նշաններով հնչյունաշարի ձայնաստիճաններ երգելու հմտությունների ձևավորում և զարգացում: | **Ուղղորդող հարցեր**<br>•Ինչպե՞ս է ստեղծվում երաժշտությունը:<br>•Ո՞րն է երաժշտության այբուբենը:<br>•Ինչպե՞ս են երաժշտական հնչյունները վերածվում երաժշտության:<br>•Ի՞նչ է նշանակում մեղեդի:<br>•Ո՞րտեղից է այն հայտնվում:<br>•Իսկ դու կարո՞ղ ես հորինել մեղեդի: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Իմանա** երաժշտական հնչյունների անունները և ձեռքի նշաններով երգի դրանք:<br>•Երաժշտական նյութը **ներկայացնի** համապատասխան ռիթմական նվագակցությամբ՝ ծափերով, ճտտոցներով, դոփյուններով: | |

•**Ընկալի** «Մեղեդին» որպես երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացություն:
•**Մեկնաբանի** ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, ներկայացնի իր տպավորությունները ու զգացողությունները երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով, նաև գույներով կամ նկարելով:
•**Ճանաչի և ավարտի** փոքրիկ մեղեդին:

| Թեմայի բովանդակությունը | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|
| •Տարբեր բնույթի և բովանդակության երաժշտական ստեղծա-գործություններ ունկնդրման և կատարման համար:<br>•Երկար և կարճ, բարձր և ցածր, ուժեղ և մեղմ հնչյուններ:<br>•Ձեռքի նշաններ:<br>•Երաժշտական այբուբեն: | •Գործնական աշխատանքի միջոցով ներկայացնել երաժշտական հնչյունները, դրանց տևողությունը, բարձրությունը, ուժգնությունը:<br>•Ունկնդրվող և կատարվող ստեղ-ծագործությունների միջոցով բացատրել մեղեդի և նվագակ-ցություն հասկացու-թյունները, դրանց բնույթը, բովանդա-կությունը, տեմբրը, ռե-գիստրը:<br>•Ծանոթացնել ձեռքի նշաններին:<br>•Ձեռքի նշաններով երգել հնչյունաշարի ձայնաստիճանները: | **Համակարգեր և մոդելներ**<br>Երաժշտական հնչյունները, ըստ իրենց բարձրության, միմյանց հետ որոշակի հարաբերակցության մեջ են, այսինքն՝ միասին վերցրած՝ կազմում են համակարգ: Երաժշտական համակարգի հնչյունները, ըստ բարձրության հաջորդականորեն դասավորված, կոչվում են հնչյունաշար, որի աստիճանները յոթն են և ունեն անուններ՝ դո, ռե, մի, ֆա… |

**Միջառարկայական կապեր**
•**Մայրենի** -ներկայացնի հայոց այբուբենը, հնչյունները, տառերը և համեմատի երաժշտական հնչյունների հետ:

| |
|---|
| •**Կերպարվեստ**-ներկայացնի կերպարվեստի տարրերը՝ գույնը, գիծը, նյութը և այլն: |
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 27, S 28, S 30, S 32** |

| **Ենթաթեմա 1** | **Երաժշտական արտահայտչամիջոցներ (9ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>•Երաժշտական արտահայտչամիջոցների մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>•Դրանք ճանաչելու, տարբերելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>•Երաժշտական ստեղծագործության մեջ արտահայտչամիջոցները զգալու, ընկալելու և ներկայացնելու հմտությունների ձևավորում և զարգացում:<br>•Ստեղծագործական կարողությունների զարգացում:<br>•Ստեղծագործության մեջ արտահայտչամիջոցների դերի արժևորում: | **Հիմնական հարցեր**<br>•Ինչպե՞ս է կոմպոզիտորը ստեղծում որևէ երաժշտական ստեղծագործություն:<br>•Կարո՞ղ ես մի քանի արտահայտչամիջոցներով ստեղծել փոքրիկ երգ կամ մեղեդի: |
| **Վերջնարդյունքներ**<br>•**Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ, ներկայացնի արտահայտչամիջոցները:<br>•**Ստեղծի** փոքրիկ մեղեդի տրված արտահայտչամիջոցներով:<br>•**Մեկնաբանի** ստեղծագործության բովանդակությունը, իր տպավորություններն ու զգացողությունները, նշի արտահայտչամիջոցները՝ բնույթը, տեմպը, դինամիկան, ռեգիստրը:<br>•**Բնութագրի** ստեղծագործության իմաստը, սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով: | |
| **Թեմայի բովանդակություն**<br>•Տարբեր բնույթի, տեսակի ստեղծագործություններ և | **Առաջարկվող գործունեության ձևեր** |

| | |
|---|---|
| դրանցում կիրառված արտահայտչամիջոցները: | •Ունկնդրել տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործություններ և որոշել արտահայտչամիջոցները:<br>•Կատարել տարբեր երգեր՝ գիտակցաբար փոփոխելով արտահայտչամիջոցները:<br>•Յուզականորեն արձագանքել երաժշտական ստեղծագործությանը և կատարել ռիթմական կամ պարային շարժումներ:<br>•Տրված արտահայտչամիջոցներով ստեղծել փոքրիկ մեղեդի: |
| **Ընդհանրական գաղափարներ**<br>**1. Պատճառ և հետևանք**<br>**2.** Սովորողը հասկանում է ստեղծագործության բովանդակության և երաժշտական արտահայտչամիջոցների պատճառահետևանքային կապը, այն, որ ստեղծագործության բովանդակությունից է բխում օգտագործված արտահայտչամիջոցների ընտրությունը, և դրանց փոփոխման արդյունքում կարելի է ստանալ միանգամայն ուրիշ բնույթի և տրամադրության ստեղծագործություն: | **Միջառարկայական կապեր՝**<br>•**Մայրենի** -ներկայացնիլ երաժշտական արտահայտչամիջոցները:<br>•**Կերպարվեստ**-ներկայացնի կերպարվեստի արտահայտչամիջոցները՝ գունապնակ,գծի տեսակներ, նյութերի տեսակներ և այլն:<br>•**Թատրոն** -ներկայացնի թատերական արվեստի արտահայտչամիջոցները՝ դիմախաղ,մարմնի շարժումներ,ձայնի երանգներ և այլն: |

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**S 1, S 10, S 16, S 27, S 28, S 30, S 32**

## Երրորդ դասարան

## Առաջարկվում է (34 ժամ)

<table>
<tr><th>Թեմա 1</th><th>Ինչի մասին է պատմում երաժշտությունը. արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներ (8 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակներ<br>• Ինտոնացիայի (հնչերանգի) մասին պատկերացումների ձևավորում:<br>• Արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում և զարգացում:<br>• Արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները ճանաչելու, տարբերելու, մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>• Ստեղծագործական կարողությունների զարգացում:<br>• Երաժշտությունից ստացած տպավորությունները տարբեր ձևերով ներկայացնելու հմտության ձևավորում:<br>• Երաժշտության և կյանքի կապի արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ինչի՞ մասին է պատմում երաժշտությունը:<br>• Ի՞նչ միջոցներով է արտահայտում և նկարագրում երաժշտությունը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ<br>• Ստեղծի խաղային և հեքիաթային կերպարներ արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:<br>• Տարբերի և ցույց տա արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները:<br>• Յաղորդակցվի և ինքնարտահայտվի արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների միջոցով և ճանաչի դրանք:<br>• Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով:<br>• Տրված քառատողով հորինի ռիթմական պատկեր և մեղեդի:</td></tr>
</table>

- **Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական և կոմպոզիտորական երգեր ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ:
- **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:
- **Համեմատի և բացատրի** հակադիր բնույթի ստեղծագործությունները:
- **Արժևորի** կյանքի ու երաժշտության կապը:

| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Բազմաբնույթ երգեր և ունկնդրվող ստեղծագործություններ՝ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներով, ստեղծագործություններ, որոնք նկարագրում են բնության պատկերներ, երևույթներ, և ստեղծագործություններ, որոնք արտահայտում են մարդկային զգացողություններ, տրամադրություն և այլն: | • Ունկնդրել բազմաբնույթ երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել դրանց բնույթն ու իմաստը:<br>• Երգել բազմաբնույթ ստեղծագործություններ և մեկնաբանել դրանց բնույթը:<br>• Կատարումներն ուղեկցել երաժշտառիթմական և պարային շարժումներով, հիմնավորել դրանք:<br>• Ստեղծել փոքրիկ ինպրովիզացիաներ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներով: | **ԱԱնհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Հաղորդակցվելով երաժշտական ստեղծագործություններին՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել երաժշտության միջոցով: Արժևորում է երաժշտության և կյանքի կապը, հասկանում է, որ երաժշտությունը կարող է նկարագրել բնության պատկերներ և երևույթներ, արտահայտել մարդկային |

| | | |
|---|---|---|
| | | հույզեր ու զգացմունք-ներ: |
| **Միջառարկայական կապեր**<br>• **Մայրենի** - ներկայացնի հեքիաթի կամ պատմվածքի նկարագրական կամ արտահայտչական մասերը:<br>• **Կերպարվեստ** - ներկայացնի կերպարվեստի նկարագրող և կամ արտահայտող ժանրերը (բնանկարներ, նատյուրմորտներ, դիմանկարներ): | | |
| **Կապը հարակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 16, S 17, S 18, S 19, S 24, S 27, S 28, S 30, S 32** | | |

| **Թեմա 2** | **Ինչն է միավորում խոսքն ու երաժշտությունը. խոսակցական և երաժշտական ինտոնացիաներ (8 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Երաժշտական խոսքի վերաբերյալ պատկերացումների ձևավորում:<br>• Երաժշտական խոսքի տարրերի մասին գիտելիքների ձևավորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ է նշանակում «երաժշտական լեզու»:<br>• Կարո՞ղ է խոսքը երաժշտական լինել: |

| | |
|---|---|
| • Երաժշտական և գրական խոսքն ու դրանց տարրերը համեմատելու հմտությունների ձևավորում:<br>• Երգեցողության կարողությունների զարգացում:<br>• Ստեղծագործական և վերլուծական կարողությունների զարգացում: | |

**Վերջնարդյունքներ**

• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջոցով և ճանաչի դրանք:

• **Համեմատի** գրական և երաժշտական խոսքը:

• **Ստեղծի** խաղային և հեքիաթային կերպարներ արտահայտիչ երգեցողության միջոցով, կատարի շնչառություն՝ ըստ ֆրազների:

• **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» ռիթմական նվագարաններով:

• Ձեռքի նշաններով **կատարի** երկձայն մեղեդիներ:

• **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:

• **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:

| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տարբեր բնույթի երգեր, երաժշտական ստեղծագործություններ:<br>• Երաժշտական և գրական խոսք: | • Ունկնդրել և կատարել տարբեր բնույթի երգեր և երաժշտական ստեղծագործություններ:<br>• Որոշել երաժշտական խոսքի տարրերը. մոտիվ, ֆրազ, նախադասություն, պարբերություն:<br>• Որոշել երաժշտական ֆրազները լսողությամբ | **Օրինաչափություններ**<br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ: Օրինակ՝ սովորողները հասկանում են, որ |

| | | |
|---|---|---|
| | և նոտաներով, երգերի կատարման ընթացքում շնչել ըստ ֆրազների:<br>• Համեմատել երաժշտական և գրական խոսքը, դրանց տարրերը, նշել ընդհանրությունները և առանձնահատկությունները: | Խոսակցական և երաժշտական լեզուների զարգացման օրինաչափությունները նման են իրար: Նրանք համեմատում են գրական և երաժշտական խոսքերը, ցույց են տալիս ընդհանրությունները՝ ռիթմը, շեշտը, մոտիվը, ֆրազը, նախադասությունը, պարբերությունը, առոգանությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները: |
| **Միջառարկայական կապեր**<br>**Մայրենի** -բացատրի գրական խոսքի և երաժշտական խոսքի ընդհանրությունները և առանձնահատկությունները: | | |
| **Կապը ՀՊՉ-ի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 16, S 17, S 18, S 19, S 24, S 27, S 28, S 30, S 32** | | |

| **Թեմա 3** | **Մանկական օպերաներ (8 ժամ)**<br>**Ենթաթեմա 1. Սիմֆոնիկ նվագախումբ և նվագարաններ** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ծանոթացում մանկական օպերաներին:<br>• Օպերային թատրոնի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Սիմֆոնիկ նվագարանների և նվագախմբի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Մանկական օպերաների հատվածները կատարել ու և ներկայացնելու հմտությունների ձևավորում: | **Ուղղորդող հարցեր**<br>Ի՞նչ է նշանակում մանկական օպերան:<br>Ի՞նչ տրամադրություն է հաղորդում մանկական օպերան:<br>Ի՞նչ է թատրոնը:<br>Թատրոնի ի՞նչ տեսակներ գիտես: |

<table>
<tr>
<td colspan="2">•Ծանոթացում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնին և աշխարհի հանրահայտ օպերային թատրոններին (առցանց):<br>•Թատրոններում պատշաճ վարքագիծ և պահվածք դրսևորելու հմտությունների ձևավորում:<br>•Կենդանի կատարումների նկատմամբ հետաքրքրությունների դրսևորում:<br>•Օպերային արվեստի արժևորում:</td>
<td>Ինչպե՞ս պիտի քեզ պահես թատրոնում:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Վերջնարդյունքներ<br>•Բեմականացնի և ստեղծի հեքիաթային կերպարներ մանկական օպերաներից արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:<br>•Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և ռիթմական նվագարաններով:<br>•Երգի (մենակ կամ խմբով) հատվածներ մանկական օպերաներից ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, հետևելով խմբավարի շարժումներին:<br>•Նկարագրի ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:<br>•Բացատրի ստեղծագործության բովանդակությունը, ցուցաբերի հուզական արձագանք, մեկնաբանի սեփական զգացողությունները:<br>•Տարբերի հնչողությամբ սիմֆոնիկ նվագախմբի նվագարանների խումբը:<br>•Համեմատի և բացատրի հակադիր բնույթի ստեղծագործությունները:<br>•Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:<br>•Արժևորի օպերային արվեստը և դրսևորի պատշաճ վերաբերմունք:</td>
</tr>
<tr>
<td>Թեմային բովանդակությունը</td>
<td>Առաջարկվող գործունեության ձևեր</td>
<td>Ընդհանրական գաղափարներ</td>
</tr>
<tr>
<td>•Հայկական և այլ ազգերի մանկական օպերաներ:<br>•Աշխարհի հանրահայտ օպերային թատրոններ:</td>
<td>•Ունկնդրել (նաև դիտել տեսագրություններ) և արտահայտիչ կատարել մանկական օպերաների հատվածներ:</td>
<td>Անհատական և մշակութային ինքնարտահայտում<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| • Սիմֆոնիկ նվագարաններ և նվագախմբեր: | •Բնութագրել, մեկնաբանել երաժշտությունը և կատարել համապատասխան երաժշտառիթմական կամ պարային շարժումներ:<br>•Ծանոթացնել սիմֆոնիկ նվագարաններին և նվագախմբերին:<br>•Բեմադրել հատվածներ մանկական օպերաներից:<br>•Զարգացնել երաժշտական ստեղծագործության նկատմամբ հետաքրքրություն և հուզական արձագանք:<br>•Նկարել կամ ներկայացնել տպավորությունները փոքրիկ պատմվածով:<br>•Այցելել օպերային թատրոն: | Հաղորդակցվելով մանկական օպերաներին՝ սովորողը դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ, ինչպես նաև երևակայություն, որով ներկայացնում է տվյալ երաժշտական կերպարը իր պատկերացումներով: |

**Միջառարկայական կապեր**

•**Մայրենի** -ներկայացնի մանկական օպերաների լիբրետտոները:

•**Թատրոն** -Բեմադրի մանկական օպերաների հատվածներ:

•**Կերպարվեստ**-Նկարի մանկական օպերաների հերոսների կամ կատարի բեմական ձևավորումներ:

•**Տեխնոլոգիա**-Պատրաստի համապատասխան հագուստներ և պարագաներ:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**S 1, S 10, S 12, S 15, S 16, S 17, S 18, S 19, S 22, S 24, S 27, S 28, S 30, S 32**

| Թեմա 4 | Հայ ժողովրդական ծեսեր և ազգային նվագարաններ (10 ժամ) |
|---|---|

| | **Ենթաթեմա 1.Երաժշտական և գրական խոսքը ժողովրդական ծեսերում** |
|---|---|
| **Նպատակներ**<br>•Հայ ժողովրդական ծեսերի մասին պատկերացումների ձևավորում:<br>•Դրանց նպատակների, բովանդակության, կառուցվածքի և իրականացման վերաբերյալ գիտելիքների ձևավորում և զարգացում:<br>•Հայ ազգային նվագարանների և նվագախմբերի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>•Ծեսերի ընթացքում կատարվող երգերը, խմբերգերը, շուրջպարերը և խաղերը կատարելու հմտությունների ձևավորում:<br>•Ժողովրդական ծեսերում խոսակցական և երաժշտական ինտոնացիաների ուսումնասիրում և հետաքրքրության դրսևորում:<br>•Ծեսերի բեմականացում և ժողովրդական ավանդույթների արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>Ի՞նչ է նշանակում ժողովրդական ծես:<br>•Ձեր ընտանիքում կատարո՞ւմ եք որևէ ծես կամ ծիսական արարողություն: |
| **Վերջնարդյունքներ**<br>•**Ճանաչի և ներկայացնի** ժողովրդական ծիսական երաժշտությունը:<br>•**Ստեղծի** կերպարներ ժողովրդական ծեսերից արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:<br>•**Բեմականացնի** ժողովրդական ծեսերի հատվածներ և **ստեղծի** հետաքրքրաշարժ երաժշտական կերպարներ:<br>•**Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական տարբեր ծեսերի երգեր ճիշտ կեցվածք-ով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ:<br>•**Բացատրի** ծեսերի բովանդակությունը, կառուցվածքը, **ներկայացման** ձևը, ցուցաբերի հուզական արձագանք:<br>•**Վերլուծի** դրանք, մեկնաբանի խոսակցական և երաժշտական ինտոնացիաները, կատարի ծեսին համապատասխան պարեր և շուրջպարեր, մեկնաբանի դրանց իմաստը:<br>•**Տարբերի** հնչողությամբ ազգային նվագարանները:<br>•**Նկարագրի** ծիսական ավանդույթների փոփոխությունները մեր օրերում: | |

<table>
<tr><td colspan="3">•Արժևորի ժողովրդական ծեսերի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում, բացատրի, որ ինքը, ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը, դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>•Հայ ժողովրդական ծեսեր:<br>•Խոսակցական և երաժշտական ինտոնացիաները ժողովրդական ծեսերում:<br>•Ժողովրդական ավանդույթներ, տոնախմբություններ:<br>•Հայ ազգային նվագարաններ և նվագախմբեր:</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>•Ուսումնասիրել ժողովրդական ծեսերը:<br>•Նկարագրել ժողովրդական ավանդույթները և բացատրել դրանց նպատակը:<br>•Սովորել և կատարել տարբեր ծիսական երգեր, պարերգեր, շուրջպարեր և խաղեր:<br>•Նկարագրել դրանցից ստացած տպավորությունները և ներկայացնել գույներով կամ նկարելով:<br>•Բեմադրել ծեսերի հատվածներ:<br>•Ներկայացնել ծեսի ընթացքում օգտագործվող ազգային նվագարանները:<br>•Արժևորել ժողովրդական արվեստը:</td><td>Ընդհարական գաղափարներ<br><br>Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Հաղորդակցվելով ազգային արվեստի ավանդույթներին, ժողովրդական ծեսերին՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել ազգային ծիսական երգերի միջոցով: Համընկնո՞ւմ են իր և իր ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ հասկանա, որ ազգային երաժշտությունն իր կյանքի անբաժանելի մասն է:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | **Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Մասնակցելով ծիսական արարողությունների բեմադրմանը՝ սովորողը դրսևորում է ստեղծագործական հմտություններ, ներկայացնում է ազգային ավանդույթները ուրույն մեկնաբանությամբ, դերասանական հնարներով, ազգային պարերով, խաղերով և այլն: |
| **Միջառարկայական կապեր**<br>• **Մայրենի** - ներկայացնի հայ ժողովրդական ավանդույթները, ծեսերը:<br>• **Կերպարվեստ** - ստեղծի և ձևավորի ծիսական պարագաներ:<br>• **Ես և շրջակա միջավայրը** - ներկայացնի բնության զարթոնքի և ժողովրդական ծեսի կապը:<br>• **Տեխնոլոգիա** - պատրաստի ծիսական հագուստներ և պարագաներ: | | |
| **Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**S 1, S 10, S 16, S 17, S 18, S 19, S 24, S 27, S 28, S 30, S 32** | | |

## Չորրորդ դասարան

**Առաջարկվում է (34 ժամ)**

| Թեմա 1 | Հայ ազգային երաժշտություն (20 ժամ) |
|---|---|
| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
| • Հայ ազգային երաժշտության, նրա տեսակների և առանձնահատկությունների մասին գիտելիքների ձևավորում:<br>• Հայ ժողովրդական և կոմպոզիտորական երաժշտությունը տարբերելու հմտության ձևավորում:<br>• Ծանոթացում Կոմիտասի՝ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից մեկի հետ:<br>• Ազգային երաժշտությունն ունկնդրելու, ճանաչելու, նմուշները կատարելու և ներկայացնելու հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ազգային պարեր կատարելու կարողության զարգացում:<br>• Հայ ազգային երաժշտության նկատմամբ հատուկ վերաբերմունքի՝ սիրո, հարգանքի, հպարտության դրսևորում:<br>• Ազգային երաժշտության արժևորում: | • Ի՞նչ է նշանակում ազգային երաժշտություն:<br>• Ի՞նչ նշանակություն ունի ազգային երաժշտությունը քո կյանքում:<br>• Ազգային երաժշտության ո՞ր տեսակն է քեզ ավելի հոգեհարազատ: |
| **Վերջնարդյունքներ** | |
| • Արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով **ստեղծի** ազգային երաժշտության հետաքրքիր երաժշտական կերպարներ:<br>• **Երգի** (մենակ կամ խմբով) հայ ժողովրդական և կոմպոզիտորական երգեր ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Կատարումն ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումներով: | |

| | | |
|---|---|---|
| • **Նկարագրի** ազգային երաժշտությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ և նոր տեխնոլոգիաներ:<br>• **Ընկալի և վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, **հիմնավորի** կատարած ռիթմական կամ պարային շարժումները:<br>• **Ցուցաբերի** հուզական արձագանք հայ ազգային երաժշտության նկատմամբ:<br>• **Տարբերի** հնչողությամբ ազգային նվագարանները և նվագախմբերը:<br>• **Համեմատի** հայ ժամանակակից, նաև նոր տեխնոլոգիաներով ստեղծված և դասական մի քանի ստեղծագործություններ, ընդգծի ընդհանրություններն ու առանձնահատկությունները և հիմնավորի իր նախասիրությունները:<br>• **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:<br>• **Ընկալի և բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում:<br>• **Արժևորի** ազգային երաժշտությունը, դառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: | | |
| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
| • Հայ ազգային երաժշտություն:<br>• Հայ ժողովրդական ծիսական երգեր, պարեր ու խաղեր:<br>• Հայ հոգևոր երգեր:<br>• Հայ կոմպոզիտորական երգեր: | • Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել հայ ազգային երաժշտությունը:<br>• Սովորել և կատարել հայ ժողովրդական, ծիսական, հոգևոր և կոմպոզիտորական երգերը<br>• Կատարումներն ուղեկցել երաժշտառիթմական և ազգային պարային շարժումներով կամ ամբողջական պարերով: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով հայ ազգային երաժշտության տեսակները՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է |

| | | |
|---|---|---|
| | • Բեմականացնել ազգային ծեսերը և կատարել համապատասխան երգերը,պարերը և խաղերը:<br>• Կատարել ուսումնասիրություններ,հետազոտական և նախագծային աշխատանքներ ազգային երաժշտության թեմաներով: | ինքնարտահայտվել ազգային մանկական երգերի և երաժշտության միջոցով: Համընկնո՞ւմ են իր և իր ընտանիքի, ընկերների նախասիրությունները ազգային երաժշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի** -Գրագետ կապակցված խոսքով ներկայացնի հայ ժողովրդական հեքիաթներ,ավանդապատումներ,պատմվածքներ,որոնք հետագայում հիմք են դարձել ազգային երաժշտության համար:
- **Կերպարվեստ**-ներկայացնի հայ ազգային կերպարվեստի նմուշները:
- **Պարարվեստ**-կատարի հայկական ժողովրդական պարեր:
- **Թատրոն** -բեմականացնի ազգային ծեսերը:
- **Տեխնոլոգիա**-պատրաստի ազգային ծիսական պարագաներ:
- **Ֆիզկուլտուրա**-ներկայացնի և խաղա ազգային,ծիսական խաղեր:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

| S 1, S 10, S 12, S 15, S 16, S 17, S 18, S 19, S 22, S 24, S 27, S 28, S 30, S 32 |
|---|

| **Թեմա 2** | **Մշակութային բազմազանություն (14 ժամ)**<br>**Ենթաթեմա 1.** Ինչպես են հաղորդակցվում երաժշտության միջոցով (Երաժշտու-թյունը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց): |
|---|---|
| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
| • Մշակութային բազմազանության մասին պատկերացումների ձևավորում:<br>• Այլ ժողովուրդների երաժշտական արվեստի նկատմամբ հետաքրքրության դրսևորում:<br>• Այլ ժողովուրդների երաժշտությունն ունկնդրելու, բնութագրելու, հասկանելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>• Երաժշտությունը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց ներկայացնելու հմտության ձևավորում:<br>• Երաժշտության միջոցով տարբեր ժողովուրդների մշակույթը, կենցաղը, սովորությունները, ավան-դույթները բնութագրելու հմտությունների ձևավորում:<br>• Այլ մշակույթների նկատմամբ հարգանք, սեր և հան-դուրժողականություն դրսևորում:<br>• Մշակութային բազմազանության արժևորում: | • Ի՞նչ է նշանակում մշակութային բազմազանություն:<br>• Այլ ժողովուրդների երաժշտությունը սիրելու և հասկանալու համար պե՞տք է արդյոք իմանալ նրանց լեզուն:<br>• Ինչքա՞ն և ինչպե՞ս ես շփվում այլ ժողովուրդների երաժշտության և ընդհանրապես արվեստի հետ: |
| **Վերջնարդյունքներ** | |

- **Երգի** (մենակ կամ խմբով) տարբեր ժողովուրդների ժողովրդական և կոմպոզիտորական երգեր ճիշտ տկեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- **Կատարումն** ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումներով:
- **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ և նոր տեխնոլոգիաներ:
- **Ընկալի և վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, **հիմնավորի** կատարած ռիթմական կամ պարային շարժումները:
- **Ընկալի** երաժշտությունը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց:
- **Ներկայացնի** նախագծային աշխատանքի միջոցով երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում:
- **Ընկալի և մեկնաբանի** երաժշտությունը որպես «համամարդկային լեզու», որը նպաստում է ժողովուրդների մերձեցմանը, և **արժևորի** մշակութային բազմազանությունը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տարբեր ժողովուրդների երաժշտություն:<br>• Ժողովրդական և կոմպոզիտորական ստեղծագործություններ:<br>• Դասական և ժամանակակից ստեղծագործություններ: | • Ունկնդրել, բնութագրել և մեկնաբանել այլ ժողովուրդների ժողովրդական և կոմպոզիտորական ստեղծագործությունները:<br>• Սովորել և կատարել այլ ժողովուրդների երգերը:<br>• Կատարումներն ուղեկցել ռիթմական և պարային շարժումներով:<br>• Համեմատել տարբեր ժողովուրդների երաժշտությունը, ցույց տալ դրանց | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողներն ուսումնասիրում են տարբեր ժողովուրդների երաժշտական արվեստը, որի միջոցով հաղորդակցվում են տվյալ ժողովուրդների |

| | | |
|---|---|---|
| | ընդհանրություններն ու առանձնահատկությունները: • Ուսումնասիրություններ, հետազոտական և նախագծային աշխատանքներ: | կենցաղին, սովորույթներին, ազգային առանձնահատկություններին: Հասկանում են, որ երաժշտությունը համամարդկային «լեզու» է, այն վերացնում է մարդկանց միջև բոլոր սահմանները, նպաստում է ժողովուրդների մերձեցմանը: **Արժևորում են** մշակութային բազմազանությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի** -ներկայացնի մշակութային բազմազանության իմաստը և տարբեր ժողովուրդների՝ իր կարդացած հեքիաթները ,պատմվածքները և համեմատի երաժշտության հետ:
- **Կերպարվեստ** - ներկայացնի այլ ժողովուրդների կերպարվեստի նմուշներ:

**Կապը Հանրակրթության Պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**

**Տ 1, Տ 10, Տ 12, Տ 15, Տ 16, Տ 17, Տ 18, Տ 19, Տ 22, Տ 24, Տ 27, Տ 28, Տ 30, Տ 32**

## Հիմնական (միջին) դպրոց

### 5-րդ դասարան

### Առաջարկվում է (34 ժամ)

| **Թեմա 1. Երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխառնչությունները, գեղարվեստական կերպար (34 ժամ)** | **Ենթաթեմա 1. Երաժշտություն և գրականություն, երաժշտական ժանրեր՝ խմբերգ, ռոմանս, կանտատ և այլն, երաժշտական և գրական կերպարներ** |
| --- | --- |
| **Նպատակներ**<br>• Արվեստի տեսակների մասին գիտելիքների ձևավորում և զարգացում:<br>• Երաժշտության և արվեստի մյուս տեսակների կապի մասին պատկերացումների ձևավորում:<br>• Արվեստի տարբեր տեսակների գեղարվեստական կերպարների մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Գեղարվեստական կերպարներին հուզական արձագանք և ապրումակցում դրսևորելու հմտություն:<br>• Երաժշտության և գրականության փոխառնչությունն ուսումնասիրելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>• Երաժշտության և գրականության կապից առաջացած ժանրերը կատարելու, ներկայացնելու և վերլուծելու հմտությունների ձևավորում:<br>• Ազգային և համաշխարհային երաժշտական արվեստի ստեղծագործությունների բարձրարվեստ կատարումների արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ է արվեստը:<br>• Արվեստի ո՞ր տեսակներին ես ծանոթ և ո՞րն է քեզ ավելի հետաքրքրում:<br>• Ի՞նչ է նշանակում գեղարվեստական կերպար:<br>• Ո՞ր առարկայի համատեքստում ես հանդիպել կերպարների:<br>• Հաճախո՞ւմ ես արվեստի որևէ խմբակ: |

**Վերջնարդյունքներ**

- Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ արվեստի տարբեր տեսակների և դրանց փոխառնչության մասին:
- **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և երաժշտական կերպարների հետ համեմատելու համար:
- **Ուսումնասիրի** երաժշտության և արվեստի մյուս տեսակների կապից առաջացած տարբեր ժանրերի ստեղծագործություններ և ստեղծի գրավոր նյութ, օրինակ՝ էսսե դրանց ունկնդրումից ստացած տպավորությունների, հեղինակների, կատարողների մասին, կատարի եզրահանգումներ:
- **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն և պարային շարժումներ:
- **Երգի** (մենակ կամ խմբով) երգեր, ռոմանսներ և խմբերգեր մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին:
- **Վերլուծի և մեկնաբանի** երգի, ռոմանսի, խմբերգի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, արժևորի ազգային և համաշխարհային հայտնի կատարողների և նվագախմբերի արվեստը:
- **Վերլուծի** երաժշտական նյութը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:
- **Ընկալի և մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը ժողովրդական, դասական, ժամանակակից նվագարանների ու նվագախմբերի ստեղծման, նոր, ժանրերի, ոճերի առաջացման վրա:
- **Արժևորի** արվեստի կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:
- Ազգային երաժշտության իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Օրինաչափություններ** |
|---|---|---|
| • Արվեստը և նրա տեսակները:<br>• Երաժշտության և գրականության կապը: | • Ուսումնասիրել արվեստի տեսակների փոխառնչությունը:<br>• Ունկնդրել և կատարել տարբեր բնույթի և տեսակի | Սովորողը, կարևորելով արվեստի տարբեր տեսակների կապը, դասակարգում և ներկայացնում է երաժշտության և գրականության կերպարների |

| | | |
|---|---|---|
| •Այդ կապից առաջացած երաժշտական ժանրերը: | երաժշտական ստեղծագոր-ծություններ ներկայացնել երաժշտական կերպարները:<br>•Վերլուծել և մեկնաբանել գեղարվեստական կերպարները:<br>•Համեմատել երաժշտական կերպարները գրականության կերպարների հետ և ընդգծել ընդհանրություններն ու առանձնահատկությունները:<br>•Ներկայացնել շրջակա միջավայրում որևէ պատմական հուշարձանին համապատասխան երաժշտական ստեղծագործություն և վերլուծել կերպարը:<br>•Ներկայացնել երաժշտության և գրականության կապից առաջացած երաժշտական ժանրերը, վերլուծել բովանդակության ընդհանրությունները և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները: | ընդհանրություններն ու առանձնահատկությունները, նշում է ժամանակաշրջանի և երաժշտական ժանրերի զարգացման օրինաչափությունները:<br><br>**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, հաղորդակցվելով տարբեր ժանրերի և ժամանակաշրջանների երաժշտական կերպարների հետ, հասկանում են, որ դրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած են բնության երևույթներ, պատկերներ, մարդկային հույզեր կամ զգացմունքներ, կյանքի դրվագներ, և կոմպոզիտորը, կիրառելով համապատասխան արտահայտչամիջոցներ, նկարագրում է յուրաքանչյուրի ապրած ժամանակաշրջանի կենցաղը, սովորությունները և այլն: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայոց լեզու և գրականություն** - կառուցի հայերեն, գրագետ բանավոր և գրավոր խոսք, համեմատի գրական կերպարները և երաժշտական կերպարները, ընդգծի առանձնահատկությունները և ընդհանրությունները:

- **Հայրենագիտություն** -Ներկայացնի երաժշտության անդրադարձը պատմական հայտնի կերպարներին:
- **Կերպարվեստ**-Շրջակա միջավայրում որևէ մշակութային հուշարձանին կամ արձանին համապատասխան երաժշտական ստեղծագործության ներկայացում և կերպարի վերլուծություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| **Ենթաթեմա 2** | **Երաժշտություն և կերպարվեստ, երաժշտական և կերպարվեստի կերպարներ (8ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>•Երաժշտության և կերպարվեստի փոխառնչության մասին («պատկերավոր» երաժշտություն և «հնչող» նկարներ) պատկերացումների ձևավորում:<br>•Երաժշտության և կերպարվեստի փոխառնչությունն ուսումնասիրելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>•Երաժշտության և կերպարվեստի համանուն կամ նույն բնույթի, բովանդակության ստեղծագործություններն ու դրանց արտահայտչամիջոցները համեմատելու, ընդհանրությունները և առանձնահատկություններն ընդգծելու հմտությունների ձևավորում:<br>•Երաժշտության և կերպարվեստի փոխառնչության արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>•Ի՞նչ կապ կարող է լինել երաժշտության և կերպարվեստի միջև:<br>•Կարո՞ղ ես համեմատել երաժշտության նրբերանգները կերպարվեստի գույների երանգների հետ: |

**Վերջնարդյունքներ**

•Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ երաժշտության և կերպարվեստի փոխառնչության, միևնույն բովանդակության ստեղծագործությունների ընդհանրությունների և առանձնահատկությունների մասին:
•**Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և երաժշտական կերպարների հետ համեմատելու համար:

•**Վերլուծի և մեկնաբանի** «պատկերավոր» երաժշտություն և «հնչող» նկարներ հասկացությունները, ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորությունները ներկայացնի փոքրիկ էսսեով:
•**Վերլուծի** և համեմատի, թե երաժշտության և կերպարվեստի ո՛ր արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ են հեղինակները ներկայացրել իրենց մտահղացումները: Գնահատի ըստ նշված չափանիշների:
•**Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը նոր ժանրերի, ոճերի առաջացման վրա:
•Ազգային երաժշտության և կերպարվեստի իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Օրինաչափություններ** |
|---|---|---|
| •Երաժշտություն և կերպարվեստ:<br>•Դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները:<br>•Դրանցում առկա գեղարվեստական կերպարները և նրանց զարգացումը: | •Համեմատել երաժշտության և կերպարվեստի արտահայտչամիջոցները:<br>•Ունկնդրել տարբեր ստեղծագործություններ և դիտել դրանց համապատասխան կերպարվեստի ստեղծագործություններ:<br>•Վերլուծել և մեկնաբանել արվեստի այս երկու տեսակների փոխկապվածությունը:<br>•Տրված երաժշտական կերպարին համապատասխան ստեղծել նկարչական կերպար:<br>•Շրջակա միջավայրում որևէ պատմական հուշարձանին համապատասխան | Սովորողը, կարևորելով արվեստի տարբեր տեսակների կապը, դասակարգում և ներկայացնում է երաժշտական և կերպարվեստի կերպարների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, նշում է դրանց զարգացման օրինաչափությունները՝ ըստ ժամանակաշրջանի:<br><br>**Կառուցվածք և գործառույթ**<br>Կառուցվածքն էական դեր ունի որևէ ստեղծագործության գաղափարի ուսումնասիրման և բացահայտման հարցում, երբ պարզվում է, թե ինչու է հեղինակը կառուցել իր երկը հենց այդ կառուցվածքով, ինչ նպատակ է հետապնդել, մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի իր մտքերը, հույզերը, զգացումները արտահայտելու գործում: |

| | | |
|---|---|---|
| | երաժշտական ստեղծագործության ներկայացում և կերպարի վերլուծություն: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, հաղորդակցվելով տարբեր ժանրերի և ժամանակաշրջանների երաժշտական կերպարների հետ, հասկանում են, որ դրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած են բնության երևույթներ, պատկերներ, մարդկային հույզեր կամ զգացմունքներ, կյանքի դրվագներ, և կոմպոզիտորը, կիրառելով համապատասխան արտահայտչամիջոցներ, նկարագրում է յուրաքանչյուրի ապրած ժամանակաշրջանի կենցաղը, սովորությունները և այլն: |
| **Միջառարկայական կապեր**<br>**Գրականություն** - Ներկայացնի հայերեն գրագետ կապակցված խոսքով երաժշտության և կերպարվեստի կապը:<br>**Կերպարվեստ**-Նկարի երաժշտական ստեղծագործությունից ստացված տպավորությունները և զգացողությունները: | | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46** | | |

| **Ենթաթեմա 3** | **Երաժշտություն և պարարվեստ. Ժողովրդական, դասական, ժամանակակից պարեր, երաժշտական և պարային կերպարներ** |
|---|---|
| **Նպատակները** | **Ուղղորդող հարցեր** |

| | |
|---|---|
| • Երաժշտության և պարարվեստի փոխառնչության մասին պատկերացումների ձևավորում<br>• Երաժշտության և պարարվեստի փոխկապվածությունը ուսումնասիրելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում<br>• Պարային երաժշտությունը և տարբեր ժանրերի պարային շարժումները կատարելու, ներկայացնելու, համեմատելու և դրանց համապատասխանությունը մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>• Պարարվեստի ազգային և համաշխարհային հայտնի կատարողների արվեստի արժևորում: | - Ի՞նչ տեղ ունի պարը քո կյանքում:<br>- Երաժշտությունն ունկնդրելիս հաճա՞խ ես պարում: Կարո՞ղ ես պարել առանց երաժշտության: |

**Վերջնարդյունքներ**

- Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ կամ սահիկահանդես երաժշտության և պարարվեստի կապի մասին:
- **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ գեղարվեստական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և երաժշտական կերպարների հետ համեմատելու համար:
- **Ներկայացնի և հիմնավորի** տարբեր ժանրերի պարային և երաժշտական կերպարների առանձնահատկությունները, ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորությունները ներկայացնի փոքրիկ էսսեով:
- **Վերլուծի** և մեկնաբանի, թե երաժշտության և պարարվեստի որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ են հեղինակները ներկայացրել իրենց մտահղացումները: Գնահատի ըստ նշված չափանիշների:
- **Վերլուծի և մեկնաբանի** երաժշտության բնույթի և պարային շարժումների համապատասխանությունը՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ, **արժևորի** բարձրարվեստ պարային կատարումները:
- Ազգային երաժշտության և պարարվեստի իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:
- **Արժևորի** երաժշտության և արվեստի մյուս տեսակների կապը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Օրինաչափություններ** |
|---|---|---|
| • Երաժշտության և պարարվեստի կապը: | | Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու |

| | | |
|---|---|---|
| • Դրանց ընդհանրությունները և առանձնահատկու-թյունները:<br>• Ժողովրդական ,դասական և ժամանակակից պարեր:<br>• Երաժշտական և պարային կերպարներ: | • Ունկնդրել և դիտել պարային երաժշտու-թյուն և պարեր:<br>• Կատարել պարային շարժումներ կամ ամբողջական պարեր:<br>• Դիտել տեսաերիզներ պարային խմբերի ելույթներից:<br>• Վերլուծել և մեկնա-բանել երաժշտության և պարարվեստի կապը: | առաջին քայլերից մեկը դասա-կարգումն է, որն իրականացվում է նմա-նությունների ու տարբերու-թյունների բացահայտման շնորհիվ: Ժողովրդական, դասական և ժամանակակից պարերը դասա-կարգվում են ընդհանուր հատ-կանիշների կամ նմանատիպ կառուցվածքների հիման վրա: Դասակարգումը թույլ է տալիս բազմատեսակ ստեղծա-գործությունները համակար-գել սահմանափակ թվով խմբե-րում:<br>**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ: Սովորողները, հաղորդակցվելով տարբեր ժանրերի և ժամանակաշրջանների երաժշտական կերպարների հետ, հասկանում են, որ դրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած են բնության երևույթներ, պատկերներ, մարդկային հույզեր կամ զգացմունքներ, կյանքի դրվագներ, և կոմպոզիտորը, կիրառելով համապատասխան արտահայտչամիջոցներ, նկարագրում է յուրաքան-չյուրի ապրած |

| | | |
|---|---|---|
| | | ժամանակաշրջանի կենցաղը, սովորությունները և այլն: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայոց լեզու և գրականություն** - Կազմի գրագետ բանավոր և գրավոր խոսք ներկայացնելու համար պարարվեստի և երաժշտության փոխառնչությունները:
- **Պարարվեստ** - Համեմատի ժողովրդական, դասական և ժամանակակից պարային շարժումները և երաժշտությունը:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| **Թեմա 2** | **Նվագարանային ժանրեր՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկերներ, սիմֆոնիա (8ժամ):** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Նվագարանային ժանրերի՝ սոնատի, կոնցերտի, սիմֆոնիկ պատկերների, սիմֆոնիայի ուսումնասիրում:<br>• Նշված ժանրերի բնույթի, բովանդակության, կառուցվածքի և ձևի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Դրանց ունկնդրումից ստացած տպավորությունները վերլուծելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>• Կենդանի կատարումների և համերգասրահներ, թատրոններ այցելելու նկատմամբ հետաքրքրության դրսևորում:<br>• Ազգային և համաշխարհային երաժիշտ կատարողների արվեստի արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ ժանրեր կան, որոնք կատարում են միայն նվագարանները և նվագախմբերը:<br>• Ո՞ր ժանրն է քեզ առավել հետաքրքրում:<br>• Ո՞ր հայ կոմպոզիտորն է ստեղծել առաջին սոնատը, կոնցերտը, սիմֆոնիան,<br>Ներկա եղե՞լ ես որևէ ժանրի համերգային կատարմանը: |
| **Վերջնարդյունքներ** | |

• **Ինքնուրույն կամ խմբով ստեղծի** փոքրիկ տեսանյութ տվյալ ժանրերի ստեղծագործություններից ստացած տպավորությունների մասին կամ հանդես գա բանավոր ելույթով, եզրահանգումներ անի:
• **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային ինքնազգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:
• **Վերլուծի և մեկնաբանի** նվագարանային ժանրերի կառուցվածքը: Ներկայացնի նվագարանները և նվագախմբերը, ցուցաբերի հուզական արձագանք:
• **Վերլուծի** երաժշտական նյութը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը մարմնավորել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:
• **Արժևորի** այդ ժանրերի միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:
• **Արժևորի** այդ ժանրերի ազգային և համաշխարհային լավագույն նմուշները:

| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Նվագարանային ժանրեր՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկերներ, սիմֆոնիա և այլն:<br>• Դրանց կառուցվածքը, մասերը:<br>• Դրանցում առկա երաժշտական կերպարների զարգացումը:<br>• Դրանք կատարող նվագարանները և նվագախմբերը: | • Սոնատի, կոնցերտի, սիմֆոնիկ պատկերների, սիմֆոնիայի ունկնդրում ձայնագրության կամ տեսաերիզի միջոցով:<br>• Քննարկում, մեկնաբանում:<br>• Նշված ժանրերում առկա մեկ կամ մի քանի կերպարների վերլուծություն և մեկնաբանում:<br>• Ներկայացնել դրանք կատարող նվագարանները և նվագախմբերը: | **Օրինաչափություններ**<br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ:<br>Երաժշտական ժանրերը դասակարգվում են ընդհանուր հատկանիշների կամ նմանատիպ կառուցվածքների հիման վրա: Դասակարգումը թույլ է տալիս բազմատեսակ ստեղծագործությունները համակարգել սահմանափակ թվով խմբերում:<br><br>**Կառուցվածք և գործառույթ** |

| | | |
|---|---|---|
| | • Քննարկումներ երաժշտության և արվեստի մյուս ճյուղերի բազմաստեղծագործությունների մասին: | Կառուցվածքը էական դեր ունի որևէ ստեղծագործության գաղափարի ուսումնասիրման և բացահայտման հարցում, երբ պարզվում է, թե ինչու է հեղինակը կառուցել իր երկը հենց այդ կառուցվածքով, ինչ նպատակ է հետապնդել, մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի մտքերը, հույզերը, զգացումները արտահայտելու գործում: |

**Միջառարկայական կապեր**

• **Գրականություն** - Բազմամաս գրական ստեղծագործությունները համեմատի երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների հետ, գրագետ կապակցված խոսքով ներկայացնի ընդհանրությունները և առանձնահատկությունները:

• **Կերպարվեստ** - ներկայացնի երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների բնույթին համապատասխան բազմամաս կերպարվեստային ստեղծագործություն:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

## 6-րդ դասարան

### Առաջարկվում է (34 ժամ)

| Թեմա 1 | Համալիր (սինթետիկ) արվեստներ<br>Մյուզիքլ, օպերետ (6 ժամ) |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Համալիր (սինթետիկ) արվեստների մասին պատկերացումների ձևավորում:<br>• Դրանք ճանաչելու, վերլուծելու, մեկնաբանելու և բեմադրելու հմտությունների ձևավորում:<br>• Մյուզիքլ և օպերետ ժանրերի ուսումնասիրում:<br>• Համալիր (սինթետիկ) արվեստների նկատմամբ հատուկ վերաբերմունքի՝ հետաքրքրասիրության դրսևորում:<br>• Համերգասրահներ ու թատրոններ այցելելու պահանջմունքի ձևավորում և զարգացում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Լսե՞լ ես մյուզիքլի կամ օպերերտայի մասին:<br>• Ե՞րբ են ստեղծվել և զարգացել:<br>• Ի՞նչ տարածում ունեն մեր ժամանակներում: Ծանո՞թ ես Երևանի թատրոնների ազդագրերին, կա՞ն այս ժանրերը դրանց մեջ: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Դրսևորի** երաժշտական և դերասանական գիտելիքներ և հմտություններ՝ երաժշտական կերպարը ճիշտ և արտահայտիչ ներկայացնելու համար:<br>• **Երգի** (մենակ կամ խմբով) արիաներ և խմբերգեր մյուզիքլից և օպերետներից, մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով,<br>• **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:<br>• **Վերլուծի և մեկնաբանի** արիայի, խմբերգի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք և ապրումակցում:<br>• Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ մյուզիքլի կամ օպերետի կոմպոզիտորի կամ ստեղծման պատմության մասին:<br>• **Արժևորի** ազգային և համաշխարհային արվեստը և ներկայացնի տարբեր միջավայրերում:<br>• Հաճախակի **այցելի** համերգասրահներ, թատրոններ: | |

| Թեմայի բովանդակությունը | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Մյուզիքլ և օպերետ ժանրերը՝ որպես սինթետիկ արվեստի ամենամատչելի ձևեր:<br>• Դրանց բնույթն ու կառուցվածքը:<br>• Դրանց կերպարները և զարգացումը:<br>• Դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները:<br>• Դրանց դերն ու նշանակությունը տարբեր դարաշրջաններում: | • Ունկնդրել կամ դիտել նշված ժանրերի ստեղծագործությունների տեսագրությունը:<br>• Ուսումնասիրել լիբրետտոները:<br>• Վերլուծել և մեկնաբանել երաժշտության համապատասխանությունը գրական տեսքստին:<br>• Կատարել հատվածներ տվյալ ստեղծագործություններից արտահայտիչ, երաժշտական և դերասանական հմտություններով:<br>• Բեմադրել տվյալ ստեղծագործությունների հատվածներ:<br>• Փորձել ստեղծել փոքրիկ մյուզիքլ սեփական սցենարով:<br>• Այցելել համերգասրահներ և թատրոններ: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները երաժշտական մեծ կտավի ստեղծագործություններն ուսումնասիրելիս բացահայտում են հերոսների ապրած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթությունների հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>**Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Պետք է երաժշտությունը ուսումնասիրել մեկ ամբողջության մեջ այն ամենի հետ, ինչը նրան ծնում և շրջապատում է. կյանքի, բնության, սովորությունների, բանաստեղծությունների, հեքիաթի, հավատքի, հուշարձանների, |

| | | |
|---|---|---|
| | | ամրոցների, գեղանկարների և շատ-շատ ուրիշ բաների հետ: Երաժշտության հաղորդակցվելով՝ սովորողն իր տպավորությունները, զգացողությունները պատկերում է բանավորելույթով, կերպարվեստի գործով կամ էլեկրոնային ուսումնական նյութ ստեղծելով, արժևորելով ստեղծարարությունը և ներդաշնակությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Գրականություն** -Վերլուծիուսումնասիրվող երաժշտական ստեղծագործության գրական հիմքը՝ լիբրետտոն, ստեղծման ժամանակաշրջանը, ոճը, արտահայտչականությունը և այլն:
- **Կերպարվեստ**-Վերլուծիմյուզիքլի, օպերետի բեմի ձևավորման, դեկորների ընտրության, հագուստների ձևավորման համապատասխանությունը ստեղծագործության բովանդակությանը:
- **Պարարվեստ**-Ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործությանը համապատասխան ստեղծի և կատարի պարայի շարժումներ:
- **Հայրենագիտություն**-բեմադրի տվյալ սեղծագործության բովանդակությանը համապատասխան ծիսական տոնակատարություններ:
- **Տեխնոլոգիա**–պատրաստի բեմական հագուստներ և պարագաներ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| **Թեմա 2** | **Օպերա, բալետ (դասական, ազգային, ժամանակակից. 10 ժամ)** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ազգային և համաշխարհային օպերային և բալետային արվեստների վերաբերյալ գիտելիքների ձևավորում: | **Ուղղորդող հարցեր** |

| | |
|---|---|
| • Դրանցից հատվածներ կատարելու, վերլուծելու, մեկնաբանելու, բեմադրելու հմտությունների ձևավորում:<br>• Դրանց ունկնդրումից կամ դիտումից ստացած տպավորությունների և երաժշտական կերպարների ընկալման ու վերլուծության հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ազգային և համաշխարհային օպերային և բալետային արվեստի նկատմամբ հատուկ վերաբերմունքի՝ հետաքրքրասիրության դրսևորում և համերգասրահներ, թատրոններ այցելելու պահանջմունք:<br>• Սինթետիկ արվեստների արժևորում: | • Ի՞նչ արվեստների միասնությունից են ստեղծվում այդ ժանրերը,<br>• Ինչու՞ են դժվարամատչելի հասարակության լայն խավերի համար<br>• Այցելե՞լ ես որևէ երաժշտական թատրոն: |

**Վերջնարդյունքներ**

- **Երգի** (մենակ կամ խմբով) հատվածներ օպերաներից՝ խմբերգեր, արիաներ մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցության և խմբավարի շարժումներին:
- **Ստեղծի** հետազոտական նյութ որևէ օպերայի, բալետի, դրանց հեղինակների կամ ազգային, համաշխարհային հանրահայտ կատարողների մասին՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ:
- **Վերլուծի և մեկնաբանի** օպերայի կամ բալետի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը:
- **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:
- **Ներկայացնի** նոր տեխնոլոգիաների դերը օպերային ներկայացումներն ավելի տպավորիչ դարձնելու համար, **արժևորի դրանց միջոցով ստեղծված** երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:
- **Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը նոր ժանրերի, ոճերի (օրինակ՝ ռոք-օպերա, օպերա-բալետ) առաջացման վրա:
- Ազգային երաժշտության իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| • Մանկական, դասական, ազգային և ժամանակակից օպերային և բալետային երաժշտություն:<br>• Դրանց բնույթն ու կառուցվածքը:<br>• Երաժշտական կերպարների զարգացումը:<br>• Նախերգանք-ֆինալ:<br>• Այդ ժանրերի զարգացումը XX-XXI դարերում: | • Ուսումնասիրել ազգային և համաշխարհային օպերային և բալետային երաժշտության նմուշները:<br>• Ունկնդրել կամ դիտել ստեղծագործության տեսագրությունը:<br>• Ուսումնասիրել լիբրետտոն:<br>• Վերլուծել և մեկնաբանել երաժշտության համապատասխանությունը գրական տեքստին:<br>• Կատարել հատվածներ տվյալ ստեղծագործություններից:<br>• Բեմադրել մանկական կամ ազգային որևէ օպերայի հատվածներ:<br>• Ներկայացնել հետազոտական կամ նախագծային աշխատանքներ «Օպերային և բալետային արվեստը աշխարհում և Հայաստանում» կամ «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» թեմայով:<br>• Այցելել օպերային թատրոն: | Որտե՞ղ և ե՞րբ: Սովորողները երաժշտական մեծ կտավի ստեղծագործություններն ուսումնասիրելիս բացահայտում են հերոսների ապրած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, մարդկության պատմության շրջադարձային փուլերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>**Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողը, ուսումնասիրելով օպերային և բալետային արվեստը, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների մասին, կատարում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր: Այս գաղափարի ուսումնասիրության |

| | | |
|---|---|---|
| | | ընթացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին, թե ի´նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքում: Սովորողն արժևորում է մշակույթի բարձրակարգ ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը: |

**Միջառարկայական կապեր**

- **Գրականություն** - Վերլուծիուսումնասիրվող երաժշտական ստեղծագործության գրական հիմքը՝ լիբրետտոն, ստեղծման ժամանակաշրջանը, ոճը, արտահայտչականությունը: Ներկայացնի արվեստների սկզբնաղբյուրների, նպատակների ընդհանրությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:
- **Կերպարվեստ** - Վերլուծի օպերայի, բալետի բեմի ձևավորման, դեկորների ընտրության, հագուստների ձևավորման համապատասխանությունը ստեղծագործության բովանդակությանը:
- **Պարարվեստ** - Ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործությանը համապատասխան պարերի շարժումներ ստեղծի և կատարի:
- **Յայրենագիտություն** - Տվյալ սեղծագործության բովանդակությանը համապատասխան բեմադրիծիսական տոնակատարություններ:
- **Տեխնոլոգիա** - Բեմական հագուստներ և պարագաներ պատրաստի:

**Կապը Յանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**
**Յ 2, Յ 26, Յ 29, Յ 30, Յ 31, Յ 32, Յ 35, Յ 42, Յ 43, Յ 44, Յ 45, Յ 46**

<table>
<tr><th colspan="2">Թեմա 3</th><th>Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ՝ դիրիժորներ, երգիչներ, երաժիշտներ (4 ժամ)</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>•Ծանոթացում ազգային և համաշխարհային հանրահայտ երաժիշտ կատարողների հետ:<br>•Նրանց կյանքի և ստեղծագործական գործունեության ուսումնասիրում:<br>•Նրանց տաղանդի, անցած ուղու և համաշխարհային արվեստի զարգացման գործընթացում ունեցած ավանդի արժևորում:<br>•Նրանց՝ որպես մարդ-անհատի բարոյական կերպարի, որպես մարդկային ամենաբարձր արժանիքներ կրողների արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>•Ի՞նչ գիտեք համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների՝ դիրիժորների, երգիչների, պարողների, երաժիշտների մասին:<br>•Ունե՞ք արդյոք նախընտրած որևէ կատարող:<br>•Ինչո՞ւ եք նրան նախընտրում:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>•Դրսևորի հատուկ վերաբերմունք համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների նկատմամբ և արժևորի բոլոր ժանրերի և երգչային ձայների, դիրիժորների, երաժիշտների, պարողների բարձրորակ կատարումները:<br>•Ինքնուրույն կամ խմբով ստեղծի փոքրիկ տեսանյութ տարբեր ժանրերի հանրահայտ կատարողների և նրանց կատարումներից ստացած տպավորությունների մասին, եզրահանգումներ անի:<br>•Ազգային երաժշտության կատարողական արվեստի հանրահայտ տանունների իմացությունն օգտագործի իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:</td></tr>
<tr><th>Թեմայի բովանդակություն</th><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Ընդհանրական գաղափարներ</th></tr>
<tr><td>•Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ՝ դիրիժորներ,</td><td>•Ուսումնասիրել հանրահայտ կատարողների</td><td>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ<br>Որտե՞ղ և ե՞րբ:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| երգիչներ, երաժիշտներ, պարողներ:<br>•Նրանց կյանքը և ստեղծագործական գործունեությունը:<br>•Նրանց տեղը համաշխարհային արվեստում: | ստեղծագործական գործունեությունը:<br>•Ունկնդրել և դիտել նրանց կատարումները:<br>•Վերլուծել և գնահատել նրանց ավանդը համաշխարհային արվեստի զարգացման գործում:<br>•Ստեղծել հետազոտական աշխատանք կամ նախագիծ նրանց ստեղծագործական գործունեության մասին: | Սովորողները, ծանոթանալով համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների ստեղծագործական գործունեությանը, բացահայտում են նրանց ապրած ժամանակաշրջանը, կենցաղը, արժևորում են նրանց՝ որպես մարդ-անհատի, մարդկային ամենաբարձր արժանիքներ կրողների բարոյական կերպարը: |

**Միջառարկայական կապեր**
• **Գրականություն** -Ներկայացնի գրականության ասպարեզում հայտնի ասմունքողների, գրականագետների արվեստը:
• **Թատրոն** -Ներկայացնի թատերական գործիչների, դերասանների արվեստը:
• **Պարարվեստ**-Ներկայացիլ հանրահայտ պարողների, պարուսույցների, բեմադրիչների արվեստը:
**Մշակույթ**-Ներկայացնի հանրահայտ մշակութային գործիչներին, արվեստագետներին և արժևորի նրանց ավանդը:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| | |
|---|---|
| **Թեմա 4** | **Կինոյի և թատրոնի երաժշտություն, երաժշտությունը լրատվամիջոցներում՝ գովազդներում, հեռուստահաղորդումներում, երաժշտությունը և համակարգիչը (14 ժամ)** |

**Նպատակներ**

- Թատրոնի և կինոյի երաժշտության ուսումնասիրում:
- Հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտության ուսումնասիրում:
- Դրանց նպատակի, միջոցների, բնույթի, կառուցվածքի մասին պատկերացումների ձևավորում:
- Դրանք կատարելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:
- Դրանց նկատմամբ քննադատական մտածողության և գնահատող վերաբերմունքի դրսևորում:
- Երաժշտության ունկնդրման և տարածման գործում նոր տեխնոլոգիաների դերի կարևորում:
- Բարձրորակ երաժշտական ձևավորումների արժևորում:

**Ուղղորդող հարցեր**

- Ի՞նչ նշանակություն ունի երաժշտությունը թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների համար:
- Հրապուրվու՞մ ես հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտությամբ:
- Կա՞ թատրոնի կամ կինոյի երաժշտություն, որը հաճախ կատարվում է համերգասրահներում:
- Ունե՞ս նախընտրած սաունդթրեքներ:

**Վերջնարդյունքներ**

- **Երգի** (մենակ կամ խմբով) երգեր և խմբերգեր կինոերաժշտությունից կամ թատրոնի երաժտությունից մաքուր ինտոնացիայով (նաև երկձայն), հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին:
- **Կատարի և ներկայացնի** բազմաձայն նվագակցություն ռիթմական նվագարաններով՝ օգտվելով նոր տեխնոլոգիաներից:
- **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը՝ որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:
- **Վերլուծի** թատրոնի և կինոյի երաժշտությունը, որոշի, թե ինչպես է երաժշտությունը նպաստում դրանց հիմնական գաղափարի բացահայտմանը և ո՛ր արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:
- **Ներկայացնի** նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նորությունների առաջացման և զարգացման գործընթացում, և **արժևորի** դրանց միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:

| •**Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը երաժշտական նոր ժանրերի, ոճերի, ուղղությունների առաջացման վրա: | | |
|---|---|---|
| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
| • Թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների, գովազդների երաժշտություն:<br>• Դրանց տեսաերիզների դիտում:<br>• Դրանց համերգային կատարումներ: | • Ունկնդրել կամ դիտել տեսանյութեր թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտություն:<br>• Կատարել, վերլուծել և մեկնաբանել դրանք:<br>• Կազմակերպել քննարկումներ, ցուցաբերել քննադատական վերաբերմունք:<br>• Արժևորել դրանց կարևորությունն արվեստի այդ տեսակների իմաստը, հիմնական գաղափարն ավելի տպավորիչ դարձնելու համար: | **Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողը, ուսումնասիրելով կինոյի և թատրոնի, լրատվամիջոցների, գովազդների, հեռուստահաղորդումների երաժշտությունը, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների մասին, անում է ինքնուրույն եզրահանգումներ:<br>Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր, որոնց ընթացքում փորձում է պատասխանել այն հարցին, թե ի՛նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքում:<br>Սովորողն արժևորում է մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունները, հասկանում է դրանց |

<table>
<tr><td></td><td></td><td>գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Գրականություն -Վերլուծի ուսուցանվող ստեղծագործությունների սցենարները և սյուժեները:<br>• Թատրոն -Վերլուծի թատերական երաժշտության դերն ու նշանակությունը, ընդգծի և ներկայացնի արվեստի տարբեր ճյուղերի նպատակների, սկզբնաղբյուրների ընդհանրությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:<br>• Կինո -Վերլուծել երաժշտության՝ սաունդթրեքի համապատասխանությունը կինոյի սցենարին:<br>• Մեդիաարտ –Վերլուծի և մեկնաբանի հեռուստածրագրերի, հաղորդումների, գովազդների երաժշտության գաղափարը, համապատասխանությունը հաղորդման թեմային, դրսևորել գնահատող վերաբերմունք:<br>Կերպարվեստ -Մեկնաբանի բեմական ձևավորումների դերն ու նշանակությունն արվեստի տվյալ ստեղծագործության մեջ::</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46</td></tr>
</table>

**7-րդ դասարան**

**Առաջարկվում է (34 ժամ)**

<table>
<tr><th colspan="2">Թեմա 1.<br>Հանրամատչելի երաժշտություն<br>Հայ ազգային երգեր և պարեր (16 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակներ<br>• Հանրամատչելի երաժշտության վերաբերյալ պատկերացումների ձևավորում:<br>• Ազգային պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման մասին գիտելիքների ձևավորում:<br>• Ծանոթացում ազգային երգու պարի նմուշների տարածաշրջանային պատկանելությանն ու խորհրդին, կատարման տեղին ու ժամանակին:<br>• Ազգային երգու պարի ուսուցման միջոցով սովորողների հայեցի դաստիարակության, ազգային ինքնության գիտակցության, ինքնաճանաչողության և հայ քաղաքացի դաստիարակելու գործի կարևորումը:<br>• Հայ ժողովրդական ավանդույթների, ավանդական մշակույթի նկատմամբ սիրո և հարգանքի դրսևորում:<br>• Թատերականացված գործողություններում ազգային ավանդական մշակույթի տեսակների շաղկապվածությունն ու ներդաշնակությունը հասկանալու հմտությունների ձևավորում:<br>• Հայ ազգային արվեստի ու ավանդույթների արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ նշանակություն ունի քեզ համար ազգային երգու պարը:<br>• Ծանո՞թ ես դրանց ծագումնաբանությանը, զարգացմանը:<br>• Ձեր ընտանեկան տոնախմբություններին ժամանակ կատարվու՞մ եք ազգային երգու պար:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ<br>• Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:<br>• Ուսումնասիրի ազգային երգու պարի ծագումնաբանությունը և զարգացումը հետազոտական կամ նախագծային աշխատանքներով:</td></tr>
</table>

• Ընտրի ազգային ռիթմական նվագարաններ և **ստեղծի** երաժշտառիթմական բազմաձայն նվագակցություն:
• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավոր, ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:
• **Բացատրի** երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները:
• **Արժևորի** երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց, կարևորի ազգային ավանդույթները:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևերը** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Դիդակտիկ նյութեր:<br>• Պարերի, երգերի, երաժշտության գրառումներ:<br>• Տեսահոլովակներ ազգային երգու պարի կատարումներով: | • Ուսումնասիրել ազգային երգու պարի ծագումնաբանությունը և զարգացումը:<br>• Դիտել համապատասխան տեսահոլովակներ:<br>• Սովորեցնել ազգային պարային տարրեր, ամբողջական պարեր և պարերգեր:<br>• Բեմադրել ժողովրդական ավանդույթներ և ծեսեր: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով հայ ազգային երգն ու պարը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել ազգային երգու պարի և երաժշտության միջոցով: Յամընկնո՞ւմ են իր և իր ընտանիքի, ընկերների նախասիրությունները ազգային երաժըշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր |

| | | |
|---|---|---|
| | | կյանքում: Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապեր**<br>• **Հայ գրականություն** - Ներկայացնի այն գրական ստեղծագործությունները, որոնցում առկա են ժողովրդական ծեսեր, ազգային ավանդույթներ:<br>• **Հայ բանագիտություն** - Մեկնաբանի ժողովրդական ավանդույթները ազգային երգ ու պարի համատեքստում:<br>• **Պարարվեստ** - Ուսումնասիրի ազգային երգերի ու պարերի փոխկապակցվածությունը:<br>• **Թատրոն** - Բեմադրի ազգային ավանդույթներից, ծեսերից հատվածներ, կազմակերպի տվյալ թեմայով դասարանական, դպրոցական կամ համայնքային միջոցառում:<br>• **Կերպարվեստ** - Ներկայացնի ազգային զարդանախշերը:<br>• **Տեխնոլոգիա** - Ներկայացնի տվյալ ժամանակաշրջանի ազգային տարազները խոհանոցը: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**<br>**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46** |

| **Թեմա 2.**<br>**Հայ աշուղական արվեստ (6 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
| • Ծանոթացնում հայ ազգային երաժշտության ճյուղերից մեկին՝ գուսանա-աշուղական երգարվեստին:<br>• Գիտելիքների ձևավորում միջնադարյան գուսանների և 17-18-րդ դարերում ստեղծված և մինչ այսօր զարգացում ապրող աշուղական արվեստի մասին: | • Ի՞նչ է հայ գուսանա-աշուղական երգարվեստը:<br>• Սիրո՞ւմ ես այս ժանրը, հաճա՞խ ես ունկնդրում, կամ կատարում:<br>• Կա՞ն այսօր աշուղներ, որոնց արվեստը սիրում և գնահատում են ձեր ընտանիքում:<br>• Ո՞ւմ ես նախընտրում: |

| | |
|---|---|
| • Աշուղական արվեստի հայ նշանավոր ներկայացուցիչների մասին գիտելիքների ձևավորում:<br>• Աշուղական երգերն ունկնդրելու ,ճանաչելու , գնահատելու և պատշաճ կատարելու հմտությունների ձևավորում:<br>• Հայ աշուղական արվեստի արժևորում: | |

**Վերջնարդյունքներ**

• **Ունկնդրի ,կատարի և արժևորի** հայ աշուղական արվեստի նմուշները:

• **Ուսումնասիրի** միջնադարյան գուսանների և 17-18-րդ դարերում ստեղծված և մինչև այսօր զարգացող ապրող հայկական աշուղական արվեստը և **ներկայացնի** հետազոտական կամ նախագծային աշխատանքներով:

• **Մեկնաբանի** հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:

• **Ընտրի** համապատասխան ռիթմական նվագարաններ և **ստեղծի** երաժշտառիթմական բազմաձայն նվագակցություն:

• **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը,արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ ,ակտիվորեն ներգրավվի քննարկումների,բանավեճերի մեջ:

• **Ցուցաբերի** պատշաճ վերաբերմունք՝ սեր և հետաքրքրություն հայ աշուղական արվեստի նկատմամբ:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Անհատներ և հարաբերություններ** |
|---|---|---|
| • Հայկական գուսանա-աշուղական արվեստ:<br>• Հայտնի աշուղների կյանքը և ստեղծագործական գործունեությունը:<br>• Աշուղական երգեր: | • Ուսումնասիրել հայկական գուսանա-աշուղական արվեստը:<br>• Ունկնդրել , վերլուծել ,գնահատել աշուղական արվեստը:<br>• Կատարել աշուղական հայտնի երգերը և | Ո՞վ եմ ես:Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով հայ աշուղական արվեստը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը,ինչ պիսի արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը,ինչ պիսի երաժշտական նախասիրություններ |

| | | |
|---|---|---|
| | մեկնաբանել իրենց կատարումները: | ունի, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել ազգային երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայ ժողովրդի պատմություն** - Ուսումնասիրի և ներկայացնի գուսանա-աշուղական արվեստի ծագումը և զարգացումը հայ միջնադարյան արվեստի պատմության համատեքստում:
- **Գրականություն** - Ուսումնասիրի Սայաթ-Նովայի գրական ստեղծագործությունները և համեմատի նրա երգերի հետ:
- **Կինո** - Դիտի «Սայաթ-Նովա» և «Նռան գույնը», ֆիլմերը, քննարկի և դրսևորի գնահատող վերաբերմունք:
- **Օպերա** - Դիտի հատվածներ Ալ. Հարությունյանի «Սայաթ Նովա» օպերայից:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| **Թեմա 3.**<br>**Ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստը (6 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
| • Ծանոթացում հայ ժամանակակից կոմպոզիտորների երգարվեստին:<br>• Ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքի ու ստեղծագործական գործունեության (երգարվեստի) մասին գիտել իքների ձևավորում: | • Ի՞նչ գիտես հայ ժամանակակից երգարվեստի մասին:<br>• Ճանաչո՞ւմ ես ժամանակակից կոմպոզիտորներին:<br>• Սիրո՞ւմ ես նրանց երգերը: |

<table>
<tr><td>• Հայ ժամանակակից երգարվեստի նմուշների կատարում և մեկնաբանում:<br>• Հայ ժամանակակից երգարվեստի գնահատում և արժևորում:</td><td colspan="2">• Ձեր ընտանիքում հաճա՞խ եք ունկնդրում այդ երգերը:<br>• Ո՞ւմ երգերն եք նախընտրում:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքները<br>• Կատարի ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:<br>• Ներկայացնի նույն երաժշտական գաղափարի մեկնաբանությունների առանձնահատկությունները տարբեր կոմպոզիտորների կողմից:<br>• Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, իսկ կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությունը՝ էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:<br>• Փորձի ստեղծել որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում՝ օգտվելով համակարգչային ծրագրերից և կատարի այն:<br>• Արժևորի երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց,արժևորի ազգային արվեստը:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<br>• Ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:<br>• Ժամանակակից հայ երգարվեստ:</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսումնասիրել ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:<br>• Ունկնդրել, վերլուծել ,մեկնաբանել կոմպոզիտորների երգերը:<br>• Կատարել և գնահատել ժամանակակից հայ</td><td>Ընդհանրական գաղափարներ<br><br>Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես:Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը,ինչպիսի արմատներ ունի, ինչ է իր համար ազգային ժամանակակից երաժշտությունը, ինչպիսի</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | կոմպոզիտորների երգերը: | երաժշտական նախասիրություններ ունի: Համընկնո՞ւմ են իր և իր ընտանիքի, ընկերների նախասիրություններն ազգային ժամանակակից երաժշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով,ի՞նչ դեր ունի այն իր կյանքում:Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

| |
|---|
| **Միջառակայական կապեր**<br>• **Գրականություն** -Ուսումնասիրի ժամանակակից հայ բանաստեղծների (երգերի բառերի հեղինակներ)պոեզիան:<br>• **Մշակույթ** -Ուսումնասիրի հայ ժամանակակից երգարվեստը ժամանակակից ազգային արվեստի համատեքստում:<br>• **Կերպարվեստ** -Համեմատի հայ ժամանակակից կերպարվեստի ստեղծագործությունները ժամանակակից երգարվեստի հետ,ցույց տաընդհանրական եզրերը: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Հ 2,Հ 26,Հ 29,Հ 30,Հ 31,Հ 32,Հ 35,Հ 42,Հ 43,Հ 44,Հ 45,Հ 46** |

**Թեմա 4.**
**Դասական հանրամատչելի երաժշտություն (6ժամ)**

<table>
<tr>
<td colspan="2">

**Նպատակներ**

- Դասական հանրամատչելի երաժշտության մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:
- Դասական հանրամատչելի ստեղծագործու-թյուններն ընկալելու, բնութագրելու, մեկնա-բանելու և իր նախասիրությունները ներ-կայացնելու հմտությունների ձևավորում և զարգացում:
- Գեղագիտական ճաշակի և սեփական կարծիքի ձևավորում, այլ կարծիքների վերաբերյալ հարգանքի դրսևորում:
- Դասական հանրամատչելի երաժշտության արժևորում:

</td>
<td>

**Ուղղորդող հարցեր**

- Քո կարծիքով կարո՞ղ է դասական երաժշտությունը հանրամատչելի լինել:
- Կա՞ն դասական ստեղծագործություններ, որոնք կարող ես անընդհատ ունկնդրել կամ կատարել:
- Ի՞նչ նախասիրություններ ունես, հիմնավորի:

</td>
</tr>
<tr>
<td colspan="3">

**Վերջնարդյունքներ**

- **Մեկնաբանի** դասական հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները:
- Իր անձնական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավորելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով:
- Դասական հանրամատչելի երաժշտության որևէ նմուշ **ներկայացնի** նոր տեխնոլո-գիաների միջոցով՝ օգտագործելով արվեստի մյուս ճյուղերի հնարավորու-թյունները:
- **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումներում, բանավեճերում, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի սեփական կարծիքը:
- **Բացատրի** երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները:
- Փոքրիկ շնորհանդեսով **ներկայացնի** տարվա ընթացքում համերգասրահների և թանգարանների այցելություններից ստացած տպավորությունները:

</td>
</tr>
<tr>
<td>

**Թեմայի բովանդակություն**

- Դասական հանրամատչելի երաժշտություն:

</td>
<td>

**Առաջարկվող գործունեության ձևեր**

- Ունկնդրել, կատարել, վերլուծել, մեկնաբանել դասական հանրամատչելի

</td>
<td>

**Ընդհանրական գաղափարներ**

**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**

Որտե՞ղ և ե՞րբ:

</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | երաժշտության նմուշները:<br>• Մեկնաբանել սեփական երաժշտական ճաշակը, ներկայացնել նախընտրած ստեղծագործությունների մասին շնորհանդեսներ:<br>• Մասնակցել տվյալ թեմայի մասին քննարկումներին, բանավեճերին, հարգել ուրիշների կարծիքը, հիմնավորել սեփական կարծիքը: | Սովորողները, ծանոթանալով դասական հանրամատչելի երաժշտության նմուշներին, բացահայտում են դրանց ստեղծման ժամանակաշրջանը, արժեքները, մշակույթը, հասկանում են, որ բարձրարժեք ստեղծագործությունները դիմանում են ժամանակի անողոք քննությանը և արդիական են բոլոր ժամանակներում: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի** - Ուսումնասիրի դասական հանրամատչելի գրական ստեղծագործությունները և նշի դրանց հիման վրա ստեղծված համանուն երաժշտական ստեղծագործությունները:
- **Օտար լեզուներ** - Ներկայացնի դասական հանրամատչելի օտարալեզու գրական ստեղծագործությունները, որոնք հետագայում երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների հիմք են դարձել:
- **Մշակույթ** - Ներկայացնի դասական և հանրամատչելի արվեստի նմուշներ:
- **Կերպարվեստ** - Ներկայացնի դասական կերպարվեստի ստեղծագործություններ, որոնք մատչելի և հասկանալի են բոլորի համար:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

**8-րդ դասարան**

**Առաջարկվում է (34 ժամ)**

<table>
<tr><th colspan="2">Թեմա 1.<br>Ժամանակակից երաժշտական ուղղություններն աշխարհում և Հայաստանում՝ ջազ, ռոք,, փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեպ (20 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակներ<br>• Ժամանակակից երաժշտական ուղղությունների մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Հայաստանում առկա ժամանակակից երաժշտական ուղղությունների, հայտնի կատարողների արվեստի մասին գիտելիքների ձևավորում:<br>• Սեփական երաժշտական ճաշակը ներկայացնելու և հիմնավորելու հմտությունների ձևավորում:<br>• Նախընտրած կոմպոզիտորի կամ կատարողի մասին հետազոտական կամ նախագծային աշխատանք կատարելու հմտությունների ձևավորում:<br>• Ժամանակակից երաժշտական արվեստի արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ է նշանակում ժամանակակից արվեստ:<br>• Ժամանակակից ի՞նչ երաժշտական ուղղություններ գիտես:<br>• Դրանցից ո՞րն ես նախընտրում և ինչու:<br>• Հաճախո՞ւմ ես համերգասրահներ նշված ոճերի համերգներ ունկնդրելու համար:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ<br>• Լսողությամբ ճանաչի երաժշտական նոր ուղղությունները, թվարկի հանրահայտ երաժիշտ կատարողների անունները:<br>• Կատարի ժամանակակից ոճով ստեղծագործող հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի նոր տեխնոլոգիաների հնարավորությունները:<br>• Վերլուծի երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի սեփական կարծիքը:<br>• Ուսումնասիրի XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները և ներկայացնի որևէ կոմպոզիտորի, կատարողի կամ համույթի ստեղծագործական գործունեությունը հետազոտական կամ նախագծային աշխատանքով:<br>• Արժևորի ժամանակակից երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց:</td></tr>
</table>

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Անհատներ և հարաբերություններ** |
|---|---|---|
| • Ժամանակակից երաժշտական ուղղությունները.Ջազ. առաջացումը և զարգացումը աշխարհում և Հայաստանում.<br>• Ռոք,փոփ,բլյուզ,ֆոլկ,ռեպ ուղղությունները և դրանց տեսակները աշխարհում և Հայաստանում: | • Ուսումնասիրել, ունկնդրել,կատարել, մեկնաբանել ժամանակակից երաժշտական ուղղությունները աշխարհում և Հայաստանում:<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր,ստեղծել պաստառներ,շնորհանդեսներ, նախագծային աշխատանքներ և այլն: | Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողը, ուսումնասիրելով XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների, երաժշտական ճաշակի մասին, անում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր,ստեղծում է պաստառներ, շնորհանդեսներ և այլն: Այս թեմայի ուսումնասիրության ընթացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին,թե ի՛նչ է ստեղծարարությունը, որոնք են դրա դերն ու նպատակը, կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքում:<br>Սովորողն արժևորում է բոլոր ժանրերի բարձրարժեք ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, |

| | | |
|---|---|---|
| | | սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապեր**<br>• **Հայ գրականություն** -Ներկայացնի ժամանակակից գրական ուղղությունները հայ գրականության մեջ և համեմատի երաժշտության հետ:<br>• **Կերպարվեստ**-Ներկայացնի ժամանակակից կերպարվեստի ուղղությունները և դրա ներկայացուցիչներին:<br>• **Մշակույթ** -Ներկայացնի արվեստի տարբեր ճյուղերի ժամանակակից ուղղությունները: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46** |

| **Թեմա 2.**<br>**Ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումները, ժողովրդական նվագարանների կիրառումը ժամանակակից երաժշտական արվեստում (4 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ժողովրդական և դասական ստեղծագործություն-ների ժամանակակից մշակումների մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Տվյալ մշակումներում ազգային նվագարանները և դրանց նորովի հնչողությունը ճանաչելու ,քննարկելու և գնահատելու հմտությունների ձևավորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ նպատակ ունեն ժողովրդական և դասական ստեղծագործու-թյունների ժամանակակից մշակումները:<br>• Ինչպե՞ս են հնչում ժողովրդական նվագարանները ժամանակակից նվա-գախմբերում:<br>• Ձեր ընտանիքում բոլորի՞ն են դուր գալիս նման մշակումները: |

| | |
|---|---|
| • Ժողովրդական երգերի ժամանակակից մշակումների կատարում, քննարկում և սեփական կարծիքի արտահայտում:<br>• Ժամանակակից մշակումների մասին հետազոտական կամ նախագծային աշխատանքների ներկայացում:<br>• Ժողովրդական և դասական ստեղծագործու-թյունների ժամանակակից մշակումների վերաբերյալ գնահատող և քննադատական վերաբերմունքի դրսևորում:<br>• Ժողովրդական և դասական ստեղծագործություն-ների բարձրորակ մշակումների արժևորում: | • Սիրո՞ւմ ես ժողովրդական և դասական ստեղծագործու-թյունների ժամանակակից մշակումները: |

**Վերջնարդյունքներ**

- Լսողությամբ **ճանաչի** տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործությունների ժամանակակից մշակումները, դրանցում առկա ազգային նվագարանների նորովի հն-չողությունը և մեկնաբանի դրանք:
- Փորձի ստեղծել որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում՝ օգտվելով համակարգչային ծրագրերից և կատարի այն:
- Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկա-յացնի** բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով:
- Ուսումնասիրի XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները և ներկայացնի որևէ կոմպոզիտորի կամ կատարողի ստեղծագործական գործունեությունը հետա-զոտական աշխատանքով:
- **Արժևորի** հայ ժամանակակից երաժշտությունը՝ որպես կյանքի և շրջակա միջա-վայրի գեղարվեստական արտացոլման միջոց:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևերը** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| •Ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումներ:<br>•Հայ ազգային նվագարանները ժամանակակից երաժշտական մշակումներում: | •Ուսումնասիրել տարբեր ժանրերի երաժշտության ժամանակակից մշակում-ները:<br>•Ունկնդրել ժողովրդական և դասական ստեղծագործու-թյունների ժամանակակից | **Անհատական և մշակութային արտա-հայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողներն այս թեմայով կազմակերպում |

| | | |
|---|---|---|
| •Տեսաֆիլմեր, համերգների հատվածներ: | մշակումները, կատարել դրանք և մեկնաբանել:<br>•Համեմատել ստեղծագործությունների մշակումները բնագրի հետ, նշել առավելություններն ու թերությունները: | են քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ, հայտնում են ինքնուրույն կարծիքներ տվյալ մշակումների վերաբերյալ: Ուսումնասիրում են այն ուղիները, միջոցները, որոնցով բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Կինո** - Ուսումնասիրի միևնույն սցենարով նոր ֆիլմերի նկարահանումները, հին ֆիլմերի թվայնացումները և մեկնաբանի դրանց առավելությունները կամ թերությունները:
- Թատրոն - Դիտի տարբեր գրական ստեղծագործությունների նորովի բեմադրությունները և քննարկի:
- Գրականություն - Ուսումնասիրի տարբեր գրական ժանրերի նորովի մատուցումները:
- Կերպարվեստ - Ներկայացնի տարբեր գրական ստեղծագործությունների նոր նկարազարդումներ, ձևավորումներ:
- Օպերայի, բալետի ժամանակակից բեմադրություններ, նորովի մեկնաբանություններ:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| Թեմա 3. | Աշխարհահռչակ կատարողներ և մրցանակաբաշխություններ (4 ժամ) |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Հայ և այլ ազգի աշխարհահռչակ կատարողների և փառատոների, մրցանակաբաշխությունների մասին գիտելիքների ձևավորում:<br>• Հայտնի երաժիշտ կատարողների, անսամբլների, մրցանակաբաշխությունների, դրանց ստեղծման պատմության, գործունեության և նպատակների ներկայացում շնորհանդեսներով, հետազոտական կամ նախագծային աշխատանքներով:<br>• Ծանոթացում այսօր Հայաստանում և աշխարհում գործող մի քանի հայտնի մրցանակաբաշխությունների ու դրանց հաղթողներին:<br>• Երաժշտական բոլոր ժանրերի բարձրակարգ կատարումների արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ծանո՞թ ես աշխարհի հայտնի երաժիշտ կատարողներին:<br>• Կարո՞ղ ես նշել նրանց անունները:<br>• Գիտե՞ս հայ երաժիշտ կատարողների, որոնց, քո կարծիքով, ճանաչում են աշխարհում:<br>• Աշխարհում կամ Հայաստանում հայտնի ի՞նչ մրցանակաբաշխությունների կամ փառատոների ես հետևում: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Թվարկի** ժամանակակից տարբեր հեղինակների, երաժիշտ կատարողների, մրցույթների, փառատոների երաժշտական ոճի առանձնահատկությունները:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավոր ելույթների, էսսեների, շնորհանդեսների, հետազոտական կամ նախագծային աշխատանքների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի նոր տեխնոլոգիաների հնարավորությունները:<br>• **Իրականացնի** իսեփական ստեղծագործական գաղափարները, պատրաստվի և ներկայացնի բանավոր ելույթների միջոցով՝ օգտագործելով համացանցի հնարավորությունները:<br>• **Բացատրի** երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները, նախընտրած կատարողներին: | |

• **Արժևորի** աշխարհահռչակ հայ և օտարազգի երաժիշտ կատարողների արվեստը:

| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** |
|---|---|---|
| • Հայ և այլ ազգի հանրահայտ երաժիշտ կատարողներ, նվագախմբեր, դրանց մասին տեղեկություններ:<br>• Հայաստանում և աշխարհում հայտնի մրցանակաբաշխություններ: | • Ունկնդրել հայ և այլ ազգի հայտնի երաժիշտների կատարումներ:<br>• Քննարկել, վերլուծել և համեմատել մյուս կատարողների հետ:<br>• Դիտել հայտնի մրցանակաբաշխությունների հատվածներ:<br>• Շնորհանդեսով կամ զեկույցով ներկայացնել սիրած կատարողին, նվագախումբը և մեկնաբանել: | Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, ծանոթանալով համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների ստեղծագործական գործունեությանը, բացահայտում են նրանց ապրած ժամանակաշրջանը, կենցաղը, արժևորում են նրանց՝ որպես մարդ-անհատի, մարդկային ամենաբարձր արժանիքներ կրողների բարոյական կերպարը: |

**Միջառարկայական կապեր**

• **Գրականություն** - Ուսումնասիրի և ներկայացնի հայտնի գրողներին, ասմունքողներին և գրականության բնագավառում հայտնի մրցանակաբաշխությունները:

• **Թատրոն** - Ուսումնասիրի և ներկայացնի հայտնի դերասաններին, բեմադրիչներին և թատերական մի քանի մրցույթներ. մնջախաղի մրցույթ, մոնոներկայացման մրցույթ և այլն:

**Կինո** - Ուսումնասիրի և ներկայացնի փոքրիկ տեսաֆիլմ «Ոսկե ծիրանի», «Օսկարի» կամ այլ մրցանակաբաշխությունների մասին:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**

**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

## Թեմա 4.
## Հեղինակային և քաղաքային երգեր (6 ժամ)

| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
|---|---|
| • Ծանոթացում հեղինակային և քաղաքային երգի ժանրերին: | • Ի՞նչ ես հասկանում՝ հեղինակային կամ քաղաքային երգ ասելով: |

| | |
|---|---|
| Այդ ժանրերում ստեղծագործող երաժիշտների և նրանց գործունեության մասին գիտելիքների ձևավորում:<br>• Հեղինակային երգը որպես սոցիալական երևույթ ընկալելու, սեփական տեսակետը հայտնելու, քննարկումներում և բանավեճերում ակտիվորեն մասնակցելու հմտությունների ձևավորում:<br>• Այդ ժանրերի նախասիրած երգերի ներկայացում:<br>• Ժամանակակից հեղինակ կատարողների արվեստի արժևորում: | • Ճանաչու՞մ ես այդ ժանրերի հայ կատարողներին:<br>• Ո՞ր հեղինակի երգերն ու կատարումներն ես սիրում:<br>• Ձեր ընտանիքում հաճա՞խ են լսում նրանց կատարումները: |

**Վերջնարդյունքներ**

- Լսողությամբ **ճանաչի** հեղինակային և քաղաքային երգերը, բացատրի դրանց առանձնահատկությունները:
- **Կատարի** հայ և արտասահմանցի կոմպոզիտորների հեղինակային և քաղաքային ոճի երգերը:
- **Մեկնաբանի** հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները, **թվարկի** ժամանակակից տարբեր հեղինակների, երաժիշտ կատարողների իր նախընտրած ստեղծագործությունները:
- Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի նոր տեխնոլոգիաների հնարավորությունները:
- **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումներում, բանավեճերում, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի սեփական կարծիքը:
- Արժևորի ժամանակակից հեղինակ կատարողների արվեստը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Հեղինակային և քաղաքային ոճերի երգերի կատարողները և նրանց ստեղծագործական գործունեությունը: | • Ուսումնասիրել հեղինակային և քաղաքային երգի երաժիշտների ստեղծագործական գործունեությունը:<br>• Ներկայացնել հեղինակային երգը՝ որպես սոցիալական երևույթ: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները ներգրավվում են այս թեմայով ակտիվ քննարկումներում և բանավե- |

| | | |
|---|---|---|
| • Հեղինակային և քաղաքային ոճերի երգերի տարբեր կատարումներ: | • Ունկնդրել, մեկնաբանել և կատարել նշված ոճերի երգերը:<br>• Դիտել համերգների հատվածներ:<br>• Պատրաստել շնորհանդեսներ, զեկույցներ և այլ հետազոտական աշխատանքներ: | ճերում, հայտնում են ինքնուրույն կարծիքներ, հարգում են ուրիշների կարծիքը, հիմնավորում սեփական կարծիքը: Ուսումնասիրում են այն ուղիները, միջոցները, որոնցով բացահայտում և արտահայտում են իրենց գաղափարները, համոզմունքները, նախասիրությունները, երաժշտական ճաշակը, արժեքները, արժևորում են ստեղծարարությունը և ներդաշնակությունը: |
| **Միջառարկայական կապեր**<br>• **Գրականություն** - Ուսումնասիրի հեղինակային և քաղաքային երգերի գրական տեքստերը, վերլուծի և մեկնաբանի դրանց բովանդակությունը:<br>• **Մշակույթ** - Վերլուծի և մեկնաբանի ազգային և քաղաքային արվեստի ընդհանրություններն ու առանձնահատկությունները: | | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46** | | |

**9-րդ դասարան**

**Առաջարկվում է (34 ժամ)**

| **Թեմա 1. Երաժշտությունը՝ որպես կյանքի գեղարվեստական արտացոլման միջոց (34 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Երաժշտության ազդեցությունը մարդու վրա և նրա դերը հասարակական կյանքում | **Ուղղորդող հարցեր** |

| | |
|---|---|
| բացահայտելու և մեկնաբանելու հմտությունների ձևավորում:<br>• Երաժշտական արվեստը որպես գեղեցկության և ներդաշնակության մարմնավորում ներկա-յացնելու, մեկնաբանելու և հիմնավորելու հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտական ստեղծագործությունների (որոնք մեծ ազդեցություն են ունեցել հասարակական տարբեր իրավիճակներում) ներկայացում և մեկնաբանում:<br>• Կյանքում և առօրյայում երաժշտության կարևո-րության գիտակցում և արժևորում: | • Ի՞նչ նշանակություն ունի երաժշտությունը մարդու և հասարակության կյանքում:<br>• Երաժշտությունը կարո՞ղ է միավորել կամ վերափոխել մարդուն:<br>• Հնարավո՞ր է կյանքը պատկերացնել առանց երաժշտության: |

**Վերջնարդյունքներ**

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) երաժշտության և կյանքի կապը ներկայացնող ուսումնասիրություն, նախագիծ կամ հետազոտական աշխատանք:
- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ազգային և համաշխարհային երաժշտական ստեղծագործություններով՝ համադրելով տարբեր ոճերի երաժշտական կերպար-ների առանձնահատկությունները:
- **Մեկնաբանի** և ներկայացնի մարդու, հասարակության կյանքում երաժշտության դերի կարևորությունը՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթ-ներ:
- **Բնութագրի, վերլուծի** այն ոճերի և ուղղությունների երաժշտական ստեղծագործությունները, որոնք իր կարծիքով մեծ ազդեցություն են ունենում հասարակական տարբեր իրավիճակներում, մեկնաբանի պատճառահետևանքային կապը, սեփական զգացողություններն արտահայտի զեկույցներով, շնորհանդես-ներով և այլ միջոցներով:
- **Բացատրի**, թե ինչ դեր ունի երաժշտությունը մարդկության կյանքում պատմական կարևոր իրադարձությունների ընթացքում:
- **Արժևորի** երաժշտությունը որպես կյանքի գեղարվեստական արտացոլում:

| **Թեմային բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևերը** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տարբեր ոճերի և ուղղությունների | • Ներկայացնել երաժշտու-թյան դերը մարդու կյան-քում անհատական կամ | **Պատճառ և հետևանք** |

<table>
<tr>
<td>երաժշտական ստեղծա-գործություններ:<br>• Հատվածներ համերգներից և երաժշտական ներկայացումներից, կինոնկարներից:</td>
<td>խմբային զեկու-ցումներով, պաստառներով, շնորհանդեսներով:<br>• Ունկնդրել, կատարել, մեկնաբանել և հիմնավո-րել տարբեր ոճերի և ուղղությունների երաժշ-տության նմուշներ:<br>• Ներկայացնել սեփական երաժշտական ճաշակը:<br>• Այցելել համերգասրահներ և թատրոններ:</td>
<td>Բնության մեջ, մարդկանց, ազգերի հարաբերություն-ներում, գեղարվեստական երկերում, երաժշտական ստեղ-ծագործություններում մշտապես կարելի է հանդիպել պատճառահետևանքային կապերի. օրինակ՝ մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների ժամանակ ստեղծված երաժշտական ստեղծագործությունն ունենում է այդ գաղափարին համապատասխան արտահայտչամի-ջոցներ՝ բնույթ, տեմպ, դինամիկա, ռիթմ, ձև, կա-ռուցվածք և այլն:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Գրականություն - Գրագետ կապակցված խոսքով վերլուծի երաժշտության և կյանքի կապը:<br>• Կերպարվեստ - Ներկայացնի կերպարվեստի ստեղծագործությունների և կյանքի կապը:<br>• Մշակույթ - Մեկնաբանի մշակույթի հոգևոր և նյութական արժեքների և կյանքի կապը:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ<br>Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46</td>
</tr>
</table>

<table>
<tr>
<td colspan="2">Ենթաթեմա 1. Իմ երաժշտական ճաշակը և երաժշտական միջավայրը</td>
</tr>
<tr>
<td>Նպատակներ<br>•Ժամանակակից երաժշտական միջավայրի բազմազա-նության մասին պատկերացումների ձևավորում:<br>•Սեփական երաժշտական ճաշակը որպես միջավայրի ազդեցության արդյունք նկարագրելու և</td>
<td>Ուղղորդող հարցեր<br>•Հետաքրքրո՞ւմ է քեզ քո երաժշտական միջավայրը:<br>•Հաճա՞խ ես ստիպված լինում ունկնդրել անորակ երգեր:</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| մեկնաբանելու հմտությունների ձևավորում և զարգացում:<br>•Սեփական կարծիք հայտնելու, հիմնավորելու, այլ կարծիքներ լսելու, քննարկելու և հարգելու հմտությունների դրսևորելում:<br>•Իր երաժշտական նախասիրությունների կամ տար-վա ընթացքում այցելած համերգների և թանգարան-ների հայտագրերի ու տպավորությունների ներկայացում շնորհանդեսով:<br>•Իր կյանքում երաժշտության դերի և նշանակության արժևորում: | •Քո երաժշտական ճաշակը կրո՞ւմ է միջավայրի ազդեցությունը:<br>•Ինչ պիսի՞ երաժշտություն է քեզ պետք:<br>•Ունե՞ս նախընտրած ոճեր:<br>•Ո՞ր երգերն ես հաճախ ունկնդրում, կատարում, կապ ունե՞ն դրանք քո հոգեվիճակի, տրամադրության հետ:<br>•Կարո՞ղ ես ապրել առանց երաժշտության:<br>•Այցելո՞ւմ ես համերգասրահներ: |

**Վերջնարդյունքներ**

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) «Իմ երաժշտական ճաշակը և երաժշտական միջավայրը» թեմայով զեկուցում կամ ելույթ՝ օգտվելով նոր տեխնոլոգիաներից:
- **Յաղորդակցվի և ինքնարտահայտվի** ազգային և համաշխարհային երաժշտական ստեղծագործությունների նմուշներով:
- **Կիրառի** իր ստեղծագործական ունակություններն ու հմտությունները երաժշտության դասերից դուրս:
- **Ներկայացնի, մեկնաբանի** և հիմնավորի սեփական կարծիքը, իր տպավորություն-ներն ու զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով համացանցի բազմաթիվ հնարավորությունները:
- **Կատարել ագործի** իր ճանաչողական և հաղորդակցական հնարավորությունները, իրականացնի սեփական ստեղծագործական գաղափարները, պատրաստվի և հանդես գա թեմատիկ զեկուցումներով, ընտրի համացանցի կրթական-տեղեկատվական հարթակից իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը (ճշտի դրանց հավաստիությունը), մշակի, վերլուծի, և ներկայացնի նյութեր ստեղծագործական նախագծերի համար:
- **Արժևորի** երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթում և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները, նախընտրած կատարողներին, փոքրիկ շնորհանդեսով ներկայացնի տարվա ընթացքում այցելած համերգների և թանգարանների հայտագրերը և ստացած տպավորությունները:

<table>
<tr>
<td>Թեմայի բովանդակությունը<br>• Ժամանակակից երաժշտական կամ հնչյունային միջավայրի բազմաձայնությունը:<br>• Երաժշտական ագրեսիա:<br>• Բանավեճեր, քննարկումներ, ներկայացումներ, կատարումներ:</td>
<td>Առաջարկվող գործունեության ձևերը<br>• Խմբային քննարկումներ, բանավեճեր՝<br>-«Ի՞նչ է նշանակում բարձրակարգ երաժշտություն և ինչ է ռաբիսը»,<br>-«Ինչպե՞ս կարող է մարդը դիմակայել այսօրվա երաժշտական ագրեսիային»:<br>• Ներկայացնել շնորհանդեսներ սիրած երաժշտական ժանրերի մասին:</td>
<td>Ընդհանրական գաղափարներ Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես:Ո՞վ ենք մենք: Յաղորդակցվելով տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտության՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի: Յամընկնո՞ւմ են իր և միջավայրի երաժշտական ճաշակները, հարմարվո՞ւմ է միջավայրի թելադրած կանոններին, թե՞ իրենն է առաջարկում: Ինչպե՞ս է կարողանում իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում,կենցաղում,կարո՞ղ է ապրել առանց երաժշտության:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Յասարակագիտություն - Ներկայացնի հասարակական միջավայրի ազդեցությունը մարդու գեղագիտական ճաշակի ձևավորման և զարգացման վրա:<br>• Յայ գրականություն - Ներկայացնի սեփական նախասիրությունները գրականության ասպարեզում:<br>• Մշակույթ-Ներկայացնի նախասիրած մշակութային հուշարձանները:<br>• Կինո - Ներկայացնի սիրած կինոֆիլմերը և դրանց ազդեցությունն իր գեղագիտական ճաշակի վրա:<br>• Կերպարվեստ - Ներկայացնիլ կերպարվեստի նախընտրած ստեղծագործությունները:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Կապը Յանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ<br>Յ 2,Յ 26,Յ 29,Յ 30,Յ 31,Յ 32,Յ 35,Յ 42,Յ 43,Յ 44,Յ 45,Յ 46</td>
</tr>
</table>

**Ենթաթեմա 2. «Երբ արվեստը ներկայացնում է քեզ և հասարակությունը». դարերի ընթացքում փոփոխվող երաժշտություն (8 ժամ)**

(Ինչպիսի՞ երաժշտություն է մեզ պետք, «Նորաձևությունը» և ավանդույթները երաժշտության մեջ)

**Նպատակները**

- Արվեստի (նաև սիրողական) բնագավառում սեփական գեղարվեստական գործունեության կարևորության գիտակցում, դասերից դուրս երաժշտական գործունեության ծավալում:
- Հասարակական վայրերում հնչող երաժշտության նկատմամբ քննադատական վերաբերմունքի դրսևորում, այդ գործընթացներում իր գեղարվեստական գործունեության կարևորում:
- Երաժշտական գործունեության տարբեր ձևերին (երգչախումբ, երաժշտական այլ համույթներ) մասնակցելու ձգտում, տնային համերգների կազմակերպում՝ որպես ընտանիքի, բարեկամների հոգեկան միասնության մարմնավորում:
- Մասնակցություն դպրոցում, համայնքում և սեփական միջավայրի մշակութային օջախներում գրական, երաժշտական, թատերական և այլ գեղարվես- տական միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներին:
- «Նորաձևությունը» և ավանդույթները երաժշտության մեջ» նախագծային աշխատանքի ներկայացում և խմբային գործունեության արժեքի գիտակցում:
- Սովորողի ստեղծագործական գաղափարների, մտահղացումների արդյունքում ելույթով հանդես գալու, իր մտքերն անկաշկանդ հաղորդելու և իր կարծիքը հիմնավորելու հմտության արժևորում:

**Ուղղորդող հարցեր**

- Ի՞նչ է նշանակում «արվեստը ներկայացնում է քեզ և հասարակությունը»:
- Ինչպիսի՞ երաժշտություն է մեզ պետք:
- Կարո՞ղ է երաժշտությունը «նորաձև»լինել:
- Կազմակերպո՞ւմ եք արտադասարանական և արտա- դպրոցական միջոցառումներ կամ տնային համերգներ: Ինչպե՞ս:

**Վերջնարդյունքներ**

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) հայ կամ եվրոպական երաժշտությանը նվիրված միջոցառման նյութ կամ սցենար:

<table>
<tr><td colspan="3">

- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** տարբեր ժանրերի և ուղղությունների երաժշտական ստեղծագործությունների միջոցով՝ համադրելով երաժշտական կերպարների առանձնահատկությունները:
- **Վերլուծի** տարբեր ժամանակաշրջանի և ոճերի արվեստի գործերը և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը:
- **Հասկանա և գնահատի** անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ, **բացատրի** զարգացման միտումները:
- **Գիտակցի** խմբային գործունեության արժեքն ինքնարտահայտման, մտորումների, քննարկումների, ունկնդրման և կատարման գործընթացում:
- **Բացատրի**, թե ինչ դեր ունի երաժշտությունն իր կյանքում և արժևորի սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը՝ որպես իր կյանքի անքակտելի մաս:
- **Դրսևորի** իր վերաբերմունքը հասարակական երաժշտական երևույթների նկատմամբ, կարևորի իր գեղարվեստական գործունեությունն այդ գործընթացներում, ցուցաբերի քննադատական վերաբերմունք:

</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Քննարկումներ, բանավեճեր, ներկայացումներ, ելույթներ:<br>• Բազմաբնույթ և բազմատեսակ երաժշտական ստեղծագործություններ:</td><td>Առաջարկվող գործունեության ձևերը<br>• Խմբային քննարկումներ՝<br>-«Սիրողական երգեցողությունը՝ որպես մարդու ինքնարտահայտման ձև» (երաժշտական նյութը՝ երեխաների ընտրությամբ),<br>-«Իմ դպրոցական երաժշտական համույթը»,<br>-«Արտադասարանական միջոցառումների նշանակությունը դպրոցի երաժշտական կյանքում և դրանց</td><td>Ընդհանրական գաղափարներ<br><br>Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Հաղորդակցվելով տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտության՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի: Համընկնո՞ւմ են իր և ընկերների նախասիրությունները, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտական գործունեության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում, կենցաղում, կարո՞ղ է ապրել առանց երաժշտության:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | ազդեցությունը սովո-րողի ինքնուրույնության և գեղագիտական ճաշակի զարգացման վրա»: | **Անհատական և մշակութային ինքնարտահայտում** Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողներն այս թեմայով ներ-գրավվում են ակտիվ քննարկումներում և բանավե-ճերում, հայտնում են ինքնու-րույն կարծիքներ, հարգում են ու-րիշների կարծիքը, հիմնավորում սեփական կարծիքը: Ուսումնասիրում են այն ուղիները, միջոցները, որոնցով բացահայտում և արտահայտում են իրենց գաղափարները, համոզ-մունքները, նախասի-րությունները, երաժշտական ճաշակը, արժեքները, արժևորում են գեղագիտությունը և ստեղծա-րարությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայոց լեզու և գրականություն** - Քննարկումների և բանավեճերի ընթացքում գրագետ և կապակցված խոսքով ներկայացնի իր մտքերը, մտածողության ձևերը, տրամաբանությունը, մոտեցումները, կարծիքը և այլն:
- **Հասարակագիտություն** - Զարգացնել սովորողների հաղորդակցման և սոցիալական շփման կարողությունները, նպաստել խմբային աշխատանքների արդյունքի կայացմանը, կրել դրանց պատասխանատվությունը, դրսևորվել որպես համագործակցող, հանդուրժող, ապրումակցող:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46**

| **Ենթաթեմա 3. Իմ սիրած համերգասրահները, թատրոնները և թանգարանները (10 ժամ) չորս** | |
|---|---|
| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |

| | |
|---|---|
| • Երևանի և մարզերի համերգասրահների, թատրոնների և թանգարանների մասին գիտելիքների ձևավորում:<br>• Նշված մշակութային օջախներն այցելելու պահանջի և դրանց նկատմամբ հատուկ վերաբերմունքի՝ հետաքրքրասիրության դսևորում:<br>• Ծանոթացում (նաև առցանց) համաշխարհային և հայտնի մշակութային օջախների:<br>• Թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցություն և ակտիվ մասնակցություն:<br>• Սովորողների գեղագիտական դաստիարակության և ճաշակի ձևավորման վրա դրանց ազդեցության կարևորում:<br>• Մշակութային օջախներում համապատասխան վարքագծի դրսևորում:<br>• Երաժշտական արվեստի զարգացման և տարածման գործընթացում հայրենի մշակութային օջախների գործունեության դերի արժևորում: | Հաճա՞խ ես այցելում համերգասրահներ, թատրոններ,թանգարաններ: Ներկաեղե՞լ ես որևէ համերգի,եթե այո,ի՞նչ տպավորություն ես ստացել: Ի՞նչ ոճեր ես նախընտրում: Ո՞ր մշակութային օջախներն են քեզ հետաքրքրում: |

**Վերջնարդյունքներ**

- **Ներկայացնի և մեկնաբանի** տարբեր մշակութային օջախներ այցելելու շարժառիթը, նպատակը, իր տպավորություններն ու զգացողություններն առանձին զեկույցով, շնորհանդեսով կամ հետազոտությամբ՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:
- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտության միջոցով՝ մեկնաբանելով երաժշտական կերպարների յուրահատկությունը:
- **Վերլուծի** տարբեր ժամանակաշրջանների և ոճերի արվեստի գործերը և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը:
- **Հասկանա և գնահատի** անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ, **բացատրի** զարգացման միտումները:
- **Բացատրի**, թե ինչ դեր ունի երաժշտությունը իր կյանքում և **արժևորի** սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը որպես իր կյանքի անքակտելի մաս: Գնահատի բարձրարվեստ կենդանի կատարումները և հաճախակի այցելի համերգասրահներ և թատրոններ:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| •Հայկական և համաշխարհային հռչակ ունեցող թանգարաններ, համերգասրահներ, թատրոններ:<br>•Քննարկումներ, զեկուցումներ, շնորհանդեսներ դրանց գործունեության և կրթական ծրագրերի մասին: | • Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգների հատվածներ:<br>• Այցելել հայկական և առցանց աշխարհի հանրահայտ թանգարանները:<br>• Մասնակցել թանգարանների կրթական ծրագրերին:<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել տարբեր ոճերի և ուղղությունների ստեղծագործություններ:<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ:<br>• Ներկայացնել մշակութային օջախների կարևորությունը մարդու աշխարհայացքի և գեղագիտական ճաշակի զարգացման գործընթացում: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, այցելելով տարբեր մշակութային օջախներ, ուսումնասիրում են հայտնի և ճանաչված մարդկանց կյանքը, կենցաղը, նրանց պատմությունները, ստեղծագործական գործունեությունը, մարդկության պատմության շրջադարձային ժամանակահատվածները, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից և արժևորում են նրանց արվեստը մարդկության պատմության զարգացման համատեքստում: Այցելելով համերգասրահներ՝ դրսևորում են համապատասխան վարքագիծ: |

**Միջառարկայական կապեր**

- **Գրականություն** -Ազատ զրուցի հայերեն իրեն հետաքրքրող թեմաների մասին, կազմի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ իրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման միջոցներ, գրագետ և կապակցված խոսքով ներկայացնի

| |
|---|
| մշակութային օջախներ այցելությունների տպավորությունները և արդյունքները:<br>• **Հասարակագիտություն** - Այցելությունների ընթացքում դրսևորի համապատասխան վարքագիծ և պահվածք:<br>• **Համաշխարհային պատմություն** - Պատմությունից ձեռք բերած գիտելիքներն օգտագործի տվյալ մշակութային գործչի ապրած պատմական ժամանակահատվածի վերլուծության համար: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Հ 2, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46** |

## Միջնակարգ (ավագ) դպրոց
## 10-րդ դասարան

### Առաջարկվում է (34 ժամ)

<table>
<tr><th colspan="2">Թեմա 1.<br>Հայ հոգևոր երաժշտության ծնունդը: Շարականներ, տաղեր, գանձեր<br>Ենթաթեմա 1. Հայկական երաժշտության զարգացումը VIII-XV դդ. (6 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակներ<br>•Ծանոթացում հայ հոգևոր երաժշտության պատմությանը:<br>•Հոգևոր երաժշտության վերաբերյալ գիտելիքների ընդլայնում:<br>•Հայ հոգևոր երաժշտության և նրա երախտավորների մասին հետազոտական կամ նախագծային աշխատանքի ներկայացում:<br>•Հայ հոգևոր երաժշտությունն ընկալելու, վերլուծելու, կատարելու և մեկնաբանելու հմտությունների զարգացում:<br>•Հայ հոգևոր երաժշտության արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>•Ի՞նչ ես հասկանում՝ հոգևոր երաժշտություն ասելով:<br>•Ծանո՞թ ես այդ ժանրին:<br>•Այցելո՞ւմ ես եկեղեցի, ի՞նչ ես զգում այդ պահին:<br>•Երբևէ ներկա եղե՞լ ես Պատարագի արարողությանը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ<br>•Ստեղծի (մենակ կամ խմբով) հայ հոգևոր երաժշտությանը նվիրված ուսումնասիրություն կամ հետազոտական աշխատանք:<br>•Հաղորդակցվի և ինքնարտահայտվի հայ և այլ ազգերի հոգևոր երաժշտության միջոցով՝ համադրելով երաժշտական կերպարների առանձնահատկությունները:<br>•Երգի (մենակ կամ խմբով) հայ հոգևոր երաժշտության նմուշներ, նաև երկձայն, հստակ առոգանությամբ, ներշնչանքով, արտահայտիչ, զարգացնելով մեղեդային գիծը:<br>•Ընկալի և մեկնաբանի հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:<br>•Բացատրի, թե ինչ դեր ունի երաժշտությունն իր կյանքում, և արժևորի սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը որպես իր կյանքի անքակտելի մաս:</td></tr>
</table>

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ**<br>**Անհատներ և հարաբերություններ** |
|---|---|---|
| •Հայ հոգևոր երաժշտության ձևավորումը և զարգացումը IV-V և XIV-XV դդ.<br>•Հայ հոգևոր երաժշտություն՝ շարականներ, տաղեր, գանձեր:<br>•Հայ հոգևոր երաժշտությունը XIX-XX դդ. | •Ուսումնասիրել հայ հոգևոր երաժշտության պատմությունը:<br>•Ունկնդրել, կատարել, մեկնաբանել հայ հոգևոր երգարվեստի նմուշները և հատվածներ Սուրբ Պատարագից:<br>•Ներկայացնել թեմատիկ զեկույցներ, անհատական կամ խմբային հետազոտություններ և այլն:<br>•Այցելել եկեղեցի, մասնակցել Ս. Պատարագի արարողությանը: | Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Ուսումնասիրելով հայ հոգևոր մշակույթը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչ է իր համար հոգևոր երաժշտությունը, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի,** որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

• **Գրականություն** -Ուսումնասիրի հայ հոգևոր երգերի գրական հիմքերը և մեկնաբանի նրանց գաղափարը գրագետ և կապակցված խոսքով:

• **Կերպարվեստ**-Ուսումնասիրի հայ հոգևոր մանրանկարչությունը, զարդարվեստը, ճարտարապետությունը և համեմատի հայ հոգևոր երգերի հետ:

• **Հայոց պատմություն** -Ուսումնասիրի և մեկնաբանի տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմության կարևոր իրադարձությունները:

• **Մշակույթ** –Ուսումնասիրի հայ միջնադարյան հոգևոր արվեստը:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**

**Մ 1, Մ 17, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:**

## Թեմա 2. Հայ գուսանա-աշուղական արվեստի ծնունդը (4ժամ)

| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
| --- | --- |
| • Հայ գուսանա-աշուղական արվեստի ձևավորման և զար-գացման պատմության վերաբերյալ գիտելիքների ընդլայնում:<br>• Հայ գուսանա-աշուղական արվեստին նվիրված հետազոտական կամ նախագծային աշխատանքի ներկայացում:<br>• Գուսանա-աշուղական արվեստի նմուշներն ունկնդրելու, վերլուծելու, կատարելու և մեկնաբա-նելու հմտություններ:<br>• Հայ արվեստի այդ տեսակի նկատմամբ հատուկ վերաբեր-մունքի՝ հետաքրքրասիրության դրսևորում:<br>• Գուսանա-աշուղական արվեստի զարգացման և տարածման գործում աշուղների նվագակցող հայկական ազգային նվագարանների դերի արժևորում: | • Հետաքրքրո՞ւմ է քեզ գուսանա-աշուղական երգարվեստը:<br>• Ունե՞ս նախընտրած աշուղներ:<br>• Ո՞ր երգերն ես հաճախ ունկնդրում և կատարում: |

**Վերջնարդյունքներ**

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) հայ գուսանա-աշուղական երաժշտությանը նվիրված ուսումնասիրություն կամ հետազոտություն:
- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** հայ գուսանա-աշուղական երաժշտության միջոցով:
- Ընկալի աշուղական երգերը, դրանց արտահայտչամիջոցները՝ մեղեդին, ռիթմը, տեմպը, դինամիկան և ներկայացման ձևը:
- **Երգի** (մենակ կամ խմբով) աշուղական երգերը հստակ առոգանությամբ, ներշնչանքով, արտահայտիչ, զարգացնելով մեղեդային գիծը, հասկանալով խոսքերի իմաստը:
- **Կիրառի** իր ստեղծագործական ունակություններն ու հմտությունները երաժշտության դասերից դուրս:
- **Մեկնաբանի** հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:

- **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումների, բանավեճերի մեջ:
- **Արժևորի** հայ ազգային երգարվեստը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Անհատներ և հարաբերություններ** |
|---|---|---|
| • Հայ գուսանա-աշուղական արվեստի ձևավորման և զարգացման պատմությունը:<br>• Հայ աշուղական երգեր և մեղեդիներ: | • Ուսումնասիրել հայ գուսանա-աշուղական արվեստի ձևավորման և զարգացման պատմությունը:<br>• Ունկնդրել, կատարել, վերլուծել աշուղական երգերի իմաստը, հիմնական գաղափարը:<br>• Ծանոթանալ նրանց նվագակցող հայկական ազգային նվագարաններին:<br>• Ներկայացնել հետազոտություններ, շնորհանդեսներ զեկուցումներ և այլն: | Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Ուսումնասիրելով հայ աշուղական արվեստը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել ազգային երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայ ժողովրդի պատմություն** - Ուսումնասիրի տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմության կարևոր իրադարձությունները, որոնք ազդեցություն են թողել արվեստի վրա:
- **Հայ գրականություն** - Ուսումնասիրի և մեկնաբանի աշուղական երգերի գրական հիմքերը:

| |
|---|
| • **Մշակույթ** - Ուսումնասիրի հայ միջնադարյան արվեստի նմուշները:<br>• **Կինո** - Դիտի «Հայ ֆիլմ» կինոստուդիայի նկարահանած **«Նռան գույնը»** ֆիլմը և վերլուծի:<br>• **Կերպարվեստ** - Ուսումնասիրի հայ միջնադարյան կերպարվեստի նմուշները:<br>• **Օպերա** - Դիտի հատվածներ Ալ. Հարությունյանի «Սայաթ Նովա» օպերայից: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Մ 1, Մ 17, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:** |

| **Թեմա 3. XVII-XVIII դդ. եվրոպական արվեստը՝ բարոկկո (4 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակները**<br>• XVII-XVIII դդ. եվրոպական արվեստի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Ծանոթացում XVII-XVIII դդ. ստեղծագործած հայ տնիկոմպոզիտորներին և նրանց ստեղծագործություններին:<br>• XVII-XVIII դդ. ստեղծագործած հայ տնիկոմպոզիտորներին և նրանց ստեղծագործություններին նվիրված հետազոտական կամ նախագծային աշխատանքների ներկայացում:<br>• XVII-XVIII դդ. եվրոպական արվեստի արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ծանո՞թ ես բարոկկո ուղղությանը:<br>• Ունկնդրե՞լ ես այդ ուղղության որևէ ստեղծագործություն:<br>• Ի՞նչ է նշանակում «եվրոպական արվեստ»: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Ստեղծի** (մենակ կամ խմբով) եվրոպական հոգևոր երաժշտությանը նվիրված ուսումնասիրություն կամ հետազոտություն:<br>• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** տարբեր ազգերի և ոճերի երաժշտության միջոցով՝ համադրելով երաժշտական կերպարների յուրահատկությունները:<br>• **Ընկալի և մեկնաբանի** հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:<br>• **Հասկանա** պոլիֆոնիկ երաժշտության իմաստը, ցուցաբերի հուզական արձագանք, **վերլուծի** ստեղծագործության կառուցվածքը:<br>• **Վերլուծի** տարբեր ժամանակաշրջանների և ոճերի արվեստի գործերը և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը: | |

•**Հասկանա, ընկալի և գնահատի** անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ, **բացատրի** զարգացման միտումները:
•**Արժևորի** երաժշտության դերն ու նշանակությունն իր կյանքում:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| •XVII-XVIII դդ. Եվրոպական արվեստ և հանրահայտ ստեղծագործություններ: | •Ծանոթանալ XVII-XVIII դդ. եվրոպական արվեստին և հանրահայտ ստեղծագործություններին:<br>•Ունկնդրել, քննարկել, վերլուծել դրանք:<br>•Կատարել ուսումնասիրություններ տվյալ ժամանակաշրջանի երաժշտական ավանդույթների վերաբերյալ: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողներն ուսումնասիրում են երաժշտության բնագավառում հանրահայտ կոմպոզիտորների կյանքը, նրանց ստեղծագործական գործունեությունը, մարդկության պատմության շրջադարձային փուլերը, հայտնագործությունները, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները: Արժևորում են նրանց արվեստը: |

**Միջառարկայական կապեր**
•**Կերպարվեստ** -Ուսումնասիրի XVII-XVIII դդ.եվրոպական կերպարվեստի բարոկկո ոճի նկարիչների ստեղծագործությունները և համեմատի երաժտության հետ:
•**Գրականություն** -Ուսումնասիրի XVII-XVIII դդ.եվրոպական գրականությունը:
•**Համաշխարհային պատմություն** –Մեկնաբանի XVII-XVIII դդ.եվրոպական պատմության կարևոր իրադարձությունները,որոնք ազդեցություն են ունեցել արվեստի զարգացման վրա:
•**Թատրոն** -Ուսումնասիրի XVII-XVIII դդ.եվրոպական թատերական արվեստը:

**Մշակույթ** - Ուսումնասիրի XVII-XVIII դդ. բարոկկո ոճի եվրոպական ճարտարապետական հուշարձանները:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Մ 1, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:**

## Թեմա 4. Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչներ (4 ժամ)

| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
| --- | --- |
| • Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչների մասին պատկերացումների և գիտելիքների ընդլայնում<br>• Ծանոթացում նրանց կյանքի և ստեղծագործական գործունեությանը:<br>• Նրանց հայտնի ստեղծագործությունների ուսումնասիրում, ընկալում, վերլուծում, սեփական նախասիրությունների ներկայացում:<br>• Երաժշտության պատմության զարգացման առումով նրանց ստեղծագործական գործունեության դերի արժևորում: | Լսե՞լ ես Վիեննական դասական դպրոցի մասին:<br>Ի՞նչ կապ ունի Վիեննան երաժշտության հետ:<br>• Վիեննական դասական դպրոցի կոմպոզիտորներից որի՞ մասին ավելի շատ տեղեկություն ունես:<br>Ո՞ւմ ստեղծագործությունն ես ավելի շատ սիրում:<br>• Ներկաեղե՞լ ես երբևէ նրանց ստեղծագործությունների կատարմանը, եթե այո, ի՞նչ տպավորություն ես ստացել: |

**Վերջնարդյունքներ**

**Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** տարբեր ազգերի դասական երաժշտության միջոցով՝ մեկնաբանելով երաժշտական կերպարների յուրահատկությունները:

**Մեկնաբանի** հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, իր տպավորությունները և զգացողությունները ներկայացնի՝ օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:

- **Բնութագրի** ստեղծագործությունը, սեփական զգացողություններն արտահայտի ուսումնասիրությունների և հետազոտությունների միջոցով:
- **Վերլուծի** տարբեր ժամանակաշրջանների և ոճերի արվեստի գործերը և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը:
- **Հասկանա, ընկալի և գնահատի** անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ, **բացատրի** զարգացման միտումները:
- **Բացատրի**, թե ինչ դեր ունի երաժշտությունն իր կյանքում, և արժևորի սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը՝

որպես իր կյանքի անքակտելի մաս:
•**Արժևորի** բարձրորակ կենդանի կատարումները և հաճախակի այցելի համերգասրահներ և թատրոններ:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** |
|---|---|---|
| XVIII դ. և XIX դ. առաջին կեսի եվրոպական արվեստ: Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործական գործունեությունը: | •Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգների հատվածներ:<br>•Այցելել կոմպոզիտորների թանգարանները (առցանց):<br>•Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել սիմֆոնիկ ստեղծագործությունները:<br>•Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, ներկայացնել շնորհանդեսներ, նախագծեր: | Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, ուսումնասիրելով Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչների կյանքը և ստեղծագործական գործունեությունը, ծանոթանում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենցաղին, նրանց պատմություններին, համերգային շրջագայություններին, մարդկության պատմության շրջադարձային ժամանակահատվածներին, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերություններին, արժևորում են նրանց արվեստը և ավանդը երաժշտության պատմության զարգացման մեջ: |

**Միջառարկայական կապեր**

•**Կերպարվեստ**-Ուսումնասիրել XVIIIդ.և XIXդ.առաջին կեսի եվրոպական կերպարվեստի նմուշները և համեմատել երաժշտության հետ:
•**Համաշխարհային պատմություն** -Ուսումնասիրել XVIIIդ.և XIXդ.առաջին կեսին եվրոպական պատմական իրադարձությունները, որոնք ազդեցություն են ունեցել երաժշտության զարգացման վրա:
•**Թատրոն** -Ուսումնասիրել XVIIIդ.և XIXդ.առաջին կեսի եվրոպական թատերական արվեստը:
**Մշակույթ** -Ուսումնասիրել XVIII դ. և XIX դ. առաջին կեսի եվրոպական ճարտարապետությունը:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Մ 1, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:**

| **Թեմա 5. XIX դարի եվրոպական երաժշտության հիմնական ուղղությունները. ռոմանտիզմ (8 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակները**<br>• Ծանոթացնում XIX դարի եվրոպական երաժշտության հիմնական ուղղություններից մեկի՝ ռոմանտիզմի հետ<br>• Ռոմանտիզմի վառ ներկայացուցիչների կյանքի և ստեղծագործական գործունեության ուսումնասիրում:<br>• Նրանց կյանքի և հանրահայտ ստեղծագործությունների ներկայացում հետազոտական կամ նախագծային աշխատանքների միջոցով:<br>• Համաշխարհային երաժշտության պատմության զարգացման գործում նրանց ավանդի արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ծանո՞թ եք արվեստի հիմնական ուղղություններին:<br>• Ի՞նչ գիտեք ռոմանտիզմի մասին:<br>• Որևէ տեղեկություն ունե՞ք այս աշխարհահռչակ կոմպոզիտորների մասին:<br>• Ներկագտնվե՞լ եք նրանց ստեղծագործությունների համերգային կատարումներին: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Ստեղծի** (մենակ կամ խմբով) ռոմանտիզմի ժամանակաշրջանի եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:<br>• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում կիրառի գիտելիքներ և հմտություններ՝ օգտագործելով ինքնարտահայտման զանազան երաժշտական միջոցներ և տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները:<br>• **Նպաստի** խմբի ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների ընդհանուր արդյունքի ձեռքբերմանը: | |

| | | |
|---|---|---|
| •**Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով: **Յասկանա** երաժշտական տերմինաբանության իմաստը և գործնականում օգտագործի դրանք:<br>•**Ընկալի և վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, հիմնավորի դրանք, ցուցաբերի վերլուծելու, համադրելու և համեմատելու հմտություններ:<br>•**Ձևավորի** գեղագիտական և երաժշտական ճաշակ**, ընդլայնի** ազգային և եվրոպական մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի (համերգա-սրահներ,թատրոններ,թանգարաններ)միջոցով:<br>•**Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ: | | |
| **Թեմայի բովանդակությունը**<br>•XIX դարի եվրոպական երաժշտության հիմնական ուղղությունները՝ ռոմանտիզմ:<br>•Ռոմանտիզմի ուղղության հանրահայտ կոմպոզիտորները և նրանց ստեղծագործությունները: | **Առաջարկվող գործունեության ձևեր**<br>•Կատարել ուսումնասիրություններ,դիտել համերգների հատվածներ:<br>•Ունկնդրել, վերլուծել,մեկնաբանել սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները:<br>•Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ և այլն: | **Ընդհանրական գաղափարներ Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, ուսումնասիրելով ռոմանտիզմի ականավոր ներկայացուցիչների կյանքը և ստեղծագործությունը,ծանոթանում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենցաղին,նրանց պատմություններին, համերգային շրջագայություններին,մարդկության պատմության շրջադարձային փուլերին,ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերություններին,արժևորում են նրանց արվեստը և ավանդը |

| | | |
|---|---|---|
| | | երաժշտության զարգացման մեջ: |

**Միջառարկայական կապեր**

- **Գրականություն** -Ուսումնասիրի եվրոպացի ռոմանտիկ գրողների ստեղծագործությունները, որոնք հիմք են դարձել երաժշտական ստեղծագործությունների համար:
- **Կերպարվեստ** -Ուսումնասիրի եվրոպացի ռոմանտիկ ուղղության նկարիչների գործերը:
- **Մշակույթ** -Ուսումնասիրի եվրոպական ռոմանտիկ արվեստի տարբեր տեսակների նմուշները::

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Մ 1, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:**

<table>
<tr><th colspan="2">Թեմա 6.<br>XIX դարի եվրոպական և ռուսական օպերային արվեստ (8 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակներ<br>• Ծանոթացնում XIX դարի եվրոպական և ռուսական օպերային արվեստին:<br>• XIX դարի եվրոպացի և ռուս կոմպոզիտորների հանրահայտ տօպերաների ուսումնասիրություն:<br>• Դրանց մասին հետազոտությունների և նախագծերի ներկայացում:<br>• Այցելություն օպերային թատրոն և նշված օպերաների դիտում:<br>• Համաշխարհային օպերային արվեստի արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Սիրո՞ւմ եք օպերային արվեստը:<br>• Հաճախե՞լ եք օպերային թատրոն:<br>• Ունե՞ք նախընտրած օպերաներ:<br>• Ինչո՞ւ շատերը չեն սիրում օպերային արվեստը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ<br>• Ստեղծի (մենակ կամ խմբով) XIX դարի իր նախընտրած ժամանակաշրջանի եվրոպացի կամ ռուս կոմպոզիտորների օպերային արվեստին նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:<br>• Հաղորդակցվի և ինքնարտահայտվի համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական</td></tr>
</table>

գործունեության ընթացքում ցուցաբերի երաժշտական գիտելիքներ և հմտություններ:

- **Երգի** (մենակ կամ խմբով) օպերաների հատվածներ՝ արիաներ, խմբերգեր ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- **Իրականացնի** ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով: Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբի աշխատանքներին:
- **Ընկալի և բացատրի** ստեղծագործության գաղափարը, կառուցվածքը, ձևը՝ **դրսևորելով** ստեղծագործական և անկախմտածողություն:
- **Համեմատի և մեկնաբանի** հակադիր կամ նույնպիսի բնույթի երաժշտական կերպարները:
- **Ձևավորի** երաժշտական ճաշակը, **ընդլայնի** եվրոպական մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները, նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի (համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ) միջոցով:
- **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • XIX դարի եվրոպական և ռուսական օպերային արվեստ:<br>• Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի նշանավոր կոմպոզիտորներ՝ օպերաների հեղինակներ:<br>• Հանրահայտ օպերաների | • Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգների հատվածներ:<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել, կատարել օպերաների հատվածներ: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>Սովորողները, ուսումնասիրելով XIX դարի եվրոպական և ռուսական օպերային արվեստը, ծանոթանում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենցաղին, նրանց պատմություններին, մարդկության պատմության շրջադարձային փուլերին, ինչպես նաև անհատների և |

<table>
<tr><td>հատվածներ և օպերային ներկայացումներ:</td><td>•Կազմակերպել քննար-կումներ, բանավեճեր, շնորհանդեսներ:</td><td>քաղաքակրթության հարաբերու-թյուններին, արժևորում են հեղինակների արվեստը և ավան-դը օպերային երաժշտության զարգացման մեջ:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Գրականություն -Ուսումնասիրի այն գրական ստեղծագործությունները, որոնք դարձել են օպերային լիբրետտոներ:<br>• Կերպարվեստ -Ուսումնասիրի օպերային ներկայացումների բեմական ձևավորումները՝ դեկորները, հագուստները և դրանց համապատասխանությունը երաժշտությանը:<br>• Պատմություն -Ուսումնասիրի այն պատմական կարևոր իրադարձությունները, որոնք հիմք են դարձել պատմական օպերային լիբրետտոների համար:<br>• Թատրոն -Ուսումնասիրի և մեկնաբանի օպերային ներկայացումներում երգիչների դերասանական վարպետությունը, որը նպաստում է երաժշտական կերպարի ավելի խոր բացահայտմանը:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ<br>Մ 1, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:</td></tr>
</table>

**11-րդ դասարան**

**Առաջարկվում է (34 ժամ)**

| **Թեմա 1. Հայկական օպերայի ծնունդն ու զարգացումը: Հայ ժամանակակից օպերա (4 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակները**<br>• Ծանոթացում հայկական օպերայի պատմությանը:<br>• Հայկական օպերային արվեստի զարգացման փուլերի և այսօրվա դրության մասին գիտելիքների ընդլայնում:<br>• Հայկական օպերաների հատվածներ ունկնդրելու (դիտելու), բնութագրելու, վերլուծելու և կատարելու հմտությունների զարգացում:<br>• Տարբեր ժամանակաշրջանների հայ օպերային արվեստին նվիրված նախագծի կամ դպրոցական միջոցառման համար երաժշտական նյութի պատրաստում:<br>• Հայկական օպերային արվեստի արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Սիրու՞մ ես հայկական օպերան:<br>• Գիտե՞ս հայկական օպերայի հիմնադիրներին:<br>• Հայկական ո՞ր օպերան է քեզ հոգեհարազատ:<br>• Այցելե՞լ ես Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Ստեղծի** (մենակ կամ խմբով) իր նախընտրած ժամանակաշրջանի հայ օպերային արվեստին նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:<br>• **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ազգային օպերային արվեստի նմուշներով:<br>• **Երգի** (մենակ կամ խմբով) օպերաների հատվածներ՝ արիաներ, խմբերգեր, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:<br>• **Իրականացնի** ստեղծագործական գաղափարներ անհատապես կամ խմբով: Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին:<br>• **Բացատրի** ստեղծագործության գաղափարը, կառուցվածքը, ձևը՝ դրսևորելով ստեղծագործական և ինքնուրույն մտածողություն:<br>• **Ձևավորի** և զարգացնի երաժշտական ճաշակ, **ընդլայնի** ազգային մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի (համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ) միջոցով:<br>• **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ: | |

- **Արժևորի** հայ ազգային օպերային արվեստը, դառնանրակրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Հայկական օպերային արվեստ:<br>• Հայկական օպերաների հատվածներ և օպերային ներկայացումներ: | • Կատարել ուսումնասիրություններ, հետազոտություններ, դիտել համերգների հատվածներ:<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել և կատարել օպերաների հատվածներ:<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ, զեկուցումներ:<br>• Այցելել օպերային թատրոն: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Ուսումնասիրելով հայ օպերային արվեստը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչ է իր համար ազգային օպերային երաժշտությունը, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային օպերային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայ գրականություն** - Ուսումնասիրի այն գրական ստեղծագործությունները, որոնք դարձել են օպերային լիբրետտոներ:

| |
|---|
| • **Կերպարվեստ** -Ուսումնասիրի օպերային ներկայացումների բեմական ձևավորումները՝ դեկորները, հագուստները և դրանց համապատասխանությունը երաժշտությանը:<br>• **Պատմություն** -Ուսումնասիրի այն պատմական կարևոր իրադարձությունները, որոնք հիմք են դարձել պատմական օպերային լիբրետտոների համար:<br>• **Թատրոն** -Ուսումնասիրի և մեկնաբանի օպերային ներկայացումներում երգիչների դերասանական վարպետությունը, որը նպաստում է երաժշտական կերպարի ավելի խոր բացահայտմանը: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Մ 1, Մ 17, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:** |

| **Թեմա 2.Իմպրեսիոնիզմը եվրոպական երաժշտության մեջ և նրա ազդեցությունը հայ կոմպոզիտորների ստեղծագործության վրա (4 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Արվեստի հիմնական ուղղություններից մեկի՝ իմպրեսիոնիզմի մասին պատկերացումների և գիտելիքների ձևավորում:<br>• Ծանոթացում երաժշտության մեջ իմպրեսիոնիզմի հիմնադիրներին և նրանց ստեղծագործական գործունեությանը:<br>• Նրանց ստեղծագործական գործունեության մասին զեկուցումների, շնորհանդեսների ներկայացում:<br>• Իմպրեսիոնիստ նկարիչների և կոմպոզիտորների ստեղծագործությունների ընկալում և համեմատում:<br>• Իմպրեսիոնիզմի և նրա հայտնի հետևորդների արվեստի արժևորում: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ է իմպրեսիոնիզմը:<br>• Ե՞րբ է առաջացել արվեստի այդ ուղղությունը:<br>• Լսե՞լ եք իմպրեսիոնիստ կոմպոզիտորների մասին, իսկ իմպրեսիոնիստ նկարիչների՞: |
| **Վերջնարդյունքներ** | |

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) իր նախընտրած ժամանակաշրջանի հայ կամ արտասահմանցի կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:
- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** համաշխարհային երաժշտական արվեստի նմուշներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում դրսևորի երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ օգտագործելով ինքնարտահայտման զանազան երաժշտական միջոցներ, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաները և ռեսուրսները:
- **Նպաստի** խմբի ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների ընդհանուր արդյունքի ձեռքբերմանը:
- **Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, զեկույցներով, հետազոտություններով, շնորհանդեսով:
- **Հասկանա** երաժշտական եզրույթների իմաստը և գործնականում օգտագործի դրանք:
- **Վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, հիմնավորի դրանք, ցուցաբերի վերլուծելու, համադրելու և համեմատելու հմտություններ:
- **Արժևորի** իմպրեսիոնիստների արվեստը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Արվեստի հիմնական ուղղությունները. իմպրեսիոնիզմ:<br>• Իմպրեսիոնիստ կոմպոզիտորներ:<br>• Նրանց ստեղծագործությունները: | • Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգներից հատվածներ:<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել բալետների հատվածներ:<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ:<br>• Այցելել Ա. Սպենդիարյանի անվան | **Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողը, ուսումնասիրելով XX-XXI դարերի երաժշտական ուղղությունները, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների, երաժշտական ճաշակի մասին, անում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում |

| | | |
|---|---|---|
| | օպերայի և բալետի թատրոն և պատկերասրահ: | է քննարկումներ, բանավեճեր, ստեղծում է պաստառներ, շնորհանդեսներ և այլն: Այս թեմայի ուսումնասիրության ընթացքում սովորողը փորձում է պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը կամ նպատակը և ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքում:<br>Սովորողը արժևորում է բոլոր ժանրերի բարձրակարգ ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը: |
| **Միջառարկայական կապեր**<br>• **Կերպարվեստ** - Ուսումնասիրի իմպրեսիոնիստ նկարիչների ստեղծագործությունները և համեմատի երաժշտության հետ:<br>• **Գրականություն** - Ուսումնասիրի իմպրեսիոնիստ գրողների ստեղծագործությունները: | | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Մ 1, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:** | | |

| |
|---|
| **Թեմա 3. XIX դարավերջի և XX դարասկզբի հայկական երաժշտական արվեստը (2 ժամ)**<br>**Հայ կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը. Կոմիտաս (6 ժամ)** |

| **Նպատակներ** | **Ուղղորդող հարցեր** |
|---|---|
| • XIX դարավերջի և XX դարասկզբի հայկական խմբերգային արվեստի ուսումնասիրում:<br>• Հայ կոմպոզիտորական դպրոցի ձևավորման հիմքերի ուսումնասիրում:<br>• Տվյալ ժամանակահատվածում ստեղծագործած կոմպոզիտորների ստեղծագործության ուսումնասիրում:<br>• Նրանց ստեղծագործությունների ունկնդրում, քննարկում, կատարում:<br>• Տվյալ ժամանակաշրջանի պատմական անցքերի և հայ երաժշտարվեստի զարգացման պատճառահետևանքային կապերի բացահայտում և ընկալում:<br>• Տվյալ ժամանակաշրջանի կոմպոզիտորների ստեղծագործական գործունեության մասին նախագծի կամ դպրոցական միջոցառման համար երաժշտական նյութի պատրաստում:<br>• Այցելություն Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, համագործակցում և ակտիվ մասնակցություն թանգարանի կրթական ծրագրերին: | • Ինչպե՞ս էին ազդում պատմական անցքերը հայ երաժշտարվեստի զարգացման վրա:<br>• Ո՞վ ձևավորեց հայ կոմպոզիտորական դպրոցը:<br>• Այդ ժամանակահատվածում ստեղծագործած ո՞ր կոմպոզիտորի գործերն ես ավելի շատ սիրում: |

**Վերջնարդյունքներ**

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) տվյալ ժամանակաշրջանի հայ կոմպոզիտորների ստեղծագործական ընտրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:
- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** հայ երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում ցուցաբերի երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ կիրառելով ինքնարտահայտման զանազան երաժշտական միջոցներ, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաները և ռեսուրսները:
- **Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական կամ դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր՝ արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Իրականացնի ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով: Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին:

<table>
<tr><td colspan="3">

• **Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով և հիմնավորի, կատարի հետազոտություններ, նախագծային աշխատանքներ:<br>
• **Հասկանա** երաժշտական եզրույթների իմաստը և գործնականում օգտագործի դրանք:<br>
• **Բացատրի** ստեղծագործության գաղափարը, կառուցվածքը, **ձևը՝** դրսևորելով ստեղծագործական և ինքնուրույն մտածողություն: **Համեմատի և բացատրի** հակադիր կամ նույն բնույթի ստեղծագործությունները:<br>
• **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային կյանքում և պատմական համատեքստում:<br>
• **Ընկալի և** հասկանա նրա՝ որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի դերը:<br>
• **Արժևորի** հայ ազգային երաժշտությունը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:
</td></tr>
<tr>
<td>Թեմայի բովանդակու-թյունը<br>• XIX դարավերջի և XX դարասկզբի հայկական երաժշտական արվեստը և նրա հայտնի ներկայացու-ցիչները:<br>• Խմբերգային արվեստ:<br>• Հայ կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը:</td>
<td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսումնասիրել, քննարկել, վեր-լուծել տվյալ ժամանակաշրջանի հայ երաժշ-տարվեստը, հայ կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը:<br>• Ունկնդրել, կատարել, մեկնաբա-նել, եզրահան-գումներ անել:<br>• Հետազոտել, ներկայացնել, սեփա-կան կարծիք հայտնել և հիմնավորել:</td>
<td>Ընդհանրական գաղափարներ<br><br>Անհատներ և հարաբերու-թյուններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Ուսումնասիրելով XIX դարավերջի և XX դարասկզբի հայկական երաժշտական ար-վեստը և հայ կոմպոզիտորա-կան դպրոցի ձևավորումը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | **բացատրի,** որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:<br><br>**Պատճառահետևանք**<br>Բնության մեջ, մարդկանց, ազգերի հարաբերություններում, գեղարվեստական երկերում, երաժշտական ստեղծագործություններում մշտապես կարելի է հանդիպել պատճառահետևանքային կապերի. օրինակ՝ մարդկության պատմության ողբերգական իրադարձությունը՝ Հայոց ցեղասպանությունը, ազդեցություն թողեց նաև հայ արվեստի վրա, այդ ընթացքում և դրանից հետո ստեղծված երաժշտական ստեղծագործությունները կրում էին դրա ազդեցությունը: |

Միջառարկայական կապեր

- **Կերպարվեստ**-Ուսումնասիրի XIX դարավերջի և XX դարասկզբի հայ կերպարվեստի ստեղծագործությունները և համեմատի երաժշտության հետ:
- **Հայ լեզու և գրականություն** -Հայ երենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք և ուսումնասիրի XIX դարավերջի և XX դարասկզբի հայ գրականությունը և հայ տնի գրողների ստեղծագործությունները:
- **Հայոց պատմություն** -Ուսումնասիրի XIX դարավերջի և XX դարասկզբի պատմական անցքերի ազդեցությունը հայ մշակույթի տարբեր տեսակների զարգացման վրա:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Մ 1, Մ 17, Մ 24, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:**

## Թեմա 4.
## Հայ երաժշտարվեստի զարգացումը XX դարավերջին և XXI դարասկզբին (10 ժամ)

**Նպատակներ**

- Հայ երաժշտարվեստի զարգացումը XX-XXI դարերում. Ուսումնասիրում:
- Տվյալ ժամանակաշրջանի կոմպոզիտորների ստեղծագործական գործունեության ուսումնասիրում:
- Ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագծի կամ դպրոցական միջոցառման համար երաժշտական նյութի պատրաստում:
- Նրանց ստեղծագործությունների ունկնդրում, բնութագրում, վերլուծում, մեկնաբանում համաշխարհային երաժշտության արվեստի համատեքստում:
- Հայ ժամանակակից երաժշտարվեստի արժևորում:

**Ուղղորդող հարցեր**

- Ի՞նչ գիտես հայ ժամանակակից երաժշտարվեստի մասին:
- Ունե՞ս նախընտրած կոմպոզիտոր կամ ստեղծագործություն:
- Այցելու՞մ ես համերգասրահներ՝ ունկնդրելու հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

**Վերջնարդյունքներ**

- **Ստեղծի** (մենակ կամ խմբով) ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական միջոցառման համար:
- **Իրականացնի** ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով, **նպաստի** խմբի ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների ընդհանուր արդյունքի ձեռքբերմանը:
- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** հայ ժամանակակից երաժշտական արվեստով:
- **Երգի** (մենակ կամ խմբով) հայ ժողովրդական կամ դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր՝ արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին

| | | |
|---|---|---|
| • **Վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, հիմնավորի դրանք, ցուցաբերի վերլուծելու, համադրելու և համեմատելու հմտություններ:<br>• **Ձևավորի** երաժշտական ճաշակը, **ընդլայնի** ազգային մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ ուսումնական այցերի (նաև առցանց) միջոցով:<br>• **Դրսևորի** հետաքրքրություն ժամանակակից երաժշտության, կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:<br>• **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային կյանքում և պատմական համատեքստում: Հասկանա նրա՝ որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի դերը:<br>• **Արժևորի** հայ ազգային երաժշտությունը, դառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: | | |
| **Թեմայի բովանդակությունը**<br>• Հայ երաժշտարվեստի զարգացումները XX-XXI դարերում:<br>• Հայ սիմֆոնիկ երաժշտության ձևավորումը և զարգացումը:<br>• Հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: | **Առաջարկվող գործունեության ձևեր**<br>• Ուսումնասիրել, կատարել հետազոտություններ և նախագծային աշխատանքներ:<br>• Ունկնդրել, վերլուծել, կատարել, մեկնաբանել:<br>• Մասնակցել քննարկումներին, բանավեճերին: | **Ընդհանրական գաղափարներ**<br><br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով XX դարի կեսերից մինչև XXI դարասկիզբի հայկական երաժշտական արվեստը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

<table>
<tr><td>

**Միջառարկայական կապեր**

- **Կերպարվեստ** – Ուսումնասիրի հայ կերպարվեստի զարգացումը XX-XXI դարերում:
- **Հայ գրականություն** – Ուսումնասիրի հայ գրականության զարգացումը XX-XXI դարերում:
- **Հայոց պատմություն** - Ուսումնասիրի XX-XXI դարերի հայ պատմական իրադարձությունների ազդեցությունը հայ արվեստի զարգացման վրա:
- **Մշակույթ** - Ուսումնասիրի հայ արվեստի տարբեր տեսակների զարգացումը XX-XXI դարերում:

</td></tr>
<tr><td>

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**Մ 1, Մ 17, Մ 18, Մ 24, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42:**

</td></tr>
</table>

<table>
<tr><th colspan="2">Թեմա 5.<br>Սփյուռքահայ երաժշտական արվեստ (8 ժամ)</th></tr>
<tr><td>

**Նպատակներ**

- Սփյուռքահայ երաժշտական արվեստի վերաբերյալ պատկերացումների և գիտելիքների ընդլայնում:
- Սփյուռքահայ կոմպոզիտորների և երաժիշտ կատարողների արվեստի մասին հետազոտությունների և նախագծերի պատրաստում:
- Նրանց ստեղծագործությունների կատարում, բնութագրում, վերլուծում, մեկնաբանում:
- «Սփյուռքահայ արվեստը, որպես պատմական իրադարձությունների արդյունք» թեմայով քննարկման կամ բանավեճի կազմակերպում:
- Սփյուռքահայ երաժշտարվեստի՝ որպես հայ ազգային արվեստի անքակտելի մասի արժևորում:

</td><td>

**Ուղղորդող հարցեր**

- Ճանաչո՞ւմ եք սփյուռքահայ կոմպոզիտորներին և երաժիշտ կատարողներին:
- Սիրո՞ւմ եք նրանց արվեստը:
- Ո՞ւմ եք նախընտրում և ինչո՞ւ:

</td></tr>
<tr><td colspan="2">

**Վերջնարդյունքներ**

**Ստեղծի** (մենակ կամ խմբով) իր նախընտրած ժամանակաշրջանի սփյուռքահայ կոմպոզիտորների կամ կատարողների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագիծ կամ երաժշտական նյութդպրոցական միջոցառման համար:

- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** սփյուռքահայ կոմպոզիտորների երաժշտական արվեստով:

</td></tr>
</table>

- **Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական կամ դասական տարբերոճի երգեր, խմբերգեր՝ արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- **Իրականացնի** ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով: Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին:
- **Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով: **Հասկանա և ընկալի** երաժշտական եզրույթների իմաստը և գործնականում օգտագործի դրանք:
- **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային կյանքում և պատմական համատեքստում: Հասկանա նրա՝ որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի դերը:
- **Արժևորի** հայ ազգային երաժշտությունը, դառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| •Սփյուռքահայ երաժշտական արվեստը XX-XXI դարերում:<br>•Սփյուռքահայ հայտնի կոմպոզիտորներ և կատարողներ: | •Ուսումնասիրել, կատարել հետազոտություններ, նախագծային աշխատանքներ:<br>•Ունկնդրել, վերլուծել, կատարել, մեկնաբանել:<br>•Մասնակցել քննարկումներին, բանավեճերին: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով սփյուռքահայ երաժշտական արվեստը՝ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչպես է առաջացել սփյուռքահայ մշակույթը, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **բացատրի,** որ ուսումնասիրելով հայ |

| | | |
|---|---|---|
| | | ազգային երաժշտու-թյունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փո-խանցողը:<br><br>**Պատճառ և հետևանք**<br>Բնության մեջ, մարդկանց, ազգերի հարա-բերություններում, գեղարվեստական երկե-րում, երաժշտական ստեղ-ծագործություններում մշտապես կարելի է հանդիպել պատճառա-հետևանքային կարպերի. օրինակ՝ մարդկության պատմության ողբերգական իրադարձության՝ Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացավ և հետագայում զարգացավ հայկական սփյուռքը՝ իր կենցաղով ու արվեստով: |
| **Միջառարկայական կապեր**<br>• Կերպարվեստ-Ուսումնասիրի սփյուռքահայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործությունները:<br>• Հայ գրականություն -Ուսումնասիրի սփյուռքահայ գրողների, գրականագետների ստեղծագործությունները:<br>• Մշակույթ -Ուսումնասիրի սփյուռքահայ արվեստը և արվեստագետների՝ դերասանների, ռեժիսորների աշխատանքները: | | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Մ 1, Մ 17,Մ 24, Մ 25, Մ 26, Մ 27, Մ 40, Մ 41, Մ 42:** | | |

## 12-րդ դասարան

## Առաջարկվում է (34 ժամ)

<table>
<tr><th colspan="2">Թեմա 1. Անցողիկը և հավերժականը երաժշտության մեջ (6 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակներ<br>• Անցողիկ և հավերժական թեմաները (գեղեցիկի, սիրո, ողբերգականի, կոմիկականի, ներդաշնակության, ուրախության և այլն) և երաժշտության մեջ դրանց առկայության մասին պատկերացումների և գիտելիքների ընդլայնում:<br>• Երաժշտական ստեղծագործության մեջ այդ թեմաները զգալու, գիտակցելու, վերլուծելու և ներկայացնելու հմտությունների զարգացում:<br>• Տվյալ թեմաներով քննարկումների, բանավեճերի կազմակերպում և ակտիվ մասնակցություն, սեփական կարծիք հայտնելու, մեկնաբանելու, հիմնավորելու հմտությունների զարգացում:<br>• Մյուսների հակադիր կարծիքի քննարկում, հանդուրժողականության և հարգանքի դրսևորում:<br>• Նշված թեմաներով նախագծային կամ հետազոտական աշխատանքների ներկայացում արվեստի մյուս տեսակների ներգրավմամբ:<br>• Մարդու հոգեկան աշխարհի վրա արվեստի ազդեցության արժևորում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ է նշանակում անցողիկ և հավերժական:<br>• Ի՞նչ կապ ունեն դրանք երաժշտության հետ:<br>• Քեզ ծանո՞թ է որևէ ստեղծագործություն, որ հիմքում ունի այս թեմաները:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ<br>• Ստեղծի (մենակ կամ խմբով) «Անցողիկ և հավերժական թեմաները կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ» հետազոտական կամ նախագծային աշխատանքներ կամ դպրոցական միջոցառման համար երաժշտական սցենար՝ կապելով արվեստի այլ ճյուղերի հետ:<br>• Հաղորդակցվի և ինքնարտահայտվի հայ և համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով:<br>• Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան գրական և կերպարվեստի ձևավորումներ՝ կիրառելով նոր տեխնոլոգիաները:</td></tr>
</table>

| |
|---|
| • **Երգի** (մենակ կամ խմբով) ժողովրդական կամ դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին:<br>• Անհատապես և խմբով առաջարկի և **իրականացնի** ստեղծագործական գաղափարներ:<br>• **Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված բանավոր կամ գրավոր խոսքով:<br>• **Դրսևորի** տրամաբանական և ստեղծագործական մտածողություն և կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին:<br>• **Հասկանա և ընկալի** երաժշտական եզրույթների իմաստը և գործնականում օգտագործի դրանք էսսեներում և բանավոր ելույթներում:<br>• **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային կյանքում և պատմական համատեքստում: Հասկանա և ընկալի նրա՝ որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի դերը, ճանաչի մշակութային բազմազանությունը:<br>• **Արժևորի** հավերժական թեմաների առկայությունն արվեստի մեջ և դրանց ազդեցությունը մարդու հոգեկան աշխարհի վրա: |

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Անցողիկ և հավերժական թեմաների առկայությունը երաժշտության մեջ:<br>• Երաժշտության տրամադրության և կերպարների փոփոխականությունը երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների տարբեր մասերում:<br>• Անցողիկը և մնայունը արվեստում: | • Ուսումնասիրել, կատարել հետազոտություններ, նախագծային աշխատանքներ:<br>• Ունկնդրել, վերլուծել, կատարել, մեկնաբանել, համեմատել:<br>• Մասնակցել քննարկումներին, բանավեճերին: | **Անհատական և մշակութային ինքնարտահայտում**<br>Որո՞նք են ստեղծարարության բնույթը և պատակը: Սովորողը, ուսումնասիրելով «Հավերժական թեմաները երաժշտության մեջ» նյութը, ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ, հանդես է գալիս բանավոր զեկուցմով, որով նկարագրում է իր տպավորությունները, |

| | | |
|---|---|---|
| | | զգացողությունները, մտո-րումները երաժշտության մեջ հավերժականի և անցողիկի մասին,կատարում է ինքնուրույն եզրահան-գումներ: Կազմակերպում է քննարկումներ,բանավեճեր, ստեղծում է պաստառներ, շնորհանդեսներ և այլն: Այս թեմայի ուսումնասիրության ըն-թացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին, թե ի´նչ է ստեղծարարությունը,որն է դրա դերը կամ նպատակը և ինչ հիմնախնդիրների լու-ծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքում: Սովորողն արժևորում է բոլոր թեմաներով ստեղծ-ված բարձրարժեք ստեղծա-գործությունները, հասկա-նում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը: |

**Միջառարկայական կապեր**

- **Հասարակագիտություն** -Ուսումնասիրի հավերժական թեմաները,դրանց գաղափարը,իմաստը,մարդկության զարգացման տարբեր փուլերում:
- **Հայոց լեզու և գրականություն** -Հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ, ուսումնասիրի հավերժական թեմաները գրականության մեջ և կազմակերպի քննարկումներ:

| |
|---|
| • **Մշակույթ** - Ուսումնասիրի հավերժական թեմաները տարբեր դարաշրջանների մշակութային արժեքների մեջ: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**<br>**Մ 1, Մ 24, Մ 26, Մ 40, Մ 41, Մ 42** |

| **Թեմա 2.<br>Ես և երաժշտությունը (10 ժամ)** | |
|---|---|
| **Նպատակները** | **Ուղղորդող հարցեր** |
| • «Երաժշտական կրթության և դաստիարակության ազդեցությունը սովորողի՝ որպես մարդ-անհատի հոգեկան աշխարհի վրա» թեմայով հետազոտություն-ների, նախագծերի, քննարկումների, բանավեճերի կազմակերպում:<br>• Նրա ներաշխարհի, գեղագիտական ճաշակի, նախասիրությունների, մտածողության ձևերի, արվեստի նկատմամբ վերաբերմունքի բացահայտում:<br>• Սովորողի ազատ և անկաշկանդ արտահայտվելու, իր վերաբերմունքը երաժշտության տարբեր ուղղություններին արտահայտելու, իր մտքերը և կարծիքը պարզ և մատչելի ներկայացնելու և հիմնավորելու համար բարենպաստ միջավայրի ստեղծում:<br>• Բարձր արվեստին հաղորդակցվելու պահանջմունքի արժևորում, համապատասխան վարքագծի և ակտիվ ունկնդրի որակների դրսևորում:<br>• Իր կյանքում երաժշտական արվեստի դերի ու նշանակության արժևորում: | • Ինչպե՞ս է ազդել երաժշտություն առարկայի դասավանդումը քո գեղագիտական ճաշակի ձևավորման վրա:<br>• Համընկնո՞ւմ է քո երաժշտական ճաշակը քո ընտանիքի ճաշակի հետ:<br>• Ի՞նչ միջոցներով ես դիմակայում այսօրվա համատարած երաժշտական ագրեսիային:<br>• Քննադատաբա՞ր ես արձագանքում, պայքարո՞ւմ ես դրա դեմ, թե՞ հարմարվում ես և քեզ դուր է գալիս այն: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Ստեղծի** (մենակ կամ խմբով) իր նախընտրած ժամանակաշրջանի հայ կամ արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությանը նվիրված հետազոտություն, նախագիծ կամ երաժշտական նյութ դպրոցական | |

միջոցառման համար՝ օգտագործելով արվեստի այլ ճյուղերի հնարավորությունները:

- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** հայ և համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում ցուցաբերի երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ կիրառելով ինքնարտահայտման զանազան երաժշտական միջոցներ,ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաները և ռեսուրսները:
- **Երգի** (մենակ կամ խմբով)ժողովրդական կամ դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր արտահայտիչ,անսամբլային զգացողությամբ,հետևելով խմբավարի շարժումներին:Իրականացնի ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով:Մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ գեղարվեստական խմբի աշխատանքներին:
- **Նկարագրի** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով,էսսներով,բանավոր ելույթով,**հասկանա** երաժշտական եզրույթների իմաստը և գործնականում օգտագործի դրանք:
- **Վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերն ու ապրումները, հիմնավորի դրանք, իր ստեղծագործական մտահղացումը իրականացնելիս օգտագործի համացանցի բազմաթիվ հնարավորությունները, ելույթները ուղեկցի տեսաձայնային միջոցներով:Ցուցաբերի վերլուծելու,համադրելու և համեմատելու հմտություններ:
- **Արժևորի** երաժշտության դերն ու նշանակությունն իր կյանքում,կազմակերպի և ակտիվ մասնակցի ընտանեկան,համայնքային և դպրոցական համերգներին,ձեռք բերի ունկնդրելու փորձ,համերգներ հաճախելու մշակույթ:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Իմ երաժշտական ճաշակն ու նախասիրությունները:<br>• Իմ առօրյան,հանգիստը,ժամանցը և երաժշտությունը:<br>• Իմ ընտանիքի երաժշտությունը:<br>• Իմ սիրած համերգասրահները և թանգարանները: | • Հետազոտություններ ,նախագծեր,բանավեճեր, քննարկումներ,շնորհանդեսներ,բանավոր ելույթներ:<br>• Նախընտելի երաժշտական ստեղծագործությունների | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես:Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով XX դարի կեսերից մինչև XXI դարասկիզբի հայկական երաժշտական արվեստը՝ սովորողը հասկանում է,թե ո՛վ է ինքը,ինչ արմատներ ունի, ինչ է իր համար |

| | | |
|---|---|---|
| • Ինչպես եմ դիմակայում այսօրվա երաժշտական ագրեսիային: | կատարումներու մեկնաբանություններ: | ազգային երաժշտությունը, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերն արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևորը՝ **ընկալի և բացատրի**, որ ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը՝ դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

- **Հայոց լեզու և գրականություն** -Հայերենով գրավոր և բանավոր խոսքով ներկայացնի իր ճաշակն ու նախասիրությունները նաև գրականության ասպարեզում:
- **Կերպարվեստ** -Ներկայացման ընթացքում ցուցադրի իր ճաշակին ու նախասիրություններին համապատասխան կերպարվեստի գործեր:
- **Մշակույթ** -Ներկայացնի իր գեղագիտական ճաշակն ու նախասիրությունները մշակույթում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- **Մ 1, Մ 24, Մ 25, Մ 26, Մ 27, Մ 39, Մ 40, Մ 41, Մ 42:**

## Օգտագործված գրականության ցանկ


1. «Կրթության մասին» ՀՀ օրենք:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N439-Ն որոշում:
4. «Հանրակրթության պետական չափորոշիչ», 2010թ և 2021թ
5. ՀՀ կառավարության 2021թվականի փետրվարի 4-ի N136-Ն որոշում:
6. Հանրակրթության պետական կրթակարգ, ՀՀ կառավարության նիստի հ.33 արձանագրային որոշում, 26.08.2004թ.:
7. Կոմիտաս. Հոդվածներ և ուսումնասիրություններ: Եր., 1941:
8. Կոմիտաս. Երկերի ժողովածու, բոլոր հատորները: Եր., «Հայաստան», 1969:
9. Կոմիտաս Վարդապետ. Ուսումնասիրութիւններ և յօդուածներ: Գիրք Ա: Եր., 2005:
10. Տիգրանյան Գ. Հայ երաժշտական թատրոնի 100 տարին: Եր., «Հայաստան», 1968:
11. Բրուտյան Ց. Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու (Արվեստագիտություն): Եր., 1974:
12. Երկանյան Վ., Հայկական մշակույթ: Եր., 1982:
13. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. Հայ արվեստի պատմություն: Եր., «Զանգակ-97», 2009, 576 էջ:
14. Ակնարկ Հայ երաժշտության պատմության / ՀՍՍՀ ԳԱ: Եր., 1963:
15. Բորև Յու., Գեղագիտություն: Եր., «Հայաստան», 1982:
16. Գեղագիտական դաստիարակություն: Եր., «Լույս», 1975:
17. «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր: Հաստատված է 2012թ.:
18. Յուզբաշյան Յու. Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ: Եր., «Զանգակ-97», 2008:
19. Յուզբաշյան Յու., Փահլևանյան Ա., Ավետիսյան Վ. Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: Եր., «Զանգակ-97», 2011:
20. Ղազարյան Կ., Թադևոսյան Գ., Երաժշտություն-2-7-րդ դդ.. Ուսուցչի ձեռնարկ: Եր., «Զանգակ», 2014:

21. Յուզբաշյան Յու., Ղազարյան Կ., Թադևոսյան Գ. Երաժշտություն-1. Ուսուցչի ձեռնարկ: Եր., «Զանգակ», 2016:
22. Լուկին Յու. Էսթետիկայի հիմունքներ, Եր., «Լույս», 1984:
23. Բրուտյան Մ. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն: Եր., ‘Լույս’, 1983:
24. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Եր., 2005:
25. Հարոյան Ռ., Զատիկ, Եր., ‘Շաղիկ’, 1996:
26. Նավոյան Մ.-Դրվագներ Հայ երաժշտության պատմության, «Զանգակ-97» հրատ. Երևան, 2009թ.:
27. Кабалевский Д. Воспитание ума и сердца: Кн. Для учителя.- М.: Просвещение, 1980.
28. Кабалевский Д. Основные принципы и методы программы по музыке для общеобразовательной школы. Москва, “Просвещение”, 2002.
29. “Искусство в школе”. Общественно-педагогический и научно-методический журнал, Москва, 2010 г.
30. З. Н. Н. Рябенко “Уроки музыки в 1-7 классах”, “Айрис пресс”, Москва, 2006.
31. Радинова О. Музыкальные шедевры. М., издательство ГНОМ и Д Москва, 2006.
32. Вёльфлин Г. Основные понятия истории искусств. Изд. В. Шевчук, 2013. 330 с.
33. COMPETENCES FOR DEMOCRATIC CULTURE (CDC), ձեռնարկ, ԵԽ, 2018:
34. ՅՈՒՆԵՍԿՕ, Կրթություն հանուն կայուն զարգացման ծրագիր:

***Էլեկտրոնային հասցեներ***

35. https://www.nationalartsstandards.org/,
36. https://www.incredibleart.org/,
37. https://www.australiancurriculum.edu.au/,
38. https://www.wabisabilearning.com/case-study,
39. https://www.thelearningweb.net/music-learning.htm,
40. https://www.slideshare.net/mrsnazlan/a-curriculum-framework-for-art-education,
41. http://www.koolibri.ee/download/?action=binary&id=3414
42. https://jfks.de/high-school/academics/departments/music/
43. http://oppekava.innove.ee/wp-content/uploads/sites/6/2016/09/Kunstiained.pdf